

491.99-8

Հ-39

ՀԱՐՎԱԾԱՅԻՆ ՊՈԼԻՏԵԽՆԻԿ

ԼԵԶՎԻ ԴԱՍԱԳԻՐԲ
ՈՒՍՍԱՆ III ՏԱՐԻ



ՈՒՍՍԱՆԿԶՐԱՏԲԱԺԻՆ

ՊԵՏՐՈՍ ԶԵՐԵՎԱՆ 1932

CA 589

491.99-8

2-39

ՀԱՐՎԱԾԱՅԻՆ ՊՈԼԻՏԵԽՆԻԿ

ԼԵԶՎԻ ԴԱՍԱԳԻՐՔ

ՅԵՐՐՈՐԴ ՏԱՐԻ

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ВОСТОЧНОЙ АЗИАТИКИ
и Африки
СССР

Կ Ա Ջ Մ Ե Ց Ի Ն՝

ԹԱՄԱՋՅԱՆ ԱՐՄ., ՂԱԶԱՐՅԱՆ Գ. ՄԽԻԹԱՐՅԱՆ Մ.



56676-66

1. ՀԱՐՎԱԾԱՅԻՆՆԵՐ

Մենք պիտոնե՛ր ենք—հարվածային բրիգադիր,
 Լենինի մեծ պատգամներին ուշադիր.
 Ով մեր թաղում անուսում ե, անգրագետ,
 Ամբողջ ձմեռ պարապում ենք նրա հետ:

Մենք պիտոնե՛ր ենք—հարվածային բրիգադիր,
 Աշխատում ենք, վորպես փոքրիկ վորմնադիր,
 Ամբողջ ձմեռն ուսանում ենք, ուսուցում,
 Աշխատանքում չունենք վո՛չ մի թերացում

Մենք պիտոնե՛ր ենք—հարվածային բրիգադիր,
 Մենք գալիս ենք, վորպես նորի հիմնադիր.
 Հենց այս ձմեռ դարձել ենք սոցմրցակից,
 Սոցիալիզմի սիրուն շենքին մասնակից:

Հ Ա Ր Ց Ե Ր

1. Ի՞նչ նշանակություն ունի հարվածախուժյունը դարձ-
 ցում՝ աշակերտի համար:
2. Բացի դպրոցից ել վո՞րտեղ և դորձադրվում հարվածա-
 խուժյունը:

2. ՖԻԶԿՈՒԼՏՈՒՐԱ

Սաֆարն առավոտները շուտ եր վեր կենում: Ըն-
 կերները նկատել եյին այդ:


— Սաֆա՛ր, այդքան շուտ, առավոտներն ո՞ւր ես
 գնում,—հարցրին մի որ նրանք Սաֆարին:

— Ֆիզկուլտ իմ բակի անդամ եմ,—պատասխանեց

նա, — գնում եմ ակումբ: Այնտեղ մի ժամ պարապում ենք ֆիզկուլտուրայով:

— Ինչպիսի՞ վարժություններ եք անում, — հարցրեց նրան Ֆրիդոնը:

— Կես ժամ ֆիզիկական վարժություններ, կես



ժամ խաղեր — ֆուտբոլ, թուիչքներ, կես ժամ ել ուղ-
մական պարապմունք:

— Մեզ ել չե՞ն ընդունի խմբակում:

— Ինչո՞ւ չե. բայց ավելի լավ կլինի՝ մեր կոլեկ-
տիվին կից կադմենք մի խմբակ:

Վորոչեցին հարցը դնել կոլեկտիվի ժողովին:

Հ Ա Ր Ց Ե Ր

1. Ինչո՞ւ ֆիզկուլտուրան և ուղմական պարապմունքն ան-
հրաժեշտ բաներ են:

2. Ինչո՞ւ ֆիզկուլտուրայի պարապմունքը վորոչ կանոններով
պիտի լինի և վոչ պատահական ձևով:

3. Ֆիզկուլտուրայի ի՞նչ խմբակի մեջ եք:

Գոյական անուններն ունեն յերկու թիվը՝ յեզակի և եոգմակի:
Յեզակին ցույց և տալիս մի առարկա, հոգնակին ցույց և տալիս
նույն տեսակի մեկից ավելի առարկաներ:

Յեզակի թիվ

ժամ

Հարց

Ընկեր

Պարտեզ

Հոգմակի թիվ

ժամեր

Հարցեր

Ընկերներ

Պարտեզներ

Դիտեցե՛ք և զուգահեռ բերե՛ք կանոն, թե ինչպի՞ս ենք ստանում
հոգնակի թիվը:

Դտե՛ք հետևյալ բառերի հոգնակին. 1. հող, կով, վարդ,
ճանճ: 2. Դիրք, ջուր, թուղթ, միրգ: 3. Աչակերտ, պարտեզ,
քաղաք: 4. Դասագիրք, մորաքույր, կրաքար: 5. Յերկրագործ,
հեռախոս, հանքավոր:

3. ՄԱՔՈՒՐ ՈՂՈՒՄ

Փափուկ, սպիտակ ձյուն և յեկեղ,
ծածկել փողոց դռ ծառեր.

յեկե՛ք, յեկե՛ք, ջա՛ն մանուկներ,
խաղանք ձմռան մեր խաղեր:

Ողը մաքուր, սառն ու պայծառ,
յեկեք վազենք ու սողանք.

վաղուց և, վոր մենք չենք տեսել
եսպես սիրուն յեղանակ:

Խաղ անելով մաքուր ողում՝
ուժ, յեռանդ ենք հավաքում,
խորհուրդների յերկրի համար
աշխատանքի պատրաստվում:

Հ Ա Ր Ց Ե Ր

1. Ի՞նչ յեղանակ և նկարագրված այստեղ: Ուրիշ ի՞նչ յեղա-
նակներ կան: Նկարագրեցե՛ք այդ յեղեռանակները:

2. Մեր, խորհրդային յերկրում ամեն մի մարդուց ի՞նչ է պահանջվում:

3. Բուրժուական յերկրներում ել բոլորն աշխատում են:

Այս գրվածքն ինչո՞ւ վոտանավոր է կոչվում: Փորձի՛ր Ա տես՝ կարո՞ղ ես այս վոտանավորը կարդալով վոտներդ հցել— քայլել համաչափ:

Այս վոտանավորն արձակի վերածի՛ր—միտքը քո բառերով պատմելով:

4. ԱՄՐԱՅՐՈՒ ՄԱՐՄԻՆԻ ՄԱՐԶԱՆՔԻ ՄԻՋՈՑՈՎ

Վորտեզ ել լինես՝ տանը, դպրոցում, պիտներական ճամբարում, դաշտում, տարվա վո՛ր յեղանակն ել վոր լինի, սովորություն դարձրո՛ւ ամեն ուր մարմնամարդությամբ զբաղվել: Տանը մարդանքը պետք է կատարել անկողնից վեր կենալուն պես, դպրոցում կամ պիտներ կուլեկտիվում՝ պարապմունքներից կամ աշխատանքներից առաջ: Մարդանքի ժամանակ պահպանի՛ր հետևյալ կանոնները.

1. Մարդանքը կատարի՛ր բաց ոդում. սենյակում պարապելիս՝ նախապես թարմացրու սենյակի ոդը:

2. Աշխատի՛ր մարդանքի ժամանակ սպորտ-դժեստ ունենալ, հակառակ դեպքում՝ թեթև հազնվի՛ր, ոճիքդ արձակած, դուրիք թուլացրած, անկրունկ կոչիկներով (չուստ, արեխ):

3. Աշխատի՛ր շարժումները ճիշտ կատարել:

4. Գետնի վրա պառկելու դեպքում՝ միշտ գործածի՛ր դորդ, խո՛ր, կարպետ և այլն:

Այս հոգվածի հիման վրա ասացե՛ք՝ ինչպե՞ս են գրվում կանոնները. ամեն մի կանոն վորտեզ է գրվում և ի՞նչ է գրվում առաջը: Ի՞նչ է գրվում ամեն մի կանոնի վերջը:

Մանկական հրապարակի յերեխաները հավաքվել եյին «յերկաթուղի» խաղալու:

— Յես ամենից մեծն եմ,—ասաց Գադիկը,—յես չողեմեքենան կլինեմ. չողեմեքենայի նման կֆոֆոացնեմ:

— Յես ել մեքենավար կլինեմ,—ասաց Նունիկը,—կղեկավարեմ քեզ:

Մյուս յերեխաներն ել դարձան վազոններ:

Յերեխաները կտան իրարից—մեկը մյուսի դուռուց, բլուզից, կամ ձեռքից:



Եդ ժամանակ յերեք տարեկան փոքրիկ Մանիկն ել մեջ ընկավ:

— Յես ել կգամ գնացքով:

— Դու ո՞ւր ես գնում: Բա դու կարո՞ղ ես մեր հետեվից հասնել:

Մանիկն սկսեց լաց լինել: Յերեխաները շփոթվեցին:

Խորհուրդ արին և ասացին:

— Դե լա՛վ, լա՛վ,—մի՛ գուռ: Պոչից վաղիք, մեր հետեվից:

Մանիկն ել կպավ վերջին յերեխայի փեշերից։
Մեքենավար Նունիկը ծղրտաց։ «Շողեմեքենան՝
վորոտաց՝ հո՛ւ ո՛ւ ո՛ւ ո՛ւ։

— Ձի՛կ, չա՛ք, չի՛կ, չա՛ք, չի՛կ, չա՛ք...

Վազոններն ել նրա հետեվից։

— Շա՛րժ-վե՛նք, չա՛րժ-վե՛նք, չա՛րժ-վե՛նք...

Շողեմեքենա Գազիկը թե՛

— Հաս-նե՛նք, հասնե՛նք, հասնե՛նք։

— Իսկ «վազոնները» նրա հետեվից վազում եյին
չատ արագ։

— Յեկանք հա՛, յեկանք հա՛...

— Շարքի՛. չա՛րք կաղմեք, չա՛րք կաղմեք, չա՛րք
չա՛րք, չա՛րք...

«Վազոններն» ել նրա հետեվից։

— Կտանք, կտանք-կտանենք, կտանք, կտանք-
կտանենք։

Յերեխաները վազեցին, հասան մի խմբի—վերեւ
վազելը դժվար եր. կողքով մի փոքրիկ ճամբա կար,
թեք կերպով եր բարձրանում։

— Եստեղ վերջին «վազոն» Մանիկը սայթաքեց ու
ցած գլորվեց, նրա հետեվից մյուս «վազոնը», հետո՝
յերրորդը։

Հասան մինչև շողեմեքենան, սա յեւ չկարողացավ
իրեն պահել։

Ե՛, կատարյալ խորտակում։ Թեքությունը չատ եր
ու քիչ եր մնում գլորվեն մինչև գետը։

Բայց «շողեմեքենան» հնարագետ եր, իսկույն կախ
ընկավ մի կաղնու թփից։ Ու եզպես իրենից կախված,
պահեց ամբողջ գնացքը։

Հետո յեւ ազադակեց։

— Մանի՛կ, «վազոններից» բռնելով արի ինձ մոտ
այստեղ։

Մանիկը գնաց, իսկ մյուս «վազոններն» ազատ ձեռ-
քով ողնում եյին նրան։

Եսպես՝ «վազոն» «վազոնի» հետեվից բարձրացան
վերեւ, կաղնու թփերի մոտ։

Իրար կողքի նստեցին հանգստանալու։

— Ա՛յ,—ասում ե «շողեմեքենա» Գազիկը,— ես
լավ ե, վոր մեր բոլոր վազոններն իրար լսում են, մի
խոսքի յեն։ Բանից դուրս յեկավ, Մանի՛կ, վոր դու գեռ
փոքր ես, յերկաթուղով չես կարող ճանապարհորդել։

Հ Ա Ր Ց Ե Ր

1. Մանիկան հրապարակում իսկական յերկաթուղի, շողե-
մեքենա, վազոններ կային։

2. Ինչո՞ւ ուրեմն այս հողվածում «յերկաթուղի», «շողե-
մեքենա», «վազոններ» բառերը չակերտների մեջ են առնված։

3. Ի՞նչ բառերից են կազմված հետևյալ բառերը—յերկաթու-
ղի, շողեմեքենա, մեքենավար։

6. ՄԱՆԿԱՊԱՐՏՆԶՈՒՄ

Վերժինեն Հունաստանից եր յեկել Թորհրդային Հա-
յաստան — Լենինական։ Արտասահմանից յեկած միջո-
նի յերեխաների հետ նա ես ընդունվեց Լենաեքստիլի
մանկապարտեղը։

Մանկապարտեղի վարիչը Վերժինեյին ներկայա-
ցրեց 7 տարեկանների խմբակի յերեխաներին և առաց.

— Յերեխանե՛ր, ձեզ համար նոր բնակեր եմ բերել,
անունը Վերժինե յե. նոր ե յեկել արտասահմանից։

Յերեխաները, վոր մինչ այդ լուռ աշխատում եյին,
նայեցին վարիչին ու Վերժինեյին, ուրախացած սկսե-
ցին առաջ դալ՝ նորեկին լավ տեսնելու համար։

— Յերեխե՛ք,— ձյանեց Սերյոժան,— գիտե՞ք,

սա բուրժույնների յերկրից և յեկեկ. նրանք ենտեղ սոված էյին մնում. նրա պապան գործ չի ունեցել, դրա համար ել յեկեկ են մեզ մտա:

Ղեկավարը բոլորին նստեցրեց և ասաց.

— Դե՛, հիմա ո՞վ և ցանկանում Վերժինեյին հարցեր տալ:

— Վերժինե՛, դու բուրժույ տեսե՞լ ես, — հարցրեց Կիման: Վերժինեն ժպտաց անհասկանալի հարցի վրա ու զարմանքով պատասխանեց.

— Յես չգիտեմ բուրժույն ինչ է. ատանկ բան չեմ տեսեր:

Յերեխաներին նույնքան զարմանալի թվաց հարցի այդ տեսակ պատասխանը, և Սերյոժան սկսեց բացատրել, թե ո՞վ և բուրժույը:

— Դիտե՛մ, գիտե՛մ, տեսեր եմ:

— Դու յերգ, վոտանավոր գիտե՞ս, — հարցրեց Սեղան:

— Այո՛, գիտեմ՝

Կոտ ու կես կորեկ ունեմ՝ ցանելու համար,

Ճնճդուկներ թռան յեկան, ուտելու համար...

Յերեխաները ծիծաղեցին ու շատերն ել զարմացած զոչեցին.

— Եդ ի՞նչ յերգ ե, վոր...

Հ Ա Ր Ց Ե Ր

1. Կապիտալիստական յերկրներում մանկապարտեզներն ո՞ւմ համար են բացվում:

2. Ո՞ւմ համար են կադմակերպվում մանկապարտեզները խորհրդային յերկրում:

3. Վերժինեյի խոսվածքը նմա՞ն է մանկապարտեղի մյուս յերեխաների խոսվածքին:

4. Յերբ խոսակցությունը դրի յենք ատնում, ամեն մեկի ա-

սած խոսքն ինչպե՞ս ենք դրում, ի՞նչ ենք գնում սկզբից, մեծատառով ենք սկսում, թե՞ փոքրատառով:

Որինակներ ցույց տվե՛ք այս հոդվածից:

7. ՎԱՐՊԵՏ ՍԱՔՈՆ

Վարպետ Սաքոն յերեսունհինգ տարեկան եր, բայց գրել-կարդալ չգիտեր:

— Վարպե՛տ, ինչո՞ւ չես գնում լիկկայան, — հարցնում էյինք յերիտասարդ բանվորներս:

— Կարդալն ինչի՞ս ե պետք, — պատասխանում եր նա: — Դուք վոր գրագետ եք՝ ինձնից բա՛վ եք կահկարասիք պատրաստում: Յեվ, վերջապես, իմ հասակին ել ի՞նչ կարդալ:

Ճիշտ է, այդպես եր ասում Սաքոն, բայց այնքան ել համոզված չեր: Տեսնում եր, վոր ինքը հետ և մնում: Թերթ չեր կարողանում կարդալ. չգիտեր՝ ի՞նչ կա-չկա աշխարհում: Ճնշվում եր ամեն անգամ մեզ հարցնել. թեև մենք սիրով էյինք նրա համար թերթ կարդում: Ու նա սկսեց մտածել...

Մի որ ել իմացանք, վոր վարպետ Սաքոն յերեկոները լիկկայան և գնում:

Մի քանի ամիս անց՝ վարպետն արդեն կարողանում եր կարդալ:

Հիմա նա գոհ է, ուրախ, վոր գրագետ է: Յերեկոները կնոջ համար լրագիր և կարդում: Դեռ կնոջն ել համոզում է, վոր գրել-կարդալ սովորի:

Հ Ա Ր Ց Ե Ր

1. Ո՞ւմ համար են լիկկայանները:

2. Ո՞վ և բաց անում մեծահասակների գալրոցները:

Յ. Բացի լիկկայանից՝ մեծահասակների համար ուրիշ ի՞նչ
գաղտնյեք կան:

Կ. Ինչո՞ւ անգրագետին վոչ մի տեղ չեն ընդունում:

Ն. Ինչո՞ւ գրագետը կարող է առաջ գնալ:

8. ՍԱՌՈՒՅՑԸ ԶԱՐԴԵՑԻՆ

1.

Գործարանի ճանապարհն անցնում եր փոքրիկ Մա-
րոյենց տան մոտից:

Ձմեռ եր:

Ողի մեջ խաղում էյին ձյունի փաթիլները, հան-
գարտ իջնում, փաթաթվում իրար:

Հանգստի ուր եր:

Մարոն իր հայրիկի հետ նստել եր պատուհանի առ-
ջև և նայում եր դեպի փողոց:

— Գեռի Ռուբրիկին ի՞նչ է յեղել, վոր եսոր Աշխենն
է չուկա գնում, — հարցրեց Մարոն հայրիկին:

— Գեռի Ռուբրիկը հիվանդ է, բա՛լիկս:

— Ինչո՞ւ:

— Մեր գռան մոտի սառցի վրա ընկել է, վորտը
կոտրել: Յերեխաները սղդացել են, սառուցը հղկուն է
գարձել. նա յեղ սայթաքել է, ընկել և վորտը կոտրել:

2.

Մյուս ուրը, յերբ հայրիկը գործարանից տուն եր
գառնում, զարմացած կանգ առավ:

Մարոն բա՛շը ձեռքին, կարմրած, քրտինքի մեջ կո-
րած, փողոցի սառույցն եր կոտրատում և կովում մի
խումբ յերեխանների հետ, վորոնք իրեն խանդարում ե-
յին:

— Փոխանակ ինձ ողնելու, խանդարում եք, — ա-

ռում եր նա: — Յեկե՛ք ողնեցեք, վոր սառուցը կոտրենք,
մաքրենք: Ձի՛ կարելի եստեղ սղդալ. բանվորներն այս-
տեղով անց ու դարձ են անում, կընկնեն, կվնասվեն
գործարանը կառուցի: Ա՛յ, հրեն ճեռի Ռուբրիկն ընկել է,
վորտը կոտրել, պառկել:

— Ապրե՛ս, աղջի՛կս, — ասաց հայրը և մոտենալով
Մարոյին, չոյեց նրա դանդուր մազերն ու քրտնած ճա-
կատը: Լավ կլինի, վոր ընկերներիդ ել կանչես ողնու-
թյան:

Հ Ա Ր Ց Ե Ր

1. Փողոցի սառուցը կոտրատելով, լա՛վ բան եր անում Մա-
րոն:

2. Ինչո՞ւ յեր այդպիսի գործ սկսել Մարոն:

3. Հոր խորհուրդն ոգտակա՞ր կլիներ, ինչո՞ւ:

Հայրիկ բառը կազմված է հայր բառից և իկ մասնիկից, վոր
ածանց է կոչվում: Ածանց կարող է և բառի սկզբին լինել. որի-
նակ՝ ամգործ, այդանդ ամբ ամանց և:

Ածանց ունեցող բառերը կոչվում են ամամցավոր բառեր:

Հայրիկ բառի նման իկ ամանց ավելացրեք հետևյալ բառերին —
մայր, քույր, տատ, պապ, շուն, ձուկ, այծ, հավ, աստղ, կար-
միր:

9. ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄ

Ամռան տոթին գեղջկուհի՛ն
բլետք է գնա քաղհանի.
հո չի՞ կարող նա իր հետ
յերեխեքին ել տանի:

Ու թե մենակ են մնում,
գիտե՛ք, թե ինչ են անում:
Մի ազատ ուր գյուղացիք
հավաքվեցին ժողովի



ու գրեցին լուսրաժնին.
«Մենք բոլորս, գեղովի,
հրապարակ ենք ուզում.
փոքրիկները մեր գյուղում
անխնամ ու անուսում
թափառում են, վազվզում:
Հրապարակի ապագա
մեծ ու սիրուն շենքը կա»:

Ահա... շուտով քաղաքից
յեկավ մի լավ վարժուհի.
հրապարակ են դնում
մանուկները մեր գյուղի:

Ամբողջ ուրը յերգ ու խաղ,
մանուկները ժիր, ուրախ
աշխատում են միասին՝
զվարթ ժպիտն յերեսին:

Յերբեմն առած բաճ, ուրազ,
հող են փորում ժիր, արագ.
լողանում են ամեն ուր,
չառ են սիրում արև, ջուր:
Ահա այսպես մեր գյուղում
մանուկները փողոցում
չեն թափառում և մնում
անխնամ ու անուսում:

Հ Ա Ր Ց Ե Ր

1. Ի՞նչ բառերից են կազմված—լուսրաժնի, քաղհան:
2. Ի՞նչ մասնիկներ կամ ածանցներ կան հետևյալ բառերի սկիզբը կամ վերջը—գեղովի, վարժուհի, գյուղացի, գեղովի, փոքրիկ, անխնամ, անուսում:

Այն բառերը, վորոնք կազմված են յերկու կամ ավելի
բառերի միացումից, կոչվում են բարդ բառեր:

Այն բառերը, վորոնք սկզբից կամ վերջից մասնիկ կամ
ածանց ունեն, կոչվում են ածանցավոր բառեր:

10. ԴԵՊԻ ԱՇԽԱՏԱՆԻ

Անկարգ Արամը
ամբողջ ժամանակ
քարերը ձեռին
պարտեզում մենակ
հա՛ խաղ եր անում,
ճյուղեր կոտրատում
ու ծխիկներին
անհանգստացնում:

Մի ուր ել ահա՝
պարտեզ գնալիս՝
տեսավ Հրանտին

Ժիր աշխատելիս:

Մեխ, փայտ ու սղոց
առածը լցրած,
բարակ տախտակից
իրեր եր շինում
ու հետո ել կամաց
անուշիկ յերգում:

— Այդ ի՞նչ ես շինում,—
տեսավ Արամը:

— Բներ եմ շինում.—
խոսեց Հրանտը:—

Հրանտի խոսքերից
Արամը կարմրեց
և իբա վարժից
սաստիկ ամաչեց:
— Ի՞նչ կըլնի, Հրա՛նտ,—
խնդրեց Արամը.—
Թո՛ւյլ տուր, վոր յես ել
քեզ հետ աշխատեմ
ու ծիտիկներին

2 11 10 8 6 1

1. Քոչունները մեզ ի՞նչ աղուտ են տալիս:
2. Դիտե՞ք թռչուններին պաշտպանող ու հովանավորող ընկերություն մասին:
3. Ձբաղմունքն ինչպե՞ս է ազդում բնավորության վրա:
4. Վտանալորն արձակի վերածնցե՞լք և դրավոր չարադրե՞լք:

11. «ՀՈԿՏԵՄԲԵՐԻԿ» ԿԱՐԻ ԳՈՐԾԱՐԱՆ

Նինիկը, Սոնիկը, Մանոն ու Կարոն միևնույն բա-
ղումն են ապրում: Սրանք բոլորն ել հօկտեմբերիկներ
են ու սովորում են իրենց թաղի մանկապարտեզում:

Այսոր նրանց ծնողներն անհանգիստ են: Ճաշն ան-

ողնու թյան հասնեմ:

— Ահա քեզ փայտեր,
սղոց ու մեխ եւ,
արի միասին
մեկտեղ աշխատենք,
փայտից, թիթեղից
լավ բներ շինենք:

Ու այդ որվանից
Արամը փոխվեց,
Հրանտի խոսքերից
իր վարքն ուղղեց:
Եւ չեր թափառում,
վոչ եւ փոքրերին
ճիճում, հանգոյում:
Դասերից հետո
սուեն էր շտապում
և Հրանտի հետ
սիրով ախաատում:

ցել ե, քայց դեռ յերեխաների ձայնը չի լսվում: Մա-
նոյի մայրը պատրաստվում էր մանկալարտեղ գնալու,
յերբ հանկարծ դուռը բացվեց ու չորան ել ներս վազե-
ցին՝ կարմիր դրոշակները ձեռքերին, իսկ կրծքերին
փայլում եյին կարմիր աստղերը:

— Ես ո՛ւր ելի՞մ, բալիկներս, — հարցրեց Մանուկ մայրը:

— Մայրի՛կ ջան, այսօր գնացել ելինք կարի գործարանը: Ա՛յ, այս գրողակները գործարանում տվին, իսկ աստղերը՝ մանկապարտեզում. չե՞ վոր վաղը Հոկտեմբերի տոնն ե:

— Գործարանում ի՞նչ տեսաք, — հարցնում են բա-
նի գերեխաները:

— Շա՛տ բան, — ինքնագոհ ասում է Կարոն, — ե՛լ մեքենա, ե՛լ շորեր, ե՛լ, ե՛լ... յես ի՞նչ գիտեմ: Այ, այստր կարի գործարան կշինենք, գուք ել կտեսնեք... Բիչ հետո փողերը Նինիկենց պատշգամբումն եկին:

— Դե՛, սեղանը մեջտեղ քաշենք, — կարդալունց Սոնիկը:

Սոնիկը:
Մի քանի րոպեյում պատշգամբն իր տեսքը փոխեց և
Փոքրերը սեղանի շուրջն աթոռներ չարեցին: Սոնիկը
գուլնդգուլն չորի կտորներ բերեց, Մանոն՝ քեռու նվա-
րած կարի մեքենան, Նինիկը՝ թել, ասեղ, մատնոց ու
կոճակներ, իսկ Կարոն՝ կարի մեքենայի յուղաման և
մի փոքր մուրճ: Անմիջապես աշխատանքն սկսվեց: Սո-
նիկը և Մանոն կարում էյին, իսկ Նինիկը ձեռքում եր-
կուրդից պատասխանատու գործը Կարոյինն էր: Նա
այստրվա տեսած կարի գործարանի մեխանիկ քեռու
պես, շուտ-շուտ մուրճն էր թըրխթըրխկացնում ու շա-
րունակ յուղում կամ սրբում եր Մանոյի կարի մեքենան:
— Կարո՛, — ասաց Մանոն, — հիմա յեւ մեր գործաւ

Համբարձումի զուգահեռ



ծարանի դուռը պարզարի՛, չե՞ փոքր փաղը Հոկտեմբերի
տոնն է:

Կարոն իսկույն անցավ իր գործին: Փողոցի կողմի
յերկու սյուների վրա ամրացրեց իրենց դրոշակներն ու
յերեք տարեկան լենինի պատկերը:

— Ուզո՞ւմ եք ելեկտրական լամպն իջեցնեմ ու ձգեմ
մինչև դրոշակները, — ասաց Կարոն, գիմելով ընկերսն —
լին: Նա բարձրացավ սեղանի վրա:

— Հա՛, հա՛, Կարո՛ ջան, — խնդրեցին փոքրերը:

— Լամպն ուղիղ լենինի նկարին մոտեցրո՛ւ, — ասաց
Սոնիկը:

— Ես մեկը վերջացավ... Ե՛լ ինչ եք ուզում, —
հացրեց Կարոն, — չե՞ք ուզում՝ մեծ տառերով գրենք
գործարանի անունը:

— Հա՛, գրի՛, գրի՛...

— Ի՞նչ անուն տանք գործարանին...

— Հոկտեմբերիկ, Հոկտեմբերիկ, — առաջարկեց
Մանոն:

— Դե լա՛վ, թո՛ղ այդպես լինի:

Արդեն մթնում էր, ու մեր փոքրերի կարի գործա-
րանը շատ աշխուժ շարունակում էր իր գործը:

Հանկարծ Սոնիկը շչակի պես սկսեց սուլել.

— Ո՛ւ... ո՛ւ... ո՛ւ...

Նրան ձայնակցեցին և մյուսները:

— Դե՛, գործը թողե՛ք, — ասաց Սոնիկն ու շուտ
ավելց ելեկտրական լամպի կոճակը: Միանգամից լուսա-
վորվեց փոքրիկ ձեռներով շինված գործարանը, վորի
ճակատին մեծ ու կարմիր տառերով գրված էր՝ «Հոկ-
տեմբերիկ» կարի գործարան. իսկ դրոշակների միջև
յերեք տարեկան լենինը ծալտում էր:

Հ Ա Ր Ց Ե Ր

1. Դուք ել տեսե՛լ եք վորևե գործարան (նկարադրեցե՛ք):
2. Դուք ի՞նչպես եք անցկացնում հեղափոխական տոները:

Դիտեցե՛ք, թե վորտեղ են գրված՝ շնորհ, յերկարը և հար-
ցական նշանները:

Ո՞ւմ ենք հոկտեմբերիկ անվանում:

Կարի գործարանի «Հոկտեմբերիկ» անունն ինչո՞ւ չակերտ-
ների մեջ է անված: Ուրիշ ի՞նչ սրինակներ կարող եք բերել,
վորտեղ հիմնարկի անունը չակերտների մեջ առնվի ու մեծատա-
ռով գրվի:

Դիտեցե՛ք հետևյալ միտքը—

Նինիկը, Սոնիկը, Մանոն ու Կարոն միևնույն բակումն են
ապրում:

1. Բանի՞ բառ կա այս խոսքում:

2. Վո՞ր բառը չի կարելի դուրս դնել: Ի՞նչ կլինի, յեթե այդ
բառը դուրս դցնեք:

3. Ովե՞ր եյին ապրում բակում:

Նինիկը, Սոնիկը, Մանոն բառերն ինչո՞ւ ստորակետով բա-
ժանված են:

Մանոն ու Կարոն բառերն ինչո՞ւ ստորակետով չեն բաժան-
ված:

Բառերի արտահայտված միտքը կոչվում է խոսք: Սո-
քի մեջ այն բառը, առանց վորի միտք չի լինի, կոչվում է
բայ (ապրում են): Բայը մենակ միտք է արտահայտում:
Բայի միտքը լրացվում է ուրիշ բառերով: Եթե խոսքի մեջ
մի քանի բառեր նույն միտքն են լրացնում ու նույն հարցին
են պատասխանում, իրարից բաժանվում են ստորակետով
(Նունիկը, Սոնիկը, Մանոն): Այդ բառերից վերջին յերկուսը
յեթե ու, և բառերով են կապվում, ստորակետով չեն բաժան-
վում (Մանոն ու Կարոն):

12. ՆՈՒՆԻԿԻ ՅԵՐԱԶԸ

(Հատված)

1.

Նունիկը մի օր
ողանալ տեսալ
ու հորն այդ մասին,
հարց ու փորձ արավ
Հայրիկը պատմեց,
վոր այդ նավն ողու
արծվի նման
թռչում է, ճախրում:

Այդ նավից հանկարծ,
վոր ներքեվ ընկնեն,
եւ պրծում չկա,
խելույն կմեռնեն:
— Չեն ընկնի, բալիկ,—
ասաց աղջկան,—
այդ բաների դեմ,
միջոցներ եւ կան:



Վերցնում է մարդիկ,
բեռ ու կապոցներ,
գիրք ու լրագիր,
հետն եւ նամակներ:
— Իսկ մարդիկ, պապա',
բա չե՞ն վախենում,—
հարցրեց հորը,
Նունիկը վերջում,—

վորպեսզի լինեն
հանդիստ, ապահով,
իրենց կապում են
կաշե թուկերով,
ու յերբ իջնում են,
հասնում են դետին,
բոլոր թուկերը
քանդում են կրկին:


Յեւ այսպես շատ բան
Նունիկը լսեց,

ընկալ մտքի հետ,
եւ հարց չտվեց:

2.

Քնեց Նունիկը
խոր, հանգիստ քնով,
իր մահճակալում,
խաղաղ, անվրդով:
Ու յերազում նա
տեսալ ողանալ՝

չատ-չատ վոր լինի,
յոթ-ութ տարեկան:
— Կուզե՞ս, վոր թռչես,
ասաց Նունիկին,—
յե՛կ նստեցնեմ
քեզ ողանալին,



պատիկ, պսպղուն,
գեղեցիկ ու լավ...
Ողաջուն նույնպես
փոքրիկ՝ իր նման

տանեմ Յերեվան,
Թիֆլիս ու Բազու,
ապա հետ բերեմ
Մեղրի, Ղամարլու:

Կամ, յեթե կուզե՛ս,
թռչենք մենք Մոսկվա,
նորությունները
դու տես այս տարվա:
— Հա՛, Մոսկվա կուզեմ,
Նոենիկն ասավ,—
ընկեր Լենինին
մի տեսնեմ յես լավ:
Հետո յել... գիտե՞ս...

ա՛խ... տեսնել կուզեմ...
մի Մոսկվա հասնե՛նք,
հետո յես կասեմ...
Ու մեր Նոենիկը
չափազանց հուզված,
նստեց ողանալ,
հույսերով տարված,
թուով դեպ Մոսկով,
ուրախ, անվրդով:

Հ Ա Ր Ց Ե Ր

1. Ճանապարհորդելու ուրիշ ի՞նչ միջոցներ կան:
2. Ողանալն ի՞նչ բանի յե ծառայում:
3. Պատերազմի ժամանակ ի՞նչ դեր կխաղա ողանալը:
4. Խաղաղ ժամանակ ի՞նչպես և ինչի՞ համար և ողտաղործվում ողանալը:

13. ՄԵՐ ՍՈՑՄՐՑՈՒՄԸ

1.

Յերբ մենք լսեցինք զեկուցում սոցմրցման և հարվածախուլթյան նշանակուլթյան մասին, շատ ուրախացանք:

— Լավ կաշխատենք սրանից հետո, — ասացինք մենք ու մեզ հայտարարեցինք հարվածային:

Յերեք որ անցնելուց հետո մեր ահումբի պատը ծածկված էր սոցմրցման պայմանադրերի թերթիկներով:

Բացի մեր անհատական պայմանադրերից, մենք խմբակով էլ մի պայմանադիր կնքեցինք թուրք դպրոցի հոկտեմբերիկների խմբակի հետ:

Մեր խմբակում կային 2 չար և անկարգապահ հոկտեմբերիկներ՝ Վանիկը և Գառնիկը, վորոնք ուշ ավեցին իրենց պայմանադրերը, բայց շատ հետաքրքիր ցուցանիշներ ունեյին. ինչպես, որինակ՝ շատ լավ կարգաւ, մաքուր դրել, արագ հաշվել, հետեւի դպրոցի սանիտարական դրության, խնամքով վերաբերվել դպրոցի դույքին, փող ունեցած դեպքում տանել խնայդրամարկդը, Յ ծառ տնկել տան բակում, մասնակցել յերրորդ բայլչելիկյան դարնանացանին և այլն:

2.

Անցել էր 2 ամիս. մենք անցկացրինք պայմանագրերի ստուգատես:

Պարզվեց, վոր մեր աշխատանքները լավ են դնացել:

— Ընկերներ՛ր, — ասաց ընկ. Արուսը, — մեր Յ ամսվա ծրագիրը կատարել ենք 2 ամսում, նյութերը լավ յուրացնելով. ավելի շատ և լավ ենք պատրաստված հիմա: Ընկ. Արուսը զովեց մեր ամբողջ խմբակին և հայտնեց, վոր Վանիկն ու Գառնիկը հարվածային հայտարարելուց հետո՝ ել չեն բացակայում, չեն խանդարում, կռիվ չեն անում, այլ ակտիվորեն մասնակցում են մեր բոլոր աշխատանքներին:

Մենք վորոշեցինք ակտիվ հարվածային հոկտեմբերիկներին 10 հոգու նվիրել պիոներ կազմակերպությանը: Բոլորիս ուրախությունն անչափ էր: Մենք խոսք ավինք սրանից հետո ավելի լավ աշխատել, վոր մենք ել չուտ դառնանք պիոներ:

Հ Ա Ր Ց Ե Ր

1. Ի՞նչ է սոցմրցումը և հարվածախուլթյանը:
2. Դուք ել մասնակցում եք սոցմրցման. ինչո՞ւ:

14. ԾԱՌԱՏՈՒՆԿ

Ուսուցիչը

գյուղատնտես
առաջ անցավ,
խոսեց այսպես.
— Նպատակը
այս հավաքի
հատուկ որն է
ծառատունկի.
այսոր ծառեր
պետք է տնկենք
գյուղի միջի
հրապարակում,
սարի լանջին,
աղբյուրի մոտ
և կոլխովի
մրգի այգում:
Ես ի՞նչ աղմուկ,
իրարանցում,
ի՞նչ հավաք ե
մեր գլխոցում.
պիտենքներ
չարքով կանգնած,

Թմբկահարը

Թմբուկն առած,
կարմիր, կարմիր
դրոշակներ,
գյուղատնտես,
կոլխովիկներ...
Ամբողջ գյուղն է
վռոքի կանգնել...
Յեվ ամենքը
չարքով, կարգով,
դրոշակներով,
ուրախ յերգով
առաջ անցան,
առան տունկեր
ու տնկեցին
գյուղի միջի
հրապարակում,
սարի լանջին,
աղբյուրի մոտ
և կոլխովի
մրգի այգում:

Հ Ա Ր Ց Ե Ր


1. Ի՞նչ նշանակութուն ունի ծառատունկը:
2. Ինչո՞վ է ծառատունկը նման տանի:
3. Ի՞նչ տարբերութուն կա խորհրդային և բուրժուական տնկերի միջև:

Դիտեց՝ք հետևյալ բառերի կազմութիւնը—ծառատունկ:
գյուղատնտես, Թմբկահար:

Ի՞նչ բառերից է կազմված առաջին բառը, յերկրորդը, յեր-
րորդը:

Ինչո՞վ են միանում այդ բառերի յերկու մասերը:

Բարդ բառերի յերկու կամ ավելի մասերը կապվում են ա
ձայնավորով, վոր հոգակապ է կոչվում (դասադիրք, հեռա-
գրատուն): Յերկու բոից կազմված բարդ բառը մի հոգակապ
է ունենում, յերեք բառից կազմվածը՝ յերկու հոգակապ:



15. ՏՈԿԱՐ ՎՈՍԿԱՆԸ

Բզավի բանվորական դպրոցում ցուցակադրվելու
համար ուսուցչուհի Մազթաղին մոտեցավ մազերն սպի-
տակած, տարիքավոր մի բանվոր:

— Ընկե՛ր որիորդ, անունս Վոսկան է, աղգս՝ Վա-
հանյան, փեշակով՝ տոկար եմ. խնդրում եմ ինձ ել
դրես:

Վարժուհին նայեց ծերացած բանվորին, ժպտաց ու
ասաց.

— Ընկե՛ր Վահանյան, դուք արդեն տարիքով մեծ
եք, յերեմի չուտով աշխատանքից կաղատվեք. ձեք

դպրոց դալը միտք չունի. չենք կարող ընդունել, ավելի չուտ՝ իրավունք չունենք:

— Յես քեզ ասում եմ՝ զբի՛ կարդալու ցանկություն ունեմ. ել տարիքը վո՞րն ե:

Հերթի կանգնածները հուզվեցին.

— Ե՛յ ընկե՛ր, չո՛ւտ արտ, մենակ դո՛ւ չես:

Վոսկանը մոտեցավ բանվորական դպրոցի վարիչին.

— Ընկե՛ր վարժապետ, յեթե ես տարի ինձ ուսումնարանում տեղ չտաք, վատ կլինի: Քառասուն տարվա բանվոր եմ...

— Ընկե՛ր Վոսկան, ցավում եմ, բայց ի՞նչ արած: Կարգն այդպես ե:

— Բա դուք նրա խոսքն ի՞նչպես եք կատարում:

— Ո՞ւմ խոսքը:

— Նրա, վոր ասել ե՝ սովետական յերկրում մի անկերթ, անդրադետ մարդ չի լինելու: Ի՞նչ կասես:

— Հետո՞ ինչ. մենք այդ գիտենք, — ժպտաց վարիչը:

— Հետո ե՛ն, վոր մեզ հուզ կտան: Հեղափոխության 15 տարին լրանում ե. ընկեր Լենինը հաշվի կնստի ու մեկ ել կտեսնի, վոր Սեվ Քաղաքի գործարանի բանվոր անկար Վոսկանը մնացել ե անդրադետ... Ի՞նչ կալտասխանեք նրան, հը՞, ասե՛ք:

Աւ հաղթանակ տարածի նման մի քայլ առաջ գնաց: Վարիչն ու վարժուհին իրար նայեցին հուզված: Բանվորները ժպտում եյին, խրախուսում Վոսկանին:

— Վորպես բացառություն, ընդունենք, — ասաց վարիչը: Բանվորները ծափահարեցին:

Վոսկանի ուրախությանը չափ չկար:

Հ Ա Ր Ց Ե Ր

1. Ինչո՞ւ բանվոր Վոսկանն անդրադետ եր:

2. Մենք ի՞նչ միջոցներով ենք անդրադիտությունը վերացնում մեր յերկրում:

3. Հայաստանում յե՞րբ ե խոստովերանալու անդրադիտությունը:

4. Լիկկայաններն ի՞նչ նշանակություն ունեն անդրադիտության վերացման գործում:

1. Բոլոր քաղաքներին կարելի՞ յե քաղաք ասել:

2. Իսկ բոլոր քաղաքներին Բագու կարելի՞ յե ասել:

3. Բոլոր մարդկանց կարելի՞ յե Լենին, Վոսկան, Մազթաղ, Վահանյան ասել:

Առարկաները յերկու տեսակի անուններ ունեն.

ա) Կան այնպիսի անուններ, վոր տալիս ենք նույն տեսակի բոլոր առարկաներին. որինակ՝ մարդ անունը տալիս ենք բոլոր մարդկանց՝ թե՛ Լենինին, թե՛ Վոսկանին, թե՛ Մազթաղին ե այլն: Այսպիսի անունները (մարդ, գիրք, կով) հասարակ անուններ են կոչվում ե խոսքի մեջ փոքրատառով են գրվում:

բ) Կան այնպիսի անուններ, վոր նույն տեսակի բոլոր առարկաներին տալ չենք կարող, այլ միայն նրանցից վոմանց կարող ենք տալ. որինակ՝ բոլոր մարդկանց կարող ենք մարդ ասել, իսկ Վոսկան կամ Մազթաղ ասել չենք կարող: Այսպիսի անունները հատուկ անուններ են կոչվում (Բագու, Վոսկան), վորոնք միշտ մեծատառով են գրվում:

Հատուկ անուններ են՝ 1. մարդկանց, 2. քաղաքների ե գյուղերի, 3. գետերի, ծովերի, լճերի, 4. լեռների, 5. լրագրերի, ցրվածքների ե այլն անունները:

Հատուկ ե հասարակ անուններ ասացեք:

16. ԳԱՐՈՒՆ

Նորից դարուն, նորից յերդ,
նորից ծիծղուն առավոտ,
նորից խնդում ու նոր բերք,
ծիլ ու ծիծառ, ծաղկի հոտ:

Մեր յերկիրը լայնարձակ,
գործենք ուրախ, համարձակ.
մի տեղ անտառ կոչենք,
մի տեղ մաքրենք քար ու ցեխ:

Յեկեք ցրվենք և խումբ-խումբ
աշխատանքի դադարողում
կազմակերպենք թռչնի ուր,
բներ շինենք նորանոր:

Տղաները փողոցի
ջուրը զոռով կապեցին.
և մեր այգին ու առուն
մնացել են առանց ջուր:

Նորից խաղ ու աշխատանք,
նորից խնդալից դարուն.
Ժույլ ու պարապ տղային
մեր յերկրը չի սիրում:

1. Այս վոտանավորը վերածեցե՛ք արձակի:
2. Այս վոտանավորի առաջին տան (4 տողի) մեջ ի՞նչ բառ և պակասում, վոր մենք մեղումեղ հասկանում ենք:

Խոսքի մեջ բայը կարող է չգրվել, բայց մտքով հասկացվել:
Յեթե վերոհիշյալ վոտանավորի առաջին տան խոսքերում բայը
չենք, կատանանք՝

Նորից դարուն ե, նորից յերգ ե լսվում,
նորից ծիծղուն առավոտ ե,
նորից խնդում ու նոր բերք ե,
ծիլ ու ծիծառ կա, ծաղկի հոտ կա:

17. ՄԱՆԿԱԿԱՆ ՀՐԱՊԱՐԱԿԸ ՓՐԿԵՑ ՅԵՐԵՆԱՆԵՐԻՆ
Դաշտային աշխատանքներն սկսվել էին դյուրում:
Գեղջիկուհին ամուսնուն պետք է ոգներ ամեն բանում,
բայց յերեխան միշտ ել խանդարում ու անհանգստաց-
նում եր նրան, թե՛ դաշտում և թե՛ տանը:
Մայրերին այս դրությունից աղատելու համար

բան. գեղջիկ բաժինը մարտի 8-ի առթիվ բաց արավ դյու-
րում մանկական հրապարակ: Շատ մայրեր ցերեկն ա-
ղատվեցին յերեխաների հոգսից: Արդեն ցուցակադր-
ված յերեխաներն ուսուցչուհի Նազիկի ղեկավարու-
թյամբ ձեռքերն առած փողոցիկ ջրցիրները, բահերն ու
այլ գործիքներ՝ աշխատում էին պարտիզում: Հրապա-
րակը գտնվում եր դյուղի ամենալայն փողոցի վրա,
վորտեղից անց ու դարձ անողները դիտում էին յերե-
խաների խաղն ու աշխատանքը:

Մի ուր ել, յերբ սրանք չքջան կազմած խաղում էին
ու յերգում, դռան մոտ կանգնած նայում եր զանգուր
մազերով 6 տարեկան սեվաչյա Սոնիկը: Նա սրտանց
ուզում եր միանալ նրանց, բայց վախենում եր մորից:
Մայրը—Յեղսոն, նկատելով Սոնիկի տնից անհայտա-
նալը, իսկույն վազեց հրապարակի կողմը: Հասնելուն
պես մի լավ ապտակեց Սոնիկին ու քաշեց դեպի տուն:
Սոնիկը ճչում եր և ասում՝ «Ձեմ գալի... յես... հրա-
պարակ եմ գնում... ո՛ւ ո՛ւ...»:

Այս ձայնին վրա հասավ Նազիկն ու սկսեց համոզել
Յեղսոյին, վոր թողնի Սոնիկին հրապարակ հաճախել:
— Յերեխան մեզ մոտ կսովորի՝ յերգել, խաղալ,
աշխատել...

— Լա՛վ բան սովորեցրեք, լա՛վ,—ասաց Յեղսոն:
Խաղն ու յերգը չսովորեն ել կլինի. հարկավոր է տունը
պահել, ալվել, հորթը բերել, բակը սրբել, կրակը վառ
պահել մինչեմ մեր դաշտից գալը: Նազիկը նորից սկսեց
համոզել Յեղսոյին, բայց չեղավ: Յեղսոն Սոնիկին
քարշ տալով տարավ դեպ տուն:

— Մեկ ել տեսնեմ են կողմերն ես գնացե՛լ, մազերդ
կքանդեմ: Սրան նայե՛ք. մի թիղ չկա, խոսքս լսել չի
ուզում:

Հետեվյալ ուր Յեղսոն ամուսնու հետ աշխատում
եր դյուղից քիչ հեռու արտում: Նա Սոնիկին ասել եր.

«Կրակից հեռու կաց, բայց չթողնես, վոր հանգչի»:

Կեսորից բաժական անցել եր, կրակը մարում եր՝ Սոնիկը կարծում եր՝ բոլորովին կհանգչի, առավ անկյունում դրած նավթով լիքը շիշը և հենց ուզում եր մի քիչ լցնել կրակին, ձեռքից ընկնելը, պայթելն ու իրեն բռնկելը մեկ յեղավ: Այդ վայրկյանին հարեվանուհի Լիզան, վոր յեկել եր կրակ տանելու, առանց իրեն կորցնելու, ցատկեց, առավ շորերը կպած մանկան ու դցեց ջրով լիքը տաշտի մեջ, վոր գտնվում եր ոջախից քիչ հեռու: Սոնիկը խիստ վախեցավ, ճչաց, լաց յեղավ, բայց ազատվեց: Հարեվաններն աղմուկի ու Սոնիկի լացի վրա թափվեցին Յեղսոյենց տուն: Յեղսոն հեռվից նկատելով յերգիկից բարձրացող ծուխը՝ ամուսնու հետ լեղապատառ վաղեց տուն: Դեպքի լուրը կայծակի արագությամբ տարածվեց գյուղում. յեկավ նաև Նաղիկը:

Այս անգամ Յեղսոն դդաց իր սխալը: Բոլորն ասում էին. «Բախտավոր ես, Յեղսո՛, վոր ազատվել ե Սոնիկը»: Յեղսոն շնորհակալություն հայտնեց հարեվանուհի Լիզային և խնդրեց Նաղիկին՝ ների իրեն ու յերեխային ընդունի մանկական հրապարակ:

Մի քանի օրից հետո Սոնիկն առողջ եր և հաճախում եր մանկական հրապարակ:

Հ Ա Ր Յ Ե Ր

1. Ինչո՞վ են զրադվում յերեխաները մանկական հրապարակում:

2. Խորհրդայնացուծից առաջ ել գյուղերում մանկական հրապարակներ կային, թե՞ վոչ:

3. Ինչո՞վ ե տարբերվում մանկական հրապարակը մանկապարտեզից:

18. ԶԱՐԿ ՏԱՆՔ ՀԱԳԱՐԱՅՈՒԾՈՒԹՅԱՆ

Յերեվանի յերկաթգծի դպրոցը ճաղարանոց ե հիմնել: Զեռք ե բերել վեննական և աքխանման ճաղարներ: Վեննականը կապույտ ե, աքխանմանը՝ սպիտակ, դունչը, թաթերն ու պոչը՝ սեվ:

Այս տեսակները մեզ մոտ լավ են աճում:

Ճաղարներին խնամում են աչակերտները՝ հերթապահ խմբերով:

Ճաղարը շատ ոգտակար կենդանի յե: Նա պահանջում ե քիչ կեր և լավ խնամք: Տալիս ե համեղ միս ու լավ մորթի՝ վերարկուների ու մուշտակների համար: Արագ աճում ու բազմանում ե ճաղարը: Կերակրվում ե բույսերով:

Ճաղարը բազմացնելով, մենք կլավացնենք բանվորական անդի գործը: Դրա համար բոլոր հոկտեմբերիկները պիտի ոգնեն մեզ, վոր կարողանանք արագ զարգացնել ճաղարաբուծությունը:

Մեր դպրոցը յերկուական դույզ ճաղար ե ուղարկել Լենինականի յերկաթգծի 7-ամյակին ու Յերեվանի յերկաթգծի ինտերնատին և մեկական դույզ՝ Ադինի, Սարգարաբադի յերկաթգծի դպրոցներին: Աչնանն ուղարկելու յե ելի 10 դպրոցի:

Ահա մեր դպրոցի լողունգը. «Առանց մազարի վո՛չ մի դպրոց, վո՛չ մի մանկապարտեզ»:

Հ Ա Ր Յ Ե Ր

1. Կենդանիների վո՞ր տեսակին են պատկանում ճաղարները:

2. Ճաղարաբուծությունն ինչո՞վ ե ձևառու:

19. ՄԱՆՈՒԿՆԵՐԻՆ

Մայթերն են դուրսում ամեն առավոտ,
Առույգ խմբերը վառ մանուկներին—
Ժպտում են նրանց աչուկները բիւ
Ու բուրում վորպես նոր բացվող կոկոն:
Մատաղ քայլերն այդ մանուկներին—
Իմ ջահել սրտի վրա յեն դրվում.
Ու հույսն ե վառվում իմ դասակարգի,
Յերբ ճամբի վրա նրանք են յերգում:
Ու նրանց վճիտ, կապույտ բիրերում
Կարդում եմ յես մեր պայծառ ապագան—
Այն, վոր հաղթության բախտ ե խոստանում
Ու լուրթ ծովի պես փռվում ափից—ափ:
Մեր ջինջ արեւն ե ծիծաղում նրանց,
Ու հողն ե սնում կանաչ տունկերը.
Փթթում են նրանք այս հողի վրա,
Ինչպես այն սերմից յելնող հասկերը:

20. ՄԵՐ ԿՈՒՍՈՂԻ ԱՐՏԵՐԸ

Մեր կուխողի արտերը
Տրակտորը վարել ա,
Կուխոզն այսոր ծովի պես
Կանաչել ա, ծաղկել ա:
Մեր կուխողի արտերը
Նաչխուն բերքով հասել ա,
Ցորենի ծով հասկերը
Ճոխ բերքերով լցվել ա:
Ու բացվել են վարդերը,
Որորվում են հասկերը
'Հազար երնեկ նոր կյանքին'
Շենացել են դաշտերը:

21. ՄԱՅՐԻԿՆԵՐԻՆ ՈԳՆԵՑԻՆ

Բամբակը հասել եր:

Ահմեդ—Բագլու գյուղի տնտեսականների, կոմյերի-
տականների և պիոներների աշխատանքի ամենալեզուն
Ժամանակն եր:

Բայց վատն այն եր, վոր շատ մայրեր իրենց յերե-
խաներին մեջքերին կապած եյին աշխատում, իսկ վո-
մանք ել, փոքր յերեխաներ ունենալու պատճառով, չե-
յին կարողանում աշխատանքի գալ:

Հոկտեմբերիկ Փաթման նկատեց այդ և ասաց.

— Ընկերներ, պետք ե մայրիկներին ոգնենք:

— Ինչպե՞ս, — հարցրին այս ու այն կողմից:

— Կոլտնտեսության նախագահին խնդրենք, վոր
բամբակի դաշտում մի վրան սարքի, այդ վրանի տակ
մենք փոքրիկներին կգրադեցնենք, մայրիկները հան-
գիստ կաշխատեն:

Յերկու որից հետո վրանը պատրաստ եր:

Աշխատանքի գնալուց առաջ մայրերն իրենց յերե-
խաներին հանձնում եյին հոկտեմբերիկներին, վորոնք
մինչև աշխատանքի վերջը գրադեցնում եյին նրանց:

Այսպիսով քառասուն և հինգ բանվորական ձեռք
ավելացավ:

Մի չաբաթ հետո, բամբակը ժամանակից առաջ
հավաքելու պատճառով, Ահմեդ—Բագլու գյուղի կոլ-
տնտեսությունն ստացավ չրջանի փոխանցիկ դրոշը:

Հ Ա Ր Ծ Ե Ր

1. Ել ի՞նչ ձևով կարելի յե մայրերին ազատել մանուկների
հողատարությունից:

2. Ի՞նչ նշանակութուն ունի փոխանցիկ դրոշը և ինչո՞ւ յե
այդպես կոչվում:

Մայր, մոր, մորից, մորով... Ուրիշ գոյականներ ցույց
ափեք, վորոնք փոփոխվում են մայր բառի նման:

22. ՅԵՐԿՈՒ ՊԱՏԿԵՐ

Բանվոր եյի Շուստովի գործարանում:

Կինս ծանր հիվանդ եր: Վատ սնունդ, խոնավ, նեղ-
լիկ բնակարան—եւ առողջություն կմնար: Փող եւ չու-
նեյի՝ բժշկին տայի: Գանի գնում՝ դրությունը վա-
տանում եր: Չորս տարեկան Բենիկիս թողնում եյի
ծծկեր քրոջ և մոր մոտ, գնում եյի գործարան:

Մի որ եւ լուր բերին, թե՝ տղադ ընկել ե կառքի
տակ: Ջրի գնալիս եր աղետը պատահել:

Խելագարի պես դուրս թռա: Յերեխային գրկեցի
ու վազեցի տուն: Արնաթաթիս յերեխան հիվանդ մոր
գրկում շունչը փչեց:

Մայրը չդիմացավ հիվանդությանը և սրտի ցա-
վին: Հազը սաստակացավ: Մոմի պես հալվեց: Հալ-
վեց... ու մի որ եւ մահացավ:

Մորից հետո շուտով մեռավ և ծծկերը:

Այժմ եւ նույն տեղում բանվոր եմ: Գործարանը
հիմա կոչվում ե «Արարատ»: Նորից ամուսնացա: Կինս
եւ բանվորուհի յե մեզ մոտ:

Առավոտյան թեյից հետո կինս մեր Նինելին տա-
նում ե մսուր: Յես եւ հինգ տարեկան Ստեփանիկին տա-
նում եմ մանկապարտեզ: Այնուհետեւ հանգիստ սրտով
գնում ենք գործարան:

Գործից հետո հայր և մայր գնում ենք Ստեփանի-
կին վերցնելու: Յերեխան դեպի մեզ ե վազում և մեկիս
գրկից մյուսի գրկին ե թռչում: Ուրախ ե նա ու կայ-
տառ: Բաց ողում խաղալուց այտերը կարմրել են: Յե-
րեքով գնում ենք Նինելին վերցնելու:

Ուրախ, գլարթ վերադառնում ենք տուն:
Յերբ հիշում եմ «Շուստով»-ը, ասես սեփ ամպ ե
անցնում սրտովս:

Հ Ա Ր Ց Ե Ր

1. Վոր չըջանին ե վերաբերում առաջին հատվածը և վորի՞ն
յերկրորդը:

2. Ի՞նչ վերնագիր կդնեք առաջին հատվածին և ի՞նչ՝ յերկ-
րորդին:

3. Ուրիշ ի՞նչ վերնագիր կարելի յե դնել ամբողջ հոդվածին:

4. Յերվանից ե բանվորի դրությունը լավացել և ինչի՞ հե-
տանքով:

5. Ո՞վ ե պատմում բանվորի մասին, ինքը բանվորը, թե՞
հեղինակը:

6. Նույնը պատմեցե՛ք բանվորի մասին, բայց ձեր կողմից:

23. ԿԱՇԵԳՈՐԾԱՐԱՆՈՒՄ

Յերեք ամիս ե, ինչ Մխոն աշխատում ե կաշվի գոր-
ծարանում, բայց նա չգիտե, թե ուր են գնում իր մաք-
րած մորթիները: Նա չգիտե, թե իր աշխատանքն ինչ
ձեվով ե կապված մյուս բաժանմունքների հետ: Նա
իրավունք խնդրեց և չըջեց գործարանը: Նա տեսավ, թե
ինչպես իրենց բաժանմունքում մաքրված մորթիները
մշակվում են մյուս բաժանմունքներում: Յերբ մտավ
վերջին բաժանմունքը և տեսավ պատրաստի կաշիները,
անչափ դարմացավ: Անհավատալի յեր թվում, վոր
այն կեղտոտ, անպետք մորթիներից այդպիսի գեղեցիկ
կաշիներ են ստացվել:

— Մխո՛, — ժպտաց բանվորներից մեկը, — կարո՞ղ
ես սրանցից քու ձեռքի տակով անցած մորթիները ջո-
կել:

Ջոկել մորթիները: Դա անհնար ե: Հարյուրավոր
ձեռքեր են աշխատել դրանց վրա: Նրանք անցել են

տասնյակ մեքենաների միջով: Իր անհատական աշխատանքը ձուլվել է կոլեկտիվ աշխատանքի մեջ: Մխոն առաջին անգամ իր կյանքում զգաց, վոր կապված է ուրիշ մարդկանց հետ: Յեւ այդ կապը աշխատանքն է:

Հ Ա Ր Ց Ե Ր.

1. Ի՞նչն է կապում բանվորներին:
2. Կոլեկտիվ աշխատանքի ուրիշ ի՞նչ դեպքեր գիտեք:
3. Ի՞նչ է նշանակում աշխատանքի բաժանում: Ինչո՞ւ աշխատանքի բաժանումն ուղտակար է:
4. Ցույց տվե՛ք կոլեկտիվ և անհատական աշխատանքների տարբերությունը:

Դիտեցե՛ք այս հոդվածի հետևյալ կտորը.

— Մխո՛, — ժպտաց բանվորներից մեկը, — կարո՞ղ ես սրանցից քու ձեռքի տակով անցած մորթիները ջուկել:

1. Ինչո՞ւ Մխո բառից առաջ գիծ է դրված, իսկ հետո՝ ստորակետ և գիծ (,—):

2. Ինչո՞ւ Մխո բառի վրա շեշտ է դրված (Մխո՛):

Ուրիշի խոսքի սկիզբը պետք է գիծ դնել:

Հեղինակի կամ պատմողի բառերը (ժպտաց բանվորներից մեկը), յեթե ընկնու մեն ուրիշի բառերի մեջտեղը, սկզբից և վերջից բաժանվում են ստորակետով ու գծով:

Խոսքի մեջ այն բառը, վոր ցույց է տալիս, թե ինչի՞ն կամ ո՛ւմն ենք կանչում, դիմում՝ մի բան ասելու կամ հարցնելու համար, ուժեղ կամ յերկար է արտասանվում. այդ բառը կոչակամ բառ է կոչվում (որինակ՝ Մխո՛, կարո՞ղ ես... — այստեղ Մխո բառը կոչական է, ուժեղ է արտասանվում):

Յեթե կոչական բառն ուժեղ է արտասանվում, ուժեղ արտասանվող վանկի ձայնավորի վրա շեշտ է դրվում. իսկ յեթե յերկար է արտասանվում, նույն ձայնավորի վրա յերկարացման նշան (ˊ) է դրվում (Մխո՛, Մխո՞):

24. ՄԵՐ ԲՐԻԳԱԴՆ ԱՅԳՈՒՄ

Մի բավականին մեծ այգի յեր կոլտնտեսության այգին՝ մասրենու ցանկապատով: Մեծ մասը բռնում էր խաղողի այգին, իսկ մնացած մասում պտղատու ծառեր էյին, վորոնց մեջ կային՝ ծիրանի, խնձորենի, տանձենի և այլն:

Մեր բրիգադը նախապես համաձայնության դալով կոլտնտեսության վարչության հետ՝ սկսեց իր աշխատանքներն այգում:

Առաջին օրը մենք հավաքեցինք «քիսաները» ծառերի վրայից:

Բարձրանում էյինք ծառերի վրա, մկրատով կտրատում «քիսավոր» մանր ճյուղերն ու վայր գցում:

Այն ճյուղերը, վորոնց ձեռք չեր հասնում, կռացնում էյինք յերկար փայտի վրա կապած կեռ յերկաթով: մոտեցնում, ապա կտրում:

Մինչև իրիկուն հազիվ պրծանք: Կտրատած ճյուղերը հավաքեցինք ծառերից քիչ հեռու, մի բաց տեղ:

Մինչ Գասպարը կրակ էր անում, Մխալը պատուեց «քիսաներից» մեկը, և նրա խորքում տեսանք բաղմաթիվ մանրիկ թրթուռներ, վորոնք նոր էյին դուրս յեկել ձվիկներից:

— Ա՛յ, ա՛յ, Գասպա՛ր, — կանչեցի յես, — տե՛ս, ինչքան թրթուռ կա սրա մեջ:

— Հիմա մենք նրանց դատաստանը կանենք, — ասաց Գասպարն ու բորբոքեց ցախակույտի տակ դրած կրակը:

Միքիչ հետո «քիսաների» կույտից մոխիրն էր մնում միայն:

Մյուս օրը մենք կտրեցինք խաղողի մատները: Ուշի ուշով գննում էյինք այդ մատները, վոր կանաչ էյին և:

ըստ յերևույթին, ցուբորը չէր տարել: Կտրում էյինք ներքելից մկրատով, թողնելով առողջ բողբոջները, վորոնցից շուտով պիտի կանաչեյին նոր վոստեր: Իսկ վորը չոր եր և ցրտահար, կտրում ու դեն էյինք գցում:

Հ Ա Ր Ց Ե Ր.

1. Կոլխոզի աշխին ի՞նչ առավելություններ ունի մասնավորի համեմատությամբ:

2. Թրթուրը վոչնչացնելու ի՞նչ միջոցներ ղխեք:

3. Ե՞լ վորտեղ և թրթուր լինում:

Ի՞նչ են ցույց տալիս այս հոդվածի մեջ գործածված հետևյալ բառերը.

աշխի, խաղող, ծառ, մկրատ, ճյուղ, թրթուր, ձվիկ, կրակ, Գասպար և այլն:

Այն բառերը, վոր առարկա յեն ցույց տալիս, կոչվում են գոյական անուններ:

Առարկաները լինում են՝ 1) շնչավոր, վորոնք իրենց կամքով կարող են շարժվել (մարդ, ձի, թրթուր, Գասպար) .

2) անշունչ, վորոնք իրենց կամքով չեն կարող շարժվել (քար, ծառ, ջուր, ավտո):

25. ՄԵՐ ՈԳՆՈՒԹՅՈՒՆԸ ԲԱՄԲԱԿԻ ԶԱՆԱՔԻՆ

— Առավոտյան վաղ հավաքվեք դպրոց, վոր գընանք կոլխոզի հանդը՝ չանաքին ոգնելու, — դասերից հետո հայտարարեց մեր ուսուցիչ ընկեր Գեվորգյանը:

Դեռ լույսը չբացված՝ սկսեցին հավաքվել:

Արեվի առաջին շողերը նոր էյին ընկել սարերի զազաթներին, յերբ մեր խումբը դրոշակով, յերզով ճանապարհ ընկավ:

Տեղ հասանք:

Մեզ դիմավորեց կոլտնտեսության նախագահ ընկեր Կոստին:

— Բարո՛վ եք յեկել, բալիկնե՛ր, — ասաց նա: —

Ընտրեցե՛ք, վոր մասն ուզում եք և գործի անցեք:

— Մեզ համար միևնույն է, — ձայն տվին շատերը:

Աշխատանքն սկսվեց:

Աշտի ողակը մրցման հրավիրեց Թամարի ողալին, Սարգսինը՝ Ղեվոնդի, Մակարինը՝ Շուշիկի:

Մեծահասակներից յետ չեյինք մնում: Յերգն ու ծիծաղն անպակաս եր: Բամբակի ծանրացած թփերը կարծես դեմ էյին անում մեզ իրենց սպիտակ քուլաները, վոր մենք պոկենք ու իրենք թեթեւանան իրենց փափուկ բռնից:

Տասնյակ սայլեր ճռնչալով մոտենում էյին դաշտերին, բռնավորվում ու բամբակը դեպի ընդունման կայանը տանում:

— Հերի՛ք ե, բալիկնե՛ր, — կեսորից հետո ձայն տվեց նախագահը, — կոլտնտեսության կողմից շնորհակալություն եմ հայտնում ձեզ, ձեր կատարած աշխատանքի համար:

Լվացվեցինք, շարք կանգնեցինք:

— Քայլո՛վ... մա՛րչ, — ձայնեց Գուրգենը: Մենք ճանապարհվեցինք դեպի գյուղ:

Հ Ա Ր Ց Ե Ր.

1. Բամբակն ի՞նչ նշանակություն ունի մեր յերկրի համար:

2. Ի՞նչ նպատակով ողակներն իրար մրցման էյին հրավիրում:

3. Բերքահավաքին ոգնելն ինչո՞ւ սոցիալիստական շինարարության աշխատանք է համարվում:

26. ԿՈԼԵԿՏԻՎ ԱՇԽԱՏԱՆՔ

Կոլեկտիվն իր արտերը հնձում եր: Հատկերը հեվալով փռվում էյին:

Կոլեկտիվի նախագահ Ալեքսանը հագել եր իր հին

բանվորական բլուզը: Յեռանդով ցած էր փռում հասկերը: Կոլեկտիվի անդամները նույնպես աշխուժով հնձում եյին:

Յերեսներն ողնում եյին նրանց: Հայրերը նայում եյին յերեսներին և ուրախանում:

— Ապրե՛ք, յերեսե՛ք: Ես ձեր հայն ե: Հողից վուսկի յենք հնձում: Մեծ ու փոքր իրար ողնենք:

Մոտիկ կալերից դալիս եյին կոլեկտիվի աշխատանքներին նայելու:

— Ոհա՛ն, — ասաց Պողոսն իր հարեւանին, — տեսնո՞ւմ ես՝ կոլեկտիվն ինչ մեծ ուժ ե:

— Հա՛, Պողո՛ս ապեր, — պատասխանեց Ոհանը. — «Մի ձեռքը ծափ չի տա»»: Արի՛ մենք եւ մտնենք կոլեկտիվի մեջ:

— Մտնե՛նք, մտնե՛նք, — ձայնակցեցին մյուս գյուղացիները:

Կուլակ Պասուշը նոթերը կիտած նայում էր: Շըրթունքները կրծելով նա մտածում էր:

Դժվար չէր գուշակել, թե ի՞նչ չար մտքեր եյին անցնում նրա գլխով այդ բոպեյին:

Հ Ա Ր Ց Ե Ր.

1. Ի՞նչ ողուտներ ունի կոլեկտիվ աշխատանքը:

27. ՏՐԱԿՏՈՐԻ ՅԵՐԳԸ

Հե՛յ ջա՛ն, ախպեր, սողալատ ախպեր,
Դե չո՛ւտ արի, դալդ բարի.
Տրակտո՛ր ջան, մեր նո՛ր ընկեր,
Քեզ փեղքե՛չ և հանդը գյուղի:

Մեր սրտի հույս, մեր աչքի լույս,
Բեր ճակատդ կարմիր կապենք.
Ման յեկ գյուղում, յերթդ անուշ,
Գութան ու չութ թող դարդոտվեն:

Դու վոր մերն ես, ել ի՞նչ կուլակ,
Ել ի՞նչ զորրա մեզ կնեղի.
Սարքը վրան տառը գութան՝
Վոչինչ բան են քո առաջին:

Հ Ա Ր Ց Ե Ր.

1. Ինչո՞ւ «գութան ու չութ դարդոտվեն»:
2. Տրակտորն ի՞նչ առավելություններ ունի:
3. Բոլո՞ր տեղերում տրակտոր կարելի չի բանեցնել:
4. Ինչո՞ւ աշխատավոր գյուղացին տրակտորի համար ասում է՝ «ախպեր, ընկեր»:
5. Ինչո՞ւ անհատ տնտեսության մեջ հնարավոր չէ տրակտորի դործածությունը:

«Դալդ բարի», «Բեր ճակատդ կարմիր կապենք», «Յերթդ անուշ»:

Բացատրեցե՛ք զալդ, ֆախադ, յերթդ բառերի վերջում դըրված դ-ի նշանակությունը. ինչո՞վ կարելի չի փոխարինել:
Նույն ձեվով բացատրեցե՛ք դերքս, մատխտս, թանաքս բառերի վերջում դրված ս-ի նշանակությունը:

28. ԲՈՒՔՍԻՐԱՅԻՆ ՀՈԿՏԵՄԲԵՐԻԿՆԵՐ

1.

Ալլահվերդի մտնելիս աչքի յե ընկնում կլոր, ժամացույցի նման յերկու սլաքներով, տեմպերի արագությունը ցույց տվող տախտակը:

2.

Մի սլաքը ցույց է տալիս ամիսը, մյուսը՝ պլաններն տոկոսը:

«Միշտ պատրաստ» հոկտեմբերիկներին ողակր պա-
րապմունքի յեր: Հետո ժողով կայացավ:

— Պլանները մնում են յետ:

— Մենք պե՛տք ե ոգնենք հարվածայիններին:

— Պե՛տք ե ոգնենք:

Յեւ հոկտեմբերիկներին ձեռքերը բարձրացան վե-
րեւ:

3.

Պղնձի հանքից 100 քայլ հեռավորութեան վրա
լցված են փայտեր:

Այդ փայտերը պետք ե տարվեն հանքը՝ ժայռերին
հենարաններ պատրաստելու համար: Ձին աշխուժով
հանքից դուրս եր բերում հանքաքարը, բանվորները
դատարկում եյին, նորից դատարկ վազոններին լծած
ձին ուղարկում ներս: Մի բանվոր դարսված փայտերը
կրում եր դժերի մոտ, լցնում դժերի վրա կանգնած փա-
զոնը:

Իպրոցից յերեխաները վազում են ոգնելու նրան:
Փայտերը ծանր են:

Ամեն մեկը մի ծայրից բռնում ե տանում ե դեպի
վազոնը: Յերեխաների յեռանդը կրկնապատկվում ե.
փայտերը տեղափոխում են յերգելով:

Յերկու վազոն լիքը փայտերով՝ պատրաստ ե:
Բանվորը սիրալիք նայում ե իրեն ոգնող փոքրիկներին:

— Ե՛լի աշխատանք տվեք, — գիմեցին յերեխա-
ները:

4.

Այս անգամ յերեխաները պատգարակներով հոգ են
կրում, հոգաթումբն են քանդում, վոր բանվորների
աշխատանքի վայրը լայնանա:

— Մենք ոգնեցինք հարվածայիններին, վոր նրանք
կատարեն պղնձի պլանները, — հպարտութեամբ ասաց
Վանիկը:

— Ոգնեցինք մեր յերկրին, — բացականչեց Արտիկը:

5.

Մի արեւ վոր հոկտեմբերիկներին ողակը տեմպերը
ցույց տվող սլաքների մոտով անցնում եր դեպի ա-
կումբ:

Պլանը ցույց տվող սլաքը 90-ի վրայից տեղափոխ-
վել եր 95-ի վրա:

— Ընկերներ՛ր, ընկերներ՛ր, այս ամիս 5 տոկոսով ա-
ռաջ են անցել պլանները, — բացականչեց Վանիկը, ցույց
տալով սլաքները:

— Այդ 5 տոկոսի համար մենք ել ենք աշխատել, —
ասաց Ջարիկը:

Յերեխաները հիշեցին իրենց աշխատանքը:

— «Մենք փոքրիկ հարվածայիններս կուվում ենք
պղնձի պլանների համար»:

Յերեխաները յերգում եյին.

— Դե առա՛ջ, ի՛մ չախայոր ընկերներ, նետվում
ենք մարտը պղնձի...

2 վազոն, 5 տոկոս. այստեղ 2-ը ե 5-ը ցույց են տալիս վա-
զոնի ե տոկոսի (դոյական անուններ) քանակը: Իսկ՝ առաջին,
յերկրորդ, յերրորդ ե ուրիշ նման քառեր դոյական անվան վրա
դրվելով՝ ցույց են տալիս առարկայի դասավորման կարգը:
Քանակ ե դասավորման կարգ ցույց տվող միջանի որինակ-
ներ ասացե՛ք:

29. ՀՆՁԻ ՑԵՐԳԸ

Թող մեքենան արագ հնձի,
Դիղենք, դիղենք — խուրճը — խուրճի,
Արա՛դ չարժեք, արա՛դ չարժեք,
Չվախենաք, սրտով յեղեք.
Խուրճեր դիղենք մեր ձեռքով քաջ:
Մեկը հետեւ, մեկը առաջ,
Մեկ ե՛լ չարժեք, մեկ ե՛լ չարժեք:

Առատ բերք ե, սրտով յեղե՛ք.
 Բանի՛, բանի՛, ի՛մ ընկեր ջան...
 Մեզ ես ոգնում, պիտեն՛ը ջան...
 Սիրով բանենք աղջիկ, աղա,
 Թող դուշմանի աչքը դուրս դա:
 Արի՛, արի՛, ի՛մ ընկեր ջան,
 Բանի՛, բանի՛, ի՛մ ախպեր ջան...
 Արան ենք հնձում մեր կոխողի՛,
 Մեր անկումը զորքան կուզի:
 Կոլխոզ արտին մենք ծիծաղ տանք,
 Չորբի սրտին խորը դաղ տանք...
 Թո՛ղ մեքենան արագ հնձի,
 Դիզե՛նք, դիզե՛նք—խուրձը—խուրձի:

Հ Ա Ր Ց Ե Ր.

1. Ո՞վ ե կոլխոզի «դուշմանը». ինչո՞ւ:
2. Դուք ել ոգնո՞ւմ եք կոլխոզի աշխատանքին. ինչո՞ւ:

Դիտեցե՛ք հետևյալ խոսքերի ուղղագրությանը.

1. Արա՛դ չարժեք, արա՛դ չարժեք...
2. Մեկ ե՛լ չարժվեք...
3. Բանի՛, բանի՛, ի՛մ ընկեր...
4. Արի՛, արի՛, ի՛մ ախպեր...

Ցեղիկար արտասանվող բառերի վրա յերկար նշան (') ե դրվում (արա՛դ) չարժեք):

Շեշտված, ուժեղ արտասանվող և հրաման արտահայտող բառերի վրա չեշտ (') ե դրվում (մեկ ե՛լ... բանի՛, արի՛... ի՛մ ախպեր...):

30. ՈԳՆՈՒԹՅՈՒՆ

Խմբակային ընդհանուր ժողովում վորոշեցինք
 գնալ մեր յենթաշեփ գյուղը՝ կոլխոզի բամբակի չանա-
 քին ոգնելու:

Յերեք որից հետո մենք պետք ե մեկնեյինք գյուղ:

Բո՛րս ել ուրախ եյինք և վոգեվորված:
 Այդ յերեք որում մենք գրքեր, պիտույքներ, պլա-
 կատներ ու խաղալիքներ գնեցինք գյուղի հոկտեմբե-
 րիկների, պիտներների և խրճիթ—ընթերցարանի հա-
 մար:

Վորոշված որը հասավ:
 Ճիշտ ժամին բոլորս ներկա եյինք:
 Մենք շատ ուրախ եյինք, իսկ մեր դեկավար Լուսի-
 կի ուրախությանը չափ չկար:
 Նախորոք բաժանվել եյինք ողակների, ընտրել ո-
 ղակավարներ և վորոշել, թե ամեն մեկն ի՛նչ պետք ե
 անի և ի՛նչ խնդիրներով դբադվի:

Շարքերը պատրաստ եյին:
 Մենք բարձր յերգելով առաջ չարժվեցինք: Մեզ
 ճանապարհ դրին բարձր, խմբի աչակերտները և միշտ
 կրկնում եյին.—«Տեսնե՛նք, ի՞նչպես կվերադառնանք»:
 Կանոնավոր դուրս յեկանք քաղաքից և ընկանք լայ-
 նարձակ դաշտը:

Դեռ գյուղ չմտած, մեզ պատահեցին միջանի յե-
 րեսաներ. նայեցին, նայեցին, յետ դարձան ու պո՛ւկ...
 Կարծում եյինք՝ վախեցան—վախան ու ել յետ չեն
 դա:

Բայց մեծ յեղալ մեր դարմանքը, յերբ գյուղ մը-
 տանք և մեզ դիմավորեց գյուղի յերեսաների խումբը:
 Հետո իմացանք, վոր տեսնող—վախչողները գնա-
 ցել են, մեր դալու մասին հայտնել մյուսներին:

2.

Առավոտյան շատ վաղ վոտքի վրա եյինք: Գյուղի
 պիտներներն իմացել եյին մեր գյուղ դալու նպատակը
 և վորոշել եյին՝ մեզ հետ միասին դուրս դալ աշխատան-
 քի:

Գնացիները դեպի աշխատանքի վայրը:

Հասանք բամբակի դաշտերին:

Ինչքան սիրուն էյին այս դաշտերը. անսահման տարածությամբ փռված, ձյունի նման սպիտակ բամբակ հագած:

Կոլխոզնիկներն իրենց վաշտով պատրաստ էյին և իսկույն անցան աշխատանքի:

Նախքան մեր աշխատանքի անցնելը, մոտեցավ կոլխոզնիկ պապաչան ու բացատրեց մեզ, թե ինչպես պետք է չանաքել բամբակը և միևնույն ժամանակ տեսակավորել:

Բամբակը ցանված եր շարքացանով և այդպես սիրուն շարքերով աճել եր:

Ամեն մեկս ընկավ մի շարք: Ա՛յ, իսկապես մրցման տեղ, թե ով լավ ու արագ կհավաքի:

Կոլխոզնիկներին սովորեցրինք չանաքի սիրուն յերդը և միասին սկսեցինք յերգել:

Ընկեր Լուսիկը գնում եր ամենից առաջ:

Յեկավ հանգստի ժամը:

Կոլխոզնիկներին հետ միասին նստեցինք ճաշի:

Հարցեր եր, վոր տալիս էյինք միմյանց:

Հ Ա Ր Յ Ե Ր.

1. Ի՞նչ է նշանակում մի գյուղի շնորհակալություն վերցնել:

2. Ինչո՞ւ քաղաքից բրիգադներ են գնում գյուղ բերքահավաքի:

3. Սառ՞ջ ել նման բրիգադներ քաղաքից գնո՞ւմ էյին գյուղ ողնելու գյուղացիներին. յեթե վո՞չ ինչո՞ւ:

Ի՞նչպե՞ս շարք բառի փոփոխումը հետևյալ խոսքերի մեջ:

1. Մի շարք առաջ անցավ:

Մեր մոտով շարքեր անցան:

2. Մենք հանդիպեցինք մի շարքի:

Մենք հանդիպեցինք շարքերի:

3. Հուսիկը դուրս յեկավ շարքից:

Մենք հեռացանք շարքերից:

4. Մենք շարժվեցինք շարքով:

Նրանք անցան շարքերով:

5. Մենք կանգնած էյինք շարքում:

Նրանք կանգնած էյին շարքերում:

Գոյականները փոփոխվում են թվով և վերջավորությամբ:

Յերիու թիվ կա—յեզակի և հոգնակի: Յեզակին ցույց է տալիս մի առարկա (քար, ծառ, մարդ) կամ առարկաների մի խումբ (անտառ, ժողովուրդ, գործ): Հոգնակին ցույց է տալիս մեկից ավելի առարկա կամ առարկաների խմբեր (քարեր, ծառեր, անտառներ, ժողովուրդներ):

Ամեն մի գոյական փոփոխվելով՝ հինգ ձև է ունենում— որինակ՝ շարք, շարքի, շարքից, շարքով շարքում:

Նույն ձևով փոփոխեցե՛ք մի քանի գոյականներ:

31. ՄԵՖԵՆԱՅԻ ԲԺԻՇԿՆԵՐԸ

— Բարե՛վ ընկերներին:

— Ա՛յ բա՛րե՛վ, բա՛րե՛վ, բա՛րե՛վ,—ամեն կողմից ձայն տվին գյուղացիները:

— Բրիգադ կլինե՞ք, բանվոր ախպերներ, ձեր դալուստը բարի, վո՞ր քաղաքից եք,—գլմելով նրանց սաց Ալեք բիճեն:

— Մենք, հա՛յրիկ, Բազմի բանվորներից ենք, յեկել ենք Հայաստան՝ մասնակցելու կոլեկտիվացման և գարնանացանի աշխատանքներին:

Աշխատում ենք գյուղերում, հիմա ել յեկել ենք ձեր գյուղը. ի՞նչ եք արել և ի՞նչ ե մնում անելու,—պատմեցե՛ք:

Բանվորներն ուշադրությամբ լսեցին տեղի ընկերների պատմածը, կոլեկտիվացման և գարնանացանի նախապատրաստական աշխատանքների մասին:

— Դե՛հ, ընկերներ՛, քանի ուշ է՝ դեպի գո՛րծ, —
ասացին բանվորներն ու գործի կալան:

Գյուղն աշխուժացավ:

Բանվորների սեւ բազուկներն առի ճոճապանն ու
զընգզընգացին գյուղատնտեսական մեքենաներն ու գոր-
ծիքները: Գյուղում հնչեց պողպատի ձայնը: Գյուղա-
ցիները նոր շունչ առան. ուժերը կրկնապատկեցին:

Յեղանակն ել եր ժպտում նոր գյուղի աշխատան-
քին: Կարծես իսկի անցյալ տարիների փետրվարը չլի-
ներ:

Ե՛լ ջարդված գութան ու տրակտոր, ե՛լ քամհար
ու կալսիչ, տրիեր, քանդված անիվներ ու սայլեր, շաբ-
աքան ու նրա մասերը, ե՛լ փոցիս, բահ ու թի չմնաց,
խոնավ անկյուններից արևի յերես դուրս յեկան:

«Հիվանդ» գործիքները ջոկում են, բաժանում ծանր
ու թեթեւ հիվանդները:

— Դե՛հ, տղերք ջան, դուք ել պարապ մի՛ կանգ-
նեք, ժամանակը թռչում ե, մեզ նման աշխատել սովոր-
եք, ել մի սպասեք, — ասաց բանվոր Հուսեյինը, իր
ձեռքի մուրճով ցույց տալով մոտը պարապ կանգնած
նոր կոլտնտեսականներին:

— Ընկերներ՛, ձեր թեւերին դուրբա՛ն, դուք հա-
զա՛ր բարով յեկաք, — ասաց Սոնա տատը: — Եդ մեր խել-
քի բանը չեր, վոր դուք եք անում: Ես կոլեկտիվը վոր
կա, մերն ել ե, ձերն ել. մեզ ել սովորեցրեք, մի բան ել
մենք անենք... հո թամաշա չենք յեկել

— Շատ ուրախ ենք, մայրի՛կ ջան, իհարկե, մեր
բոլորինն ե, դուք ել անելու գործ ունեք. ա՛յ, ես ըն-
կերը հայերեն լավ կբացատրի ձեզ, թե դուք ինչ մասե-
րի վրա պիտի աշխատեք, անցեք նրա մոտ, ձեզ ամեն
անելիք ցույց կտա:

— Ընկե՛ր բրիգադ, — վրա հասավ միջակ գյուղացի

կոլխոզնիկ Նավոն, — ախր ես իմ սեղն ա, նայում եմ՝
փոխվել ա, ես սունին իմը չի, իմը հին եր ու կարճ, բա
ի՞նչ յեղավ իմ սունին:

— Ել քոնը չկա՛, ընկե՛ր ջան, դու կոլխոզնիկ ես,
դու քո գործիքները պիտի չջոկես ընդհանուրից: Սա ինչ
բան ե, վոր սրանից ես կպել. շուտով սելի տեղ ավտո-
մոբիլ կբանեցնենք, ու ել ես չախչախ սելը չես տեսնի:

Ձեռքը Նավոյի ուսին դրած ժպտալով պատասխա-
նեց բանվոր Անդրեյը:

Հ Ա Ր Ց Ե Ր.

1. Բանվորական բրիգադն ինչո՞ւ հատկապես դարձանացանք
որերին դյուղ գնաց:

2. Բրիգադն ի՞նչ ոգուտ ավեց կոլտնտեսության և նրա ան-
դամներին:

« Բաղաքի բանվորությունն ե՛լ ինչ ձեւերով ե ոգնում
դյուղին — կոլտնտեսությանը »:

4. Ձեր դպրոցն ինչո՞վ ե ոգնել դարձանացանին:

Դիտեցե՛ք, թե ինչպես պետք ե դրենք, յերբ մեկին ձայն ենք
տալիս, կոչում ենք սրինալ՝ «Մայրի՛կ ջան, շատ ուրախ ենք».
«Ընկե՛ր, բրիգադ, ախր ես իմ սեղն ա».
«Ընկե՛ր, դու կոլխոզնիկ ես» և այլն: Ուշք դարձրեք ստորակետերին և շեշտերին:

32. ՁՈՐԱԳԵՍ

Թունենե՛րը զընդում են

Դինամիտի պայթյուններից:

Լեռ ժայռերը խորտակվում են

Պողպատ մուրճի հարվածներից:

Ձորազտեն ե հոխորտալեն

Դալիս, անցնում խոր ձորերով:

Ապառաժներ քանդում անվերջ

Իր կատաղած ալիքներով:

Բայց չի անցնի եւ անողում,
Վաղը կհորդի մեծ թունելով,
Իր կատաղած ալիքներով
Դինամոններ կըսպասի:

Ու կալարտիի հիդրոշենը,
Տուրբինները կորոտան,
Հոռվա խաւար մութ ձորերում
Նոր արեւներ կըծպտան:

Հ Ա Ր Յ Ե Ր.

1. Ի՞նչ նշանակութիւն ունի ելեքտրիֆիկացիան մեր յեր-
կրում սոցիալիզմ կառուցելու համար:

2. Ի՞նչպէս ենք ոգտագործում ջրի ուժը:

3. Ի՞նչպէս եւ աշխատանքը հաղթահարում բնության ու-
ժերը:

4. Ի՞նչ եւ ասել լենինը ելեքտրիֆիկացիայի մասին:

Դիտեցե՛ք հետեյալ բառերի յեղակին եւ հոգնակին.
Յեղակի Հոգնակի

- | | |
|----------|---------|
| 1. Ժայռ | Ժայռեր |
| 2. մուրճ | մուրճեր |
| 3. ձոր | ձորեր |
| 4. ջուր | ջրեր |
| 5. հող | հողեր |

Յեղակի Հոգնակի

- | | |
|------------|------------|
| 1. պողպատ | պողպատներ |
| 2. ապառաժ | ապառաժներ |
| 3. ալիք | ալիքներ |
| 4. դինամո | դինամոներ |
| 5. դինամիտ | դինամիտներ |

Ասացե՛ք՝ ինչպե՞ս ենք յեղակի դոյականից հոգնակի կաղ-
մում: Յերբ ենք ալիքացնում եր ե յերբ՝ ներ:

33. ԲԱՄԲԱԿԻ ԱՐՏՈՒՄ

Արեւին իր պայծառ ճառագայթներով վողողել եր
բամբակի լայն դաշտերը: Ամենուրեք տարածվել էյին
ձյան նման սպիտակին տվող բամբակի բացված ար-
տերը, վորոնց մեջ տեղ-տեղ, աշխուժ ու ժիր, սպիտակ
լաչակներ կապած, աշխատում էյին կանայք. կային եւ
տղամարդիկ:

— Սրանք Աղջարի գյուղի կոլտնտեսության բամ-
բակի արտերն են, իսկ դաշտում կառուցվող այն շէն-
քերն եւ կոլտնտեսականների նորակառույց բնակարան-
ները պետք ե լինեն,—ասաց ուղեկիցս:

— Ուրեմն այս գյուղն արդեն համատարած ե,—
հարցրի յես:

— Այո՛, համատարած ե, եւ վոչ միայն այս գյու-
ղը, այլեւ Ղուրգուղուլու ամբողջ շրջանը,—պատաս-
խանց ուղեկիցս:

— Ահա ե պիտներական կոլեկտիվի բամբակի ար-
տը,—ձեռքը մեկնելով՝ ուղեկիցս ցույց տվեց սպիտա-
կին տվող արտը:

Արտի ծայրում յերեւում էյին աշխատող պիտներ-
ները: Մենք անցանք նրանց մոտ:

— Վա՛, հարո՛ւթ, դուք դեռ հալաքո՞ւմ եք,—հեռ-
վից հարցրեց ընկերս:

— Այո՛, ընկե՛ր Համո, մենք սոցմրցման ենք կան-
գել հարեվան գյուղի պիտներ կոլեկտիվին: Մեր պիտ-
ներներն իրենց հայտարարել են հարվածային: Մեր
քաղը վերջացնելուց հետո պետք ե ոգնենք կոլտնտե-
սության:

— Դե՛, հիմա լո՛ւի՛ր, Հարո՛ւթ: Այս ընկերը յեկել
ե կենտրոնից ե ուզում ե իմանալ, թե ի՞նչպէս եք կա-
տարել ձեր բամբակի ցանքը: Դե՛, հիմա արի՛ ու ծա-
նոթացրո՛ւ:

Մենք նստեցինք քարակույտի վրա և Հարութն սկսեց պատմել:

— Չնայած մեր արտի հողն այնքան ել պարարտ չէր, սակայն ապրիլ ամսի սկզբին տրակտորը գցեցինք մեջը, ու սկսեց դոգռալով աշխտել: Մենք ել կոլեկտիվով սկսեցինք փոցխել և անպետք խոտերը հավաքել: Գարնանային անձրևներն ել լավ փափկացրին հողը: Մի գեղեցիկ ուր, առավոտյան շարքացանք բերել տվինք և սկսեցինք սերմը ցանել ու մարգեր պատրաստել, խնկ պիտներն էր մի մասը վաղուց արդեն բահերն ուսել եր, վոր մարգեր պատրաստելուց հետո ջուրը բաց թողնի արտի վրա:

15 որից հետո մեր արտն սկսեց ծլել:

Վրա հասավ առաջին քաղհանը: Մենք կոլեկտիվով բաժանվեցինք յերկու բրիգադի, կնքեցինք սոցմբջման պայմանագիր, մեզ հայտարարեցինք հարվածային և ամեն անգամ հաջող կատարեցինք քաղհանը: Շնորհիվ մեր հարվածայնության, մեր բամբակի արտը դյուղում առաջին տեղն է դրավում: Բոլոր կոլտնտեսականները գովում են մեզ, մեր սեփական ձեռքերով կատարած այս որինակելի գործի համար:

Հիմա սկսել ենք բերքահավաքը, վորի մի մասը հանձնելու յենք մեջ պետությանը:

Հ Ա Ր Ց Ե Ր.

1. Ինչպիսի յերկրում է բամբակ աճում:
2. Ինչպիսի խնամք է հարկավոր բամբակի մշակման համար:
3. Բամբակն ինչ նշանակություն ունի մեր յերկրի համար:
4. Ինչո՞ւ պիտներների արտը առաջին տեղն է բռնում դյուղում:

34. ՏԻՐԱՊԵՏԻՐ ՏԵԽՆԻԿԱՅԻՆ

Փոքրիկ Կարենը գիշերն անկողնում
Պտույտ եր գալիս, չէր կարում քնի.
«Տունը քանդեցին, հիմա այն կողմում
Տրամվայը կանգնի, ինչ լավ կլինի»:

Անկողնից յելավ առավոտը վաղ,
Վիլիկենց, Թոգենց դռներն է թակում.
— Յեկե՛ք, խա՛ղ խաղանք, ինժեների խաղ,
Տրամվայ անցկացնենք քանդած տան բակում:

Բերին փայտիկներ, թելեր ու մուրճեր,
Քլունդ, բահիկներ, սայլիկներ ճռռան.
«Ինժեներ» Կարենն անսահման լուրջ է,
Մտորում է խոր ու զցում սլան:

Քլունդն է փորում, բահը հող թափում,
Սայլիկներն արագ գնում են, գալիս.
«Տեխնիկ» Վիլիկն ել լարում է, չափում
Սրան ու նրան հրամաններ տալիս...

... Գիծը պատրաստ է, թելերը լարած,
Կիմիկն ել բերեց տրամվայն իր՝ սուրա՛...
Ձընդդընդում ե՛ գը՛նդ, սըլանում առաջ,
Հաղթանակի ծա՛փ, խնդո՛ւմ, կանչ՝ ու—ոս՛...
— Խելո՛ք բալիկներ, մեծացե՛ք, դարձե՛ք

Տեխնիկ, ինժեներ մեր յերկրի համար.
Վնասարարներին ուժգին հարվածե՛ք,
Յե՛վ տեխնիկային տիրեցե՛ք համառ:

Հ Ա Ր Ց Ե Ր.

1. Ինչ նշանակություն ունի տեխնիկան ժողովրդական տնտեսության մեջ:
2. Ինչո՞ւ սոցիալիզմի շինարարության ժամանակ բոլորը պիտի տիրապետեն տեխնիկային:

3. Վնասարարներն ո՞վքեր են և ինչո՞ւ յեն վնասարարութիւն անում:

Վիւրկենք, Վիւրկենց, Վիւրկենցից, Վիւրկենցով:
Նման գոյականներ գտե՛ք և տվե՛ք նույն վերջավորութիւններ:

Դիտեցեք այս հոգւածի հետևյալ բառերի ուղղագրութիւնը—ղը՛նդ, ոււա՛ւ:

Այսպիսի բառեր են—ե՛յ, ե՛յ, ա՛խ, վա՛յ, տո՛, ամա՛ն, արիստո՛ս, ո՛հ, ո՛ւհ, լը՛շշ, թը՛թիկ և այլն:

Խոսքի մեջ այն բառերը, վորոնք չեն փոփոխւում և զգացմունք կամ վորեւէ ձայնի նմանութիւն են արտահայտում, կոչւում են ձայնարկութիւններ, արտասանւում են չեղոված կամ յերկար, այդ պատճառով այդ բառերի վրա չեղոված կամ յերկար (') , կամ յերկար (') : Որինակ՝ զընդ-դըվում ե կամ չեղտ (') , կամ յերկար (') : Որինակ՝ զընդ-դըվում ե՛ կընդ... ե՛յ, դնա՛ տուն... վա՛յ, ի՞նչ արիւր... ամա՛ն, ծառը կտորվեց... լը՛շշ, լսւում եր առի՛ ձայնը:

Ձայնարկութիւններից հետո, յեթե այդ բառերը խոսքի սկիզբն են ընկնում, ստորակետ ե դրւում (ե՛յ, դնա՛ տուն) . յեթե խոսքի մեջտեղն են ընկնում, յերկու կողմից առնւում են ստորակետերի մեջ (այդ դերձը, ո՛, շատ լավ դերձ ե) : Իսկ յեթե խոսքի վերջն են ընկնում, սկզբից ստորակետ ե դրւում, վերջից ել այնպիսի մի կետ, վոր համապատասխանում ե շարունակութիւն (այդ ի՞նչ արիւր, տո՛) :

35. ՄԵՐ ԱՐԱԾԸ

Մի շոգ ուր եր: Ճիշտ ե, սարերից փչող սառը քամին հովացնում եր ողը և հասած արտերն ալիք-ալիք որորւում եյին, բայց և այնպէս ամառն իրեն զգացնել եր տալիս և աշխատողները քրտինքով վողողւում եյին:

Գյուղից դուրս, կոլտնտեսութիւն մեծ գոմի ծայրից ընչ հեռու հավաքւել եյին 10—11 տարեկան 8 պիո-

ներներ և աշխուժով դործի եյին անցել—սիւսի փոս եյին փորում:

Կոլտնտեսութիւն նախագահը և վարչութիւնը խոստացել եյին կոլտնտեսութիւն ամենալավ կովերից յերկուսն — իրենց հորթերով — տալ պիտներներին ու գալոցին, պոլիտեխնիկ պարապմունքների համար: Ու այժմ կովար Վահանի ղեկավարութիւնը կոլտնտեսութիւն անդամ պիտներներն այդ կովերի ու հորթերի համար սիւսի փոս եյին փորում:

— Դե՛, Անահիտ, դուք աղջիկներդ հողը հեռու կրեցե՛ք, — կարգադրում եր Վահանը:

— Գյուղատնտեսն ասաց:

— Ընկեր Մադոյանը, — մեջ ընկավ չարածճի Աղասին:

— Հա ե՛լի, — բարկացավ Վահանը, — կեսօրին կզամեր փոսը տեսնելու և կողնի, վոր մեր սիւսը շատ լավ լինի:

— Դե վոր եղպես ե, ել կանգնել չի՛ կարելի, աշխատենք, — ճչաց ծուռ ըթով Ալեքը:

Փափուկ սեւ հողը նրանց բահերի տակ հեշտ եր փորւում, և մատաղ վոտերը չեյին հոգնում:

Այդ միջոցին գյուղից դուրս յեկան չորս ուրիշ պիոներներ և հասնելով դրանց՝ պիտներական բարեւով տվին:

— Եդ ո՞ւր եք գնում, — հարցրեց Վահանը:

— Գնում ենք ձորը, — պատասխանեց Վանին, — լո-

ղանալու:

— Համ ել սիմինդը քաղելու, — վրա տվեց արագախոս Դանիելը:

— Բա եսպես լավ, աշխատանքի ուրը, եղպես պարապ ման կգ՞ան, — ասաց Ալեքը:

— Դե՛ ի՞նչ անենք, մեր ծնողները չեն հասկանում,

վոր ետպես որերին պարապ ման գալ չի կարելի, կիրակի
յնն պահում, մենք ել աշխատանքից ազատ ենք:

— Ի՞նչ անե՞ք, ա՛յ, յեկե՛ք մեզ ոգնեցե՛ք, — խոսեց
Անահիտը, լուրջ արտահայտություն տալով իր պսալը—
դուն աչքերին, — չե՞ վոր ասում եք, թե դուք ել եք կոլ-
տնտեսություն մտնելու, ուրեմն ես սիրտսն ուտող կո-
վերը ձերն ել են լինելու:

— Ճիշտ ե, բայց... կմկմաց Դանիելը:

— Մի բան ել կա, — ծուռ քիթը վեր քաշելով շա-
րունակեց Ալեքը, ախար ես կովերն ու հորթերը դպրո-
ցինը պետք ե լինեն, ուրեմն ե ձերը, քանի վոր դուք ել
աշակերտներ եք:

— Վա՛, դրուստ ե, — խոսեց Վահանը:

— Բա ի՞նչ անենք, — ասաց կարմրած Վանին:

— Յես ասեմ — վտվտացրեց Դանիելը, — դուք սրանց
հետ աշխատեցե՛ք, յես ու Աշխենը դնանք ուրիշներին ել
կանչենք. — ու Աշխենի հետ թռավ գյուղամեջ:

Յսան բոպեյից հետո սիլոսի փոս փորող յերեսա-
ների խումբը հասել եր 34 հոգու: Վահանի խելացի
կարգադրությամբ բոլորին ել դործ կար, ամենքն ել
աշխատում եյին:

— Գործավարձ ա հա՛, լողրերին չենք դրի, — կա-
տակում եր Ալեքը:

— Յես կարմիր տախտակին պիտի գրվեմ, — գո-
ռում եր հաստագլուխ Բադալը:

Այսպես աղմուկով ու կատակով նրանք բավական
մեծ փոս փորեցին, ու յերբ յերեկոյան դեմ գյուղատըն-
տեսն յեկավ, չատ հավանեց նրանց աշխատանքն ու
խոստացավ նրանց սիլոսը դնելուն անձամբ մասնակե-
ցել:

Գիտե՞ք, եսոր ինչ արինք, — ասաց ցրվելիս Վա-
հանը, — մեր ուսուցիչ Հայկազը, վոր եստեղ լինեի կա-
սեր՝ մեր արածը սոցիալիզմի շենքի մի քարն ե:

— Իհա՛րկե, իհա՛րկե, — ճղացին յերեսաները ե ու-
րախ ցրվեցին:

Հ Ա Ր Ց Ե Ր.

1. Ինչպես են պատրաստում սիլոսը ե ինչի՞ համար:
2. Սիլոսի մշակումն ինչո՞ւ յե կապված կոլտնտեսութման
և անասնապահության զարգացման հետ:
3. Բացի սիլոսից, ուրիշ ի՞նչ կեր ե տրվում կովերին:
4. Ի՞նչ բան ե գործավարձը (տնտեսչավարկը):
5. Ինչո՞ւ յե Բադալն ասում, «Յես կարմիր տախտակին
պիտի գրվեմ»:

Բացատրեցե՛ք ինչո՞ւ յեն գրված գծերը (-):

36. ԲԱՆՎՈՐԻ ՅԵՐԳԸ

Ձա՛րկ, զա՛րկ, մո՛ւրճ իմ, ուժգի՛ն, ուժգի՛ն,
Յե՛ս ել, դո՛ւ յել հարվածային,
Ամբապնդենք ու պաշտպանենք
Նվաճումներն հոկտեմբերի:
Ու կատարենք հնդամյակը,
Հնդամյակը՝ չորս տարում:
Ձա՛րկ, զա՛րկ, մո՛ւրճ իմ, ուժգի՛ն, ուժգի՛ն,
Յե՛ս ել, դո՛ւ յել հարվածային:

Հ Ա Ր Ց Ե Ր.

1. Ի՞նչ ե հնդամյա տղանը:
2. Ի՞նչ մեծ նվաճումներ ունեցանք առաջին հնդամյակում:
3. Ի՞նչ պետք ե մեզ տա յերկրորդ հնդամյակը:

37. ԱՇԽԱՐՀՈՒՄ ԱՌԱՋԻՆՔ

Հյուսիսային Կովկասը պարծենում ե «Գիդանտ»
խորհանդեսության շինարարներով: Մեքենաները մեծ
գործ կատարեցին — վայրի տավաստանը դարձրին բեր-
քառատ դաշտ:

«Գրիգանտ»-ի բանվորները ցույց տվին, թե ինչպես պետք է աշխատել ու զժվարությունները հաղթել։ Վեց հազար բանվորների ձեռքով ստեղծված է հացահատիկի այնպիսի ֆաբրիկա, վոր աշխարհում ամենից մեծն է։

«Գրիգանտ»-ի հինգ հարյուր կոմունիստների ու կոմյերիտականների ղեկավարությամբ զարգանում ու ամրանում է բայլչեվիկյան խորհրդատեսությունը։

Շատերն են այցելում տեսնելու «Գրիգանտ»-ի աշխատանքները։ Գալիս են նույնիսկ ուրիշ յերկրներից։ Այնտեղ յեկավ ամերիկական գիտնական պրոֆեսոր Վիրսոնը, գիտեց ամեն ինչ ու ասաց։

— Աշխարհս այսպիսի աշխատանք դեռ տեսած չեմ։

«Գրիգանտ»-ի հաճախակի հյուրերն են գյուղացիները՝ մոտիկ ու հեռավոր գյուղերից։ «Գրիգանտ»-ը ոգնում է նրանց թե՛ մեքենաներով և թե՛ բանվորական ուժով։ «Գրիգանտ»-ի բանվորները կառուցում են վոչ միայն իրենց խորհրդատեսությունը, այլև նրանք սովորեցնում են ուրիշներին, թե ինչպես պետք է հողը լավ մշակել։

Բանվորները յերբ արձակուրդ են գնում իրենց գյուղերը, այդտեղ ևս նրանք ոգնում են կառուցելու կոլտնտեսություններ։

Տարեցտարի հսկայական առաջադիմություններ են անում «Գրիգանտ»-ը։

Հ Ա Ր Ց Ե Ր .

1. Ինչո՞ւ շատ այցելողներ է ունենում «Գրիգանտ»-ը։
2. Սոցիալիստական չինարարության համար ի՞նչ նշանակություն ունի «Գրիգանտ»-ը։

38. ԿՈՄԻՍՅՆԸ—«ԴԱՇՏՆԵՐԻ ՆԱՎԸ»

Կար ժամանակ, յերբ Սալսկի տափաստանը նմանում էր հանդիստ, խաղաղ անապատի։ Նախանցյալ ամառ տափաստանի այդ հանգստությունը խանգարեցին 40 կոմբայն, վորոնք սկսեցին աշխատել սովխոզ «Գրիգանտ»-ում հացը հավաքելու ժամանակ։

Ի՞նչ է կոմբայնը։

Կոմբայնը գյուղատնտեսական մի բարդ մեքենա է։ Նա կազմված է մի քանի բոլորովին ինքնուրույն խրճակապ, կալսիչ և զտիչ մեքենաներից։

Կոմբայնը հնձում է արտը, կալում է և ցորենը լցնում պարկերը։ Այս ամենը անում է շարժվելու, զնաւու ժամանակ։

Տրակտորին կպած, նա արագ, շարժվում է դաշտի միջով. նրա կողքին ամրացած է խրճակապի նման մի բան։ Յերկար գերանդիները հնձում են հասկերը, վորոնք հավաքվում են կոմբայնի ներսը։ Այստեղ նրանք ընկնում են բարաբանի տակ։ Ցորենը և հարդը խառնվում են իրար։

Այստեղից հատիկները ընկնում են զտիչ մասը, ապա մաքուր ցորենը թափվում է հատուկ պահեստը։ Այս պահեստը տանում է յերկու տոնն հացահատիկ։ Հարդը բարարանի տակից դուրս գալով, կոնվեյերով հեռավից դուրս է նետվում և դարսվում։

Կոմբայնը ցորենի վոչ մի հատիկ չի կորցնում։

Իայց կոմբայնը փոքրիկ տնտեսության մեջ չի կարող աշխատել. նա խոշոր մեքենա յե և անհարմար՝ աշխատելու փոքրիկ հողամասերի վրա։ Միայն կոլտնտեսության դաշտերում կարող է պետք գալ կոմբայնը։

Մեզ անհրաժեշտ են կոմբայններ, մանավանդ, յերբ մեզ մոտ համատարած կոլեկտիվացում է։

Յեւ ահա կառավարութեան վորդամար՝ Ռաստո-
վում կառուցվում է կոմբայնի հսկա գործարանը, Սել-
մաչի հսկայական ցեխը, վորը տարեկան պիտի տա 25
հազար կոմբայն, 100 միլիոն ռուբլու արժողութեամբ:

Հ Ա Ր Ց Ե Ր.

1. Ինչո՞ւ փոքր տնտեսութեանների համար անհարմար է
կոմբայնը:

2. Ե՞նչ գործիք կամ մեքենա գիտես, վոր անհարմար է
փոքր տնտեսութեանների համար:

3. Կարողանո՞ւմ ես պատկերացնել «Դիզանտ» սովխոզի մե-
ծութեանը:

39. ՀԵՐՈՍ ՊԻՈՆԵՐԸ

Պիոներ Ռուբիկին հանձնարարել էյին մինչև առա-
վոտյան ժամի 10-ը արտագրել և փակցնել «Կարմիր
կոլխոզ» պատի թերթը:

Դիչերվա ժամի 11-ին նա դործը վերջացրեց, ա-
կումբի դուռը փակեց և շտպեց տուն՝ ջնելու:

Յերկնքում փայլում էյին աստղերը: Քամին խա-
ղացնում էր Ռուբիկի կարմիր փողկապը:

Հանկարծ Ռուբիկը կանգ առավ:

Կոլխոզի դռան մոտ մի մարդ էր կանգնած:

Ռուբիկը ճանաչեց—կուլակ Բարսեղն էր:

Ահա մի մարդ էլ տանիքի խոտի դիզի մոտ:

Հանկարծ մի փոքրիկ լույս յերեվաց, և դիզից
սկսեց ծուխ բարձրանալ:

Ռուբիկը սարսափած սկսեց դռալ:

Հե՛յ, կոլխոզնիկնե՛ր, կոմսոմոլիստնե՛ր, հասե՛ք,
հասե՛ք, կուլակները կոլխոզի դեզն այրում են...

Բայց այդ բոպեյին մե դաշույն ցցվեք Բուսեկի
կրծքի մեջ...

Շուտով գյուղից յեկան, կրակը հանգրին և կու-
լակներին բռնեցին, տարան դատելու:

Մյուս ուր կոլխոզի բակում միտինգ կար:

Հավաքվել էյին կոմյերխտականները, կոլխոզնիկ-
ները, պիոներները:

Այստեղ էր նաև վիրավորված Ռուբիկը:

— Ընկերնե՛ր,— խոսեց կոլվարը,— այսօր, յերը
մենք վերացնում ենք կուլակին, վորպես դասակարգ,
նրանք իրենց վերջին կռիւն են մղում մեր դեմ: Թող
կուլակներն իմանան, վոր Ռուբիկի նմանները շատ ու
շատ կան: Խտացնենք մեր շարքերը, ընկերնե՛ր, և ավե-
լի սրենք մեր պայքարը մեռնող դասակարգի դեմ...
Կեցցե՛ մեր հերոս Ռուբիկը:

Մի ամսից հետո Ռուբիկը բոլորովին առողջացավ և
սկսեց ավելի ուժեղ պայքարել կուլակների դեմ:

Հ Ա Ր Ց Ե Ր.

1. Ի՞նչ ձևվերով են կուլակները պայքարում խորհրդային
իշխանութեան, կոլխոզների դեմ:

2. Ինչի՞ հիման վրա մենք ներկայումս վերացնում ենք կու-
լակութեան իրրև դասակարգ:

3. Ինչո՞ւ Ռուբիկին հերոս ենք համարում:

Հողատիր մի կտորը կարգա՝ յեղափոխական անունները
հողնակի դարձնելով:

Ինչպե՞ս կրթմանը բառերը, յի՞ծե դուք ել Ռուբիկի նման
գոռաք:

— Հե՛յ, կոլխոզնիկնե՛ր, կոմսոմոլիստնե՛ր, հասե՛ք, հա-
սե՛ք, կուլակները կոլխոզի դեզն այրում են:

Հա-սեք, կուլակ, կուլ-խոզ-նիկ-ներ, կոմ-սո-մո-լիստ-ներ:

Այս բառերը գծիկներով բաժանված են վանկերի: Ամեն
մի վանկում կա մի ձայնավոր: Բառն այնքան վանկ կունե-
նա, վորքան ձայնավոր կա նրա մեջ:

Բառը վանկերի բաժանելիս պետք է նկատի առնենանք,

Թե՛ յերկու ձայնավորի միջև քանի՛ բաղաձայն կա: Մի բաղաձայնը միանում է հաջորդ ձայնավորին (ա-նա): յերկու բաղաձայնից մեկը միանում է նախորդին, մյուսը՝ հաջորդին (ապ-րի): յերեք բաղաձայնից յերկուսը միանում են նախորդին, մեկը՝ հաջորդին (մարդ-կանց, ջարդ-ված):

Ինքնեղբ. բառեր ասացել և վանկերի բաժանելով՝ ցոլաց տվեք կանոնները:

40. ՅԵՄԵՆՏ

Դավալվում կառուցվում է ցեմենտի խոշոր գործարան: Այս գործարանն Անգրկովկասի խոշոր գործարաններից մեկն է լինելու և արտադրելու յե տարեկան մեկ միլիոն տակառ ցեմենտ: Ցեմենտը շատ անհրաժեշտ նյութ է մեր շինարարության համար: Ցեմենտի արտադրությունը Հայաստանում պղպի չափով կեժանացնի ու կարագացնի շինարարությունը: Գործարանում սկզբում լինելու յե 500 բանվոր: Գործարանի վրա ծախսվել է մոտ 9 միլիոն ուրբլի: Ելեկտրոններդիան ստանալու յե Յերեվանի հիդրոէլեկտրակայանից: Դավալուի լեռները միլիոնավոր տոնն կրաքար են պարունակում, վոր կբավականացնի 100—150 տարի:

Հ Ա Ր Ց Ե Ր.

1. Ե՛լ ինչ հանքային հարստություններ կան մեր յերկրում:
2. Առաջ ե՛լ ցեմենտի և այլ գործարաններ կային Հայաստանում:
3. Ինչո՞ւ ցեմենտը շատ անհրաժեշտ նյութ է մեզ համար:

41. «ԹՇՆԱՄՈՒ ԱՐԱԾ Ա»...

Գիշեր եր, խավար գիշեր, ածխի պես մուգ, ածխի պես սեւ գիշեր:

Գիշերն ուղիղ կիսվել էր, յերբ մի հարայ բարձրացավ Ջորաչենում:

Մարդիկ փոխնորդով տներից դուրս եյին դալիս, ականջները սրում, բայց պարզ վոչինչ չեյին լսում: Միայն ինչ վոր աղմուկ ու հարայ-հրոց եր լսվում դանաղան կողմերից:

Մի կին դռան շեմքում բռնել էր ամուսնու փեշը և չեր թողնում, վոր նա առաջ գնա:

— Մարդասպանություն կլինի, դուրս մի՛ գնալ: Բայց ներքին հետաքրքրությունը մարդուն դուրս եր բերում տանից:

— Հանկարծ մի բարձր ձայն լսվեց մի կտրից:

Ա՛յ խալիս... Պաժա՛ռա՛ա՛ա՛... Կոլեկտիվի գոմը լլաժառ ա ընկե՛ե՛ե՛լ... ոգ... նե... ցե՛ե՛ե՛ե՛ք:

Ձայնը գիշերվա խավարի մեջ փուլեց Ջորաչենի կըտուրների վրա, և գյուղը լսեց ահավոր վոճիբի մասին: Ամենքը ցնցվեցին, և նրանց օրտում խոռեց վրեժը դավադիր թշնամու դեմ... նրանք ամեն կողմից առանց քարի ու փայտի նայելու, շտապ վազեցին դեպի կոլեկտիվի գոմը:

Բոլոր անասուններն, առանց վնասի, դուրս եյին բերել գոմից:

Բոբիկ ու փոխնորդով մարդիկ դուլլերով ու յերկու տակառով ջուր եյին կրում դեպի գոմը: Մի քանի յերիտասարդ նեռվել եյին գոմը և կովում եյին ծափալով կրակի դեմ: Մյուսները նրանց ողնում, ջուր եյին հասցնում:

Բազմաթիվ աչքեր պսպղում եյին գոմի շուրջը: Մարդիկ ձեռներին ճրագներ ունեյին՝ գլուխներից բարձր բռնած:

Ճրագների թույլ և գեղին լույսերը կիսով չափ լլատում եյին գոմի շրջապատի խավարը:

Հրդեհճը ներսից եր սկսվել: Գոմի կտրից մուխը
դանդաղ բարձրանում եր և լուծվում խավարի հետ:
Յերբեմն ներսից ծխի հետ կրակի լեզուներ ելին դուրս
թռչում ու լիզում խավարը:

Շատերն ելին ցանկանում գոմը մտնել, ոգնել, բայց
չեկին թողնում:

— Թե կարող եք, ջո՛ւր հասցրեք,—կարճ ասում
եկին նրանց: Դեռ հավաքվում ելին գյուղացիները, կոլ-
անդամները:

Կոլեկտիվի նախագահ Վաչագանը 15 տարեկան մի
սպառնուռ ուղարկեց գյուղի ծայրը՝ Թաթոսի և Բար-
սեղի մոտ, նրանց ևս տեղեկացնելու պատահած դեպքի
մասին:

Թաթոսն ու Բարսեղն իսկույն տներից դուրս թռան
և բոցկլտող աչքերով միմյանց հանդիպեցին:

— Թշնամու արած ա,—ասուր դուրս թռավ Թաթո-
սի ատամների արանքից:

— Յես գիտեմ, Հարութի ու մեկեկների սարքած
բանն ա: Նրանք դեռ վաղուց ելին ուղում Վաչագանի ու
կոլեկտիվի գլխին ոյին խաղալ: Հիմա դնանք, վաղը
նրանք մեր բռան մեջ կլինեն:

Յեվ յերկուսով գիշերային խավարի մեջ թռան դե-
պի գյուղամեջ:

ՀԱՐՑՆԵՐ

1. Ո՞վ հրդեհած կլինեք գոմը և ինչո՞ւ:
2. Ո՞վքե՞ր հանգրվին հրդեհը:
3. Հրչե՞ջ խմբի մասին ի՞նչ գիտեք:
4. Խորհրդայնացու՞մից առաջ հրչե՞ջ խումբ կար Յերեվա-
նում:

Փորձեցե՞ք փոփոխել այս հողվածի հետևյալ բառերը
բայց, միայն, հանկարծ, առանց, դեպի:

Բառերը բաժանվում են յերկու կարգի:

1. փոփոխվող բառեր, վերոնք հոլովվում են (դոյա-
կաններ) կամ խոնարհվում (բայեր): Որինակ՝ գիրք, գրքի,
գրքից... (հոլովում): գրեցի, գրեցիր, գրեց... (խոնար-
հում):

2. Անփոփոխ բառեր, վերոնք վոչ մի կերպ չեն փոփոխ-
վում. որինակ՝ հանկարծ, դեպի, հիմա, արդեն և այլն:
Ինքներդ ասացե՛ք փոփոխվող և անփոփոխ բառեր: Փոփոխ-
վող բառերը փորձեցե՛ք փոփոխել:

42. ԵԼԵԿՏՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՅԵՐԿԻՐ

Հնգամյա պլանի համաձայն, մենք պետք է 42 չըր-
ջանային ելեկտրակայան կառուցենք:

Դրանցից ամենամեծը Դնեպրի վրա կլինի: Մեջտե-
ղը ելեկտրակայան, չորս կողմը գործարաններ—մետա-
ղի, ճենապակու, ցեմենտի, քիմիական, նավաշինարա-
րական, ալյումինի և այլն: Ելեկտրակայանն ամեն կողմ
հոսանք պետք է ուղարկի:

Դնեպրոշինը մեզ 18 միլիոն մեքենական բանվորներ
կտա: Մեքենական բանվորների այս քանակը անգործ
չպիտի մնա: Մենք նրանց կստիպենք՝ չուղուճ, պող-
պատ, ալյումին հալել, նավեր շինել, ցեմենտ ու ճենա-
պակի թրծել, քիմիական նյութեր և դաշտերի համար
պարարտանյութ պատրաստել, քաղաքներ լուսավորել,
դաշտեր վրոգդել: Դնեպրոշինի կոմբինատում ամեն մի
կենդանի բանվորին 700 մեքենա—աշխատակից կընկնի:

Ու ամեն մի մեծ ելեկտրակայանի մոտ մենք այդ-
պիսի կոմբինատ կկառուցենք:

Ժամանակով բոլոր կոմբինատները ելեկտրական
ցանցով կկապենք: Առաջին հերթին ելեկտրական լարեր
կձգենք Դնեպրոշինից Դոնավազան:

Դնեպրոշինն ու Դոնավազանը բարեկամաբար իրար
ձեռք կտան: Յերբ Դոնավազանը հոսանքի կարիք ունե-
նա՝ Դնեպրոշինը կողնի նրան: Յերբ Դնեպրոշինին հո-
սանք հարկավոր լինի՝ Դոնավազանը կողնի նրան:

1. Ելեկտրականութիւնն ինչպէս և ոգտաւործվելու գլու-
ղատնտեսութեան մեջ:

2. Ի՞նչ բաներ են մեծատառով սկսված և ինչո՞ւ:

43. ԵԼԵԿՏՐԱԿԱՆ ԼԱՄՊԸ

1.

Պարնիզեղցի Պողոսը քառասուն տարեկան էր, դեռ
քաղաք չէր տեսել: Վերջապէս մի օր վարդէն քաղաք
գնաց:

Մի բան վոր՝ հեռու չի գլուղից Յերեան յերկու
օրվա ճամբա յի:

Յերկու օրում, խկապես, հասավ Յերեւան: Փողո-
սում հանդիպեց մի հայրենակցի, վոր կառապան էր
քաղաքում: Սա Պողոսին հրավիրեց իր տուն:

— Մուխն ընկնում ե, —ասաց, —աբի՛, գիշերը կը-
քնես, առավոտը կերթաս:

Պողոսը համաձայնեց:

Գնացին տուն: Մինչեւ հասնելը՝ մուխն ընկավ:
Յերբ տուն մտան, ելեքտրական լամպը վառվում էր, և
սամաւարը խլթխլթում սեղանի վրա: Կառապանի կինն
խկույն սեղանը սարքեց. հաց, թեյ բերեց, և նստեցին
ընթրիքի:

Մինչև սեղան պատրաստելը՝ Պողոսը նայում էր
ելեքտրական լամպին: Նայում էր բերանաբաց, դարձա-
ցած և ամենևին ուչ չէր դարձնում հացի սեղանին:

— Հա՛ց կեր, խնամի՛ Պողոս, —ասավ կառապա-
նը, —ի՞նչ կա, վոր նայում ես եղպես:

— Ես ձեր լամպին եմ նայում, —ա՛խպեր. մի մատ
շուշա ու եսքա՛ն լույս ե տալիս:

— Բա լեկտրական լամպը վոնց գիտես, —պարծե-
քավ կառապանը:

— Ես ի՞նչպէս ե վոր. սրա մեջ ուրիշ նավթ եք ա-
ծո՞ւմ, թե պատրույգն ե լավը:

— Չե՛, —ասաց կառապանի կինը. —վո՛չ նավթ ենք
ածում, վո՛չ ել պատրույգ ունի. իրան-իրան վառվում
ե, ե՛լի:

— Վո՞նց թե, —դարձացավ Պողոսը, —առանց նավ-
թի ու պատրույգի՞...

— Հա՛, իհարկե, առանց նավթի ու պատրույգի:
Բա լեկտրական լամպը վո՞նց գիտես, —նորից պար-
ծեցավ կառապանը:

— Հրա՛ջք բան ե, ախպե՛ր, —բըթմնջաց Պողոսը՝
նորից լամպին նայելով: Ու նայեց յերկար, նայեց դար-
մացած և, վերջը հետաքրքրվեց, թե վորտեղի՛ց են առ-
նում այդ լամպերը:

— Խանութներից, —պատասխանեց կառապանը:

— Թանգ ե՞, եթա՞ն:

— Եթան. հիսուն կոպեկ:

— Ես լա՛վ ե, —մտածեց Պողոսը, —մի հատ ել յես
առնեմ, հետո տանեմ, ել վոչ նավթի փող կտանք, վոչ
պատրույգի:

Եղպես ել արավ: Յերբ առավոտը դուրս յեկավ
հայրենակցի տանից, խանութներից մեկում գնեց ելեք-
տրական մի լամպ ու ճամբա ընկավ դեպի Պարնի գլուղ:

2.

Յերբ հասավ տուն, հարեւանները հավաքվեցին
նրա գլխին իմանալու՝ քաղաքում թանգութիւնն ե, ե-
թանութիւնն, ու կամ Պողոսը ի՞նչ ե բերել:

Պատասխանելով զանազան հարցերի՝ Պողոսը, վեր-
ջապէս, խուրջնից հանեց ելեքտրական լամպը:

— Ա՛յ, ինչ եմ բերել, —ասաց, լամպը գլխից բար-
ձրը բռնելով, վոր ըտրը տեսնեն:

— Եղ ի՞նչ բան է, եդ տաճի նման շուշեն, — հարցրին գյուղացիք:

— Լեքտրական է, — բացատրեց Պողոսը:

Գյուղացիները չհասկացան, թե «լեքտրականն» ինչ է: Պողոսը բացատրեց, վոր «լեքտրականը» լամպ է և առանց նավթի ու պատրույղի իրան-իրան վառվում է:

Պողոսը կնոջը հրամայեց, վոր մի թեկ բերի:

Յեվ յերբ կինը թեկ բերեց, նա լամպը թեկով կապեց ու կախեց ոճորքից՝ ճիշտ այնպես, ինչպես քաղաքում կառապանի տանն եր կախված:

— Ա՛յ, հիմա կտեսնե՞ք թե ի՞նչ է, — ասաց նա գործը վերջացնելուց հետո ցած իջնելով:

Գյուղացիները մոտեցան լամպին, նայեցին, հոտ քաշեցին (նավթի հոտ չեր գալիս) և սպասեցին վառվելուն:

— Բա ես ինչի՞ չի վառվում, — ասաց մեկը:

— Նա իր ժամանակը գիտի, — պատասխանեց Պողոսը, — յերբ վոր ժամանակը գա, իրան-իրան կվառվի:

Լամպի շուրջը խմբված՝ սպասեցին մինչև ճրագվառոցը:

Սպասեցին այնքան, մինչև վոր գյուղի բոլոր տներում մեկը մյուսի յետեից վառվեցին նավթի լամպերը, ճրագները: Բայց «լեքտրականը» դեռ չեր վառվում:

— Բա ես վո՞նց է, ժամանակը չեկա՞մ:

— Դեռ չէ: Յերեվանում ուշ է մթնում, — պատասխանեց Պողոսը. — մի քիչ ել սպասեցե՛ք, հիմի կվառվի...

Անցավ մի ժամ, գյուղը բոլորովին մթնեց: Խալաբում չմնալու համար կիսն ուղեց նավթի լամպը վառել: Պողոսը չթողեց:

— Զուր նավթ մի փչացնիլ, — ասաց — հիմի վոր տեղ վոր ե՛ կվառվի...

Սպասեցին ելի մի ժամ, յերկու ժամ, ելեքտրականը չվառվեց:

Հարեվանները կամաց-կամաց սկսեցին տրանջալով ցրվել:

— Մենք ել կարծում եյինք, եթ մի բան է:

— Զեր մեջ վառված ճրագն ել կհանգչի, ուր մնաց հանգածը վառվի, — պատասխանեց պողոսը և մտածեց, վոր հարեվաններն, անշուշտ, աչքով տվին լամպին, յեթե վոչ ինչո՞ւ չսլիտի վառվեր:

— Հա՛, հա՛, աչքով տվին, — ասում եր նա կնոջը, — անպատճա՛ռ աչքով տվին...

Հ Ա Ր Ց Ե Ր.

1. Ինչո՞ւ չեր վառվում ելեկտրական լամպը:
2. Առհասարակ «աչքով տալ» մի բանի կարելի՞ չէ:
3. Դնացե՛ք եքսկուրսիա մոտակա ելեկտրակայանը և ուսումնասիրեցե՛ք այն:
4. Զեր գյուղում կամ ձեր շրջանում կա՞ ելեկտրակայան:

Դիտեցե՛ք, թե ի՞նչ տեղերում են գործածված՝ բաղմակեր, շեշտը, յերկարը, հարցականը, բուլբը, չափերտը և փակագիծը: Ներկայացրե՛ք «ելեկտրական լամպը», ընտրելով «դերասաններ» և դերերը բաժանելով:

Նյութը բաժանեցե՛ք յերկու մասի. ա) Պողոսը քաղաքում, բ) Պողոսը գյուղում — իրենց տանը:

Գործող անձինք՝ 1) Պողոս, 2) կառապան, 3) կառուպանի կիմը, 4) Պողոսի կիմը, 5) գյուղացիներ:

Ինչո՞վ է տարբերվում ներկայացումը պատմելուց:

44. ԵԼԵԿՏՐԱԿԱՆ ՀԱՎԱՐ

17 տարի յե անցել այն որից, յերբ Համբոն վերադարձվեց կոնվներում: Նրա ջարդված փոքր կարեցին, նոր փայտե վոտ դրին տեղը և թռչնաբուծական տնտեսության մեջ աշխատելու ուղարկեցին:

Ամեն անգամ, յերբ իր փայտե վոտը թրխկացնելով
ու կաղալով Համբոն յերեվում եր գեղամիջում կամ
դաշտում, իսկույն մեծ ու փոքր նրան չըջալատում
եյին ու լսում նրա հետաքրքիր պատմությունները՝
կովի դաշտից, գերությունից, տեսած-լսածից:

Մի որ Համոն, Սաթիկը, Նազիկը, Աղավարդը,
Սուրիկն ու Աշոտը—բոլորն ել 8-10 տարեկան դպրոցա-
կաններ—մի-մի ծաղիկ ձեռքերն առած՝ մոշի եյին դը-
նում, վոր համ մոշ ուտեն, համ ել տնեցոց համար բե-
րեն:

Գյուղից նոր եյին դուրս յեկել, մին ել ի՞նչ տես-
նեն.—քեռին մեծ ընկուղենու տակ մենակ նստած
Հանգստանում ե:

Յերեսխաները բարեվեցին ու կանգ առան:

— Լսել ենք, քեռի՛, —ասաց Սուրենը, —դու մի
մեծ հավ ունես, վոր թուխս ե նստում, ճուտիկներ հա-
նում. ինքն ել վո՛չ կուտ ա ուտում վո՛չ ման գալիս:
Ճի՛շտ ե, հա՛, պատմի՛ր:

Համբոն շատ եր սիրում յերեսխաներին, ուտի նա
ժպտալով հարցրեց.

— Հը՛, եդ ո՞վ ասաց ձեզ, վո՞րտեղից իմացաք:

— Երեկ մեր վարժուհի ընկեր Սիրվարդն ասաց
Պոստացել ա, մեզ ել մի որ բերի ձեզ մոտ, ցույց տա:

— Իհարկե, ճիշտ ա՛, —պարծենալով վրա բերեց
Համբոն, —բա հո վարժուհին սուտ չի ասիլ: Ի՞նչ տ.
ուզում եք՝ դրա մասին պատմե՞մ:

— Հա՛, հա՛, քեռի՛ ջան, եդ շատ հետաքրքիր ա.
Թի պատմի տեսնենք, ի՞նչ հրաշք հավ ա. վորտե՞ղից ես
բերել...

Համբոն այսպես սկսեց.

— Մի ասացեք տեսնեմ՝ ձեր նանը, վոր թուխս ա
բնում, քանի՞ ձու յա տակն անում. վո՞րդ գիտեք:

— Տառնահնդ, քսան, —իսկույն վրա բերեց կար-
մրաթշիկ Նազիկը:

— Կով իմացար, —ասաց Համբոն: Իմ հավի լա-
վությունը նրանումն ա, վոր միանգամից 150—200 ձվի
վրա յա նստում:

— Պա՛, —դարմացած բացականչեցին յերեսխանը, —
եդ վո՞նց կլի, քեռի՛, եդ տեսա՞յ հավ կլի՞:

— Մենք մի հավ ունենք, —վրա բերեց Սաթիկը, —
վոր տարին յերեք անգամ ա թուխս նստում: Ինչքան
ուղեցին, իմ նանը չծախեց:

Ճիշտ եք ասում, ասաց Համբոն, միայն թե Սաթի-
կի ասածը հազարից մի անգամ կպատահի: Իսկ իմ հա-
վը տարին 12 ամիս թուխս ա նստում. միայն թե ձու
հասցրու՝ թե դոչադ ես: Իմ հավը վոր կա, մի արկղ ա.
մեջն ել լամպիկներ: Վո՛չ թե՛վ ունի, վո՛չ թոչում ա,
վո՛չ ման ա գալիս. վորտեղ դնես, ենտեղ ել կմնա:
150—200 ձուն կարգով շարում եմ մեջը, հետո ելեքտրա-
կանությունը թելերի միջով գալիս, եդ լամպիկները
վառում ա, ձվերը տաքացնում: Հա՛, թե բան ե, ելեք-
տրականություն չկա, հասարակ նավթի լամպով ել
կարելի յե տաքացնել, միայն լավ պիտի հսկել, վոր
տաքությունը հալսասար լինի:

— Ուրեմն եդտեղ մարդ պետք չե՞, —դարմահած
հարցրեց Աղավարդը:

— Չե՛, ձե՛զ մատաղ, յես ել իմ դործն ունեմ: Յես
ել չուտ—չուտ ձվերն եմ չուտի—չուտի անում, վոր ինչ-
պես ասացի՝ ամեն կողմից հալսասար տաքանան, արկղն
եմ մաքրում: Ձուն ուղիղ 21 որ մնում ա արկղում պար-
կած: Ճուտիկները վոր դուրս են գալիս, տեսած կլեք:
Թաց են լինում. դնում եմ, չորացնում, հետո մայրա-
տունն եմ տանում: Մայրատունը յերեք սենյակ ունի:
Սուաջին սենյակում ելեքտրական վառարան կա, վոր

ճուտիկները չմրսեն. յերկրորդում նրանք ման են գալիս. դրա կտուրը շուշով ա ծածկված. յերրորդն ել մի փոքրիկ բակ ա, յերկաթալարով պատած: Ես մայրատանը նրանք ապրում ու կերակրվում են ամբողջ 6—8 շաբաթ, մինչեւ վոր կարգին ճուտեր են դառնում: Այն այսպես ա իմ հավը: Նրան ասում են ինկուբատոր: Այժմ խնդրեցեք ձեր վարժուհուն, վոր ձեզ բերի մեր արտելի թռչնոցը, յես ամեն բան ցույց կտամ:

Հ Ա Ր Յ Ե Ր.

1. Ի՞նչ ե հարկաւոր, վոր ձվից ճուտ դուրս գա:
 2. Ի՞նչ առավելութուն ունի ինկուբատորով ճուտ ստանալը:
 3. Առաջին որերը ճուտին ինչո՞ւ պիտի կերակրել:
- Ինչո՞ւ մարդկանց անունները (Համո, Սաթիկ, Նադիկ, Աղա-վարդ, Սուրիկ) դրված են մեծատառով:

45. ԱՐԹԻԿԻ ՅԵՐԳԸ

Ձինվել ես ջահերով լուսե,
Արթիկ, վարդագո՛ւյն Արթիկ.
Կրծքիդ կարմիր տուֆ ե բուսել—
Պայծառ՝ մայիսյան վարդից:

Յեկել ե դռնեցի իվանը,
Լեռներում լարել ե մեքենան:
Յեկել ե շիրակցի Վահանը,
Վոր նոր—նոր յերակներ բանա:

Ամրակուռ բաղուկները հզոր,
Խի՞տմ են, ժայռերին խի՞տմ,
Մեր տեմպն ու հարվածներն այսող
Լեռներն ել ներքեւ են թափում:

Յեւ տուֆը դիզվում ե, դիզվում:
Մեքենան անդուլ ե բանում,
Սղոցը քարերն ե լիզում,
Կտրատում ե դուրս ե հանում:

Արթիկ, վարդաքա՛ր Արթիկ,
Հենվել ես փեշին Մանթաշի.
Վորպես բարձրացող բարդի,
Աճի՛ր ու հզոր բոյ քաշիր:

Հ Ա Ր Յ Ե Ր.

1. Արթիկ—տուֆն ի՞նչ արժեք ունի մեր յերկրի համար:
2. Ի՞նչպիսի տեմպի մասին ե խոսում հեղինակը:
3. Ուրիշ ե՞լ ինչ քարային հարստութուն կա մեր յերկրում:
4. Արձակի վերածեցեք այս բանաստեղծութունը ե դրի առեք:

46. ՊՂԻՆՁ ԵՆ ՋՈՒԼՈՒՄ

Պղինձ հալող յերեք հսկա կաթսա ահեղ բառաչում
են:

Վարպետները խոշոր ակնոցներ, կաշե պինջակներ ու
դոզնոցներ հագած, կրակե լեզուների առաջ ղեկավա-
րում են հալվող պղինձը... Աշխատում, միմյանց ող-
նում են լուռ ե խոսում են հայացքներով:

Մի կոշտացած ձեռք ձողը մեկնում ե կաթսայի
ներսը: Պղինձի թեթ բոցը խոր շանթում ե վարպետի
դեմքը ե առատ քրտինք քամում: Նա յետ ե կանգնում
լուռ, չրթունքները սղմած: Կարմիր զանգվածը յե-
ռում, դալարվում ե ներսը ե ուղում ե ուժով ջարդել
հսկա կաթսայի պատերը:

Վարպետը նայում ե յեռացող, կաս—կարմիր կտրած

պղնձին: Բոցավառվում են նրա աչքերը և ընդունում
վառվող պղնձի փայլը... Քանի՞ տն են իրենց ուժը միաց-
րել պղնձի ուժին... ինքն ել իր ուժը կձուլի նրան...
Թող յերկաթուղին պղնձի բեռներով գնա, մտնի իր
յերկրի բոլոր անկյունները... Թո՛ղ ամեն տեղ լսվի
պղնձի զրնդան ձայնը: Զգացվի նրա ուժը: Յեվ ո՞վ էի
իմանալ, վոր դա մարդու, բանվոր մարդու ուժն է, նրա
ձայնն է զրնդում...

Նորից ձողերը շեշտակի մեկնվում են և ղեկավա-
րում բորբոքվող զանգվածը: Դեմքերը վառվում են և
ծածկվում քրտինքի աղի կաթիլներով:

Մութը կամաց ծվարում է ձորում. նրա ծոցում կոր-
չում են այգիները, ծուխը, քարայրները և ամեն ինչ...
Իսկ քրտնած մարմիններն ե՛լի առաջ են մղվում, ձողե-
րը մեկնվում են, և քրտինքը հոսում է:

Կարմիր պղինձ են ձուլում...

Հ Ա Ր Ց Ե Ր.

1. Ինչի՞ յե պետք դալիս պղինձը:
2. Ուրի՞շ ի՞նչ հանքային արդյունաբերություն կա մեր յերկ-
րում:
3. Ի՞նչ պիտի աշխատանք է կատարում բանվորը պղնձի ձու-
լարանում:

Այս հողվածից բառեր ընտրեցեք և վանկերի բաժանեցե՛ք տո-
ղադարձի համար: Սմենապակասը քանի՞ վանկանի բառեր պիտի
լինեն:

47. ՇԱԽՏՅՈՒՆ

Խփի՛ր մուրճը համառ, ուժգին
Թո՛ղ գդրդա շախտի խորքում,
Քանդի՛ր ուժգին կուրծքը ժայռի,
Առա՛ջ գնա վեհ ու խնդուն:

Ե՛ն... յեա գիտեմ, գիտեմ, գիտեմ,
Ճնշել են քեզ յերկար դարեր.
Գիտեմ, հիմա հողուդ խորքում
Կան հրավառ լույս ու արեւ:

Խփի՛ր, ընկե՛ր, Թո՛ղ գդրդա,
Թո՛ղ կայծերը շուրջդ ցուան.
Կուրծքը պատռի՛ր հսկա ժայռի,
Վոնց անվեհեր անվախ հսկա:

Հ Ա Ր Ց Ե Ր.

1. Ո՞վ է ճնշել շախտյորին «յերկար դարեր»:
2. Ի՞նչ պես է արտահայտվել ճնշումը:
3. Շախտյորի հողում ի՞նչ «հրավառ լույս ու խնդում» կա:
4. Ներկայիս ե՞լ բանվորը շախտում դժգոհությամբ է աշ-
խատում:

Դիտեցե՛ք շեշտերը և ձեռնից որինակներ բերե՛ք:

48. ԻՆԴՈՒՍՏՐԱՅՈՒՄ

Ալմաստի գլխում հա պտույտ եր դալիս «խնդուս-
տրացում» բառը: Բայց նա այդ բառը տեղը բերել չեր
կարողանում. միտքն ել պարզ չեր պատկերացնում:
Նախաճաշի դադարի ժամանակ նա դիմեց կին հրա-
հանգչուհի Հայկուչին՝

— Հայկու՛ւչ ջան, գլուխս չի մտնում ես խոսքը, մի
բացատրե՛ս:

Հայկուչին ել եղ եր պետք: Խոսել սկսելուն պես՝
մյուս բանվորուհիներն ել գլխին հավաքվեցին:

— Ընկե՛րներ, որեցոր աճում է ապրանքի պահան-
ջը: Գյուղը պահանջում է տրակտոր, ելեկտրական
ճրագ: Դրա համար մենք պետք է ունենանք գործարան-

ներ, ելեքորոկայաններ: Բայց վո՞րտեղից ձեռք բե-
զո՞վ փոխարինենք մաշված մեքենաները: Դրսի՞ց բե-
րենք: Բայց մենք դրա համար կապտալիստներին հըս-
կայական քանակությամբ վոսկի պիտի վճարենք:
Ստիպված կլինենք չնչին դնով ահագին հում նյութ և
այլ մթերքներ տալ նրանց: Ուրեմն մեզ մնում է, վոր
ինքներս մեքենաներ պատրաստենք: Այդ դեպքում մենք
կախված չենք լինի արտասահմանից: Ինդուստրացումն
եւ հենց այդ է:

Խորհրդային իշխանությունը հենց այդ ուղին եւ
բռնել է: Դժվար գործ է, մեծ ծախս է պահանջում: Դրա
համար մենք շատ խնայող պետք է լինենք ամբողջ աշխ-
տեսության մեջ: Մենք շատ բան կարող ենք տնտեսել:
Ամեն մի աշխատավոր պետք է մտածի—չի՞ կարելի ար-
դյոք իր արտադրության մեջ ամբողջ ծախսերը կըր-
ճատել և գործն այնպես կազմակերպել, վոր լավ և շատ
արտադրվի, և արտադրանքի ինքնարժեքն իջնի:

Զանգը հնչեց: Դադարը վերջացավ: Ամեն մեկը
վազեց իր աշխատանքին:

Հ Ա Ր Ց Ե Ր.

1. Ի՞նչ բան է ինդուստրացումը և ի՞նչ նշանակություն ունի
մեր տնտեսության համար:
2. Ի՞նչ քաղաքական նշանակություն ունի ինդուստրացումը
ԽՍՀՄ-ի համար:
3. Ի՞նչպես է ինդուստրացման պահանջը կիրառվում ձեր
արտադրության մեջ:
4. Ի՞նչ չափով ենք մասնակցել ինդուստրացման փոխառու-
թյուններին: Ի՞նչ նշանակություն ունեն այդ փոխառություն-
ները:

Ցույց տվեք այս հոդվածի մեջ գործածված հետևյալ բառերի
կազմութայունը.

Ինդուստրացում, հրահանգչուհի, Հայկալ, Էլեկտրական,

գործարան, հսկայական, քանակություն, խորհրդային, անտե-
ստություն, աշխատավոր, արտադրանք:

Ցույց տվեք հետևյալ բառերի կազմութայունը.

անուն, անգործ, դժգույն, դժբախտ, տհաս, ապերախտ,
չխոսկան:

Բառերի սկիզբը և վերջը կարող են դրվել մասնիկներ կամ
ածանցներ:

Ածանցները լինում են՝ նախածանցներ (ան, ապ, տ, դժ,
չ, համ), վերածանցներ (ակ, իկ, ուկ, ուհի, իչ, ալոր, ա-
րան, ստան, անոց, ակամ, ուրյուն, եղևն, ուրդ, ուստ, ատ,
ոտ, ուտ, երին և այլն):

49. ՅԵՐԳ ԿԱՌՈՒՅՄԱՆ

Քարը՝ քարի,
Դարը՝ դարի,
Ո՞ւր ենք հասել հիմա մենք,
Մեծ պայքարի
Վողով արի՝
Դարն ենք կերտում հիմա մենք:
Յեղի՛ր անահ,
Մոռացի՛ր մահ
Կառուցման մեծ ճակատում.
Լսի՛ր, ահա
Ճամբիդ վրա
Նոր արեվներ են ժպտում:
Քարը՝ քարի,
Կամքով արի
Կառուցում ենք կյանքը մեր,
Նոր աշխարհի
Լույսը վառի,
Ի՛մ բարեկամ, ի՛մ ընկեր:
Յեղի՛ր տոկուն,
Թող քո հոգում.

Հույսը յերեք չմարի,
Ձեռքիդ դրած
Քո մի քարը
Հավասար ե մի դարի:

Հ Ա Ր Ց Ե Ր.

1. Ի՞նչպիսի աշխատանք ե խրախուսում հեղինակը:
2. Ի՞նչն ե կառուցման ճակատ համարում:
3. Նոր աշխարհն ինչո՞վ ե տարբերվում հին աշխարհից:

50. Ն Ա Վ Թ

Կուլկասում՝ Բագու և Գրողնի քաղաքներն շուրջը,
գետնի տակ, լայն տարածվում են նավթային լճերը:

Յերկրագնդի վրա այդպիսի տեղեր շատ քիչ կան:

Առաջներում այդ տեղին տեր եյին դարձել կապիտալիստները: Հեղափոխությունը նրանց դուրս քշեց յերկրից: Հիմա բանվորները նավթը հանում են վոչ թե՛ կապիտալիստների, այլ իրենց պրոլետարական պետութայն համար:

Կապիտալիստները չեն կարողանում մոռանալ իրենց կորցրած իշխանությունը: Նրանք ուզում են պատերազմ սկսել Խորհրդային Միութայն դեմ. նրանք ուզում են վերադարձնել իրենց նավթահանքերը և դորժարանները.

— Այդ բոլորը մերն են. — դուռում են նրանք, — բայց և իկները մեզ թալանում են:

— Պատերազմ սկսենք ԽՍՀՄ-ի դեմ:

Այս ձայներն ու աղաղակները հասնում են խորհրդային յերկրի բանվորներին:

— Այնքան ել հեշտ չե մեր դեմ կռվել, — պատասխանում են նրանք կապիտալիստներին: — Մենք կկա-

րողանանք մեզ պաշտպանել. մենք կկառուցենք մեր սոցիալիստական տնտեսությունը: Հինգ տարում մենք կհասնենք և կանցնենք ձեզանից:

Նավթագործ բանվորները վորոշեցին նավթի հրե-գամյակը կատարել յերկու և կես տարում:

Հեշտ բան չե նավթ հանելը: Նավթային շերտն ընդհանրապես շատ խոր ե ընկած լինում: Այդ շերտին հասնելու համար հարկավոր ե գետնի մեջ շատ նեղ և յերկար հոր փորել: Այդ հորից գետնի տակի լճերից դուրս կգա թանկագին հեղուկը:

Նավթային հորի վրա կառուցում են մի բարձր վիշկա:

Վիշկայից բանվորները խողովակներ են իջեցնում և դրանք սողում են, մտնում գետնի տակ: Հոր փորող մեքենան խողովակների համար տեղ ե պատրաստում: Մեքենայի բուրդույի ծայրին հազցրած ե ձկան պոչի նման յերկճուղ դուրը: Դա անցնում ե բոլոր հողաշերտերի միջով, մինչև նավթին հասնելը: Յեթե ճանապարհին քար պատահի, նա քարն ել կծակի:

Նավթի հետ գետնի տակ դազեր են խառնված: Յեթե դազի ճնշումը ուժեղ ե, նավթը միանգամից մտնում ե հորի մեջ և այնտեղից դուրս ե գալիս ու բարձրանում գետնի վրա, սե, ուժեղ շատրվանի պես: Բանվորները պատրաստ սպասում են: Հորն արդեն իր ժամանակին պատրաստ ե խողովակներով: Հոր փորող մեքենայի տեղը կանգնած ե ընդունող ապարատը: Դա թույլ չի տա, վոր նավթը թափվի և գետնի յերեսին լիճ կաղմի: Նավթը կհոսի խողովակներով, և վոչ մի կաթիլ գետին չի թափվի:

Տարեցուտարի ստացվում ե ել ավելի շատ նավթ: Այդ նավթը դուրս տանելու համար հարկավոր են հաղարավոր գնացքներ և շողենավեր: Ավելի հեշտ չե՞, արդյոք, նավթն ուղարկել խողովակներով: Թող հում

Մեր դեմքերը բաց են,
Մեր քայլերը՝ վստահ,
Ու քայլում ենք հպարտ հաղթանակի յերթով.
Մեր աչքերում լազուր խնդությունն է նստած,
Մեր աչքերում՝ հաղթանակի յերդում:

Ձա՛րկ, թմբկահա՛ր, ուժգին,
Ե՛յ, շեփորնե՛ր, հնչե՛ք.
Քայլենք խրոխտ, հուժկու
Ու համարձակ շնչենք...

Դիմավորում ե մեզ մեր նոր առավոտը,
Մեր նոր այդերացը լուսե.
— Առա՛ջ,—մեր յերազած հաղթանակը մոտ է,
Վերջին դժվարությունն ուսել:

Ձա՛րկ, թմբկահա՛ր, ուժգին,
Ե՛յ, շեփորնե՛ր, հնչե՛ք.
Քայլենք խրոխտ, հուժկու
Ու համարձակ շնչենք...

Մենք պատանի բանակ խորհրդային յերկրի,
Մենք անվճատ մարտիկ կառուցման ճակատում.
Հե՛յ, վստահ ենք առողջ մեր ձեռքերին,
Վո՛չ մի քայլ տատանում այս մարտում...

Ու համարձակ շնչենք...
Քայլենք խրոխտ, հուժկու
Ե՛յ, շեփորնե՛ր, հնչե՛ք.
Ձա՛րկ, թմբկահա՛ր, ուժգին,

Մենք անթիվ ենք, անվերջ ու անքանակ,
Յեվ աճում, աճում ենք ամեն ուր, ամեն տարի.
Վողջո՛ւյն Հոկտեմբերյան մեր հպարտ բանակ,
Վողջո՛ւյն անխորտակ պատանի...

Նավթն ինքն ուղղակի հոսի դեպի Սև ծովի նավահան-
գիստները, դեպի հեռու նավթաթորիչ գործարանները.
Այդպիսի գործարաններ կառուցված են Բաթում և
Տուապսե քաղաքներում: Բազմից Բաթում նավթը հո-
սում է խողովակներով—821 կիլոմետր յերկարու-
թյամբ: Խողովակներն անցնում են դեպի յերեսով:
Նույնպիսի նավթամուղ կառուցված է նաև Գրոզնուց
Տուապսե:

Յերկաթուղով նավթամթերքները փոխադրում են
ցիստերներով:

Բանվորները տեսնում են, թե ինչպես նավահան-
գիստներում նավթատար շոգենավերը լցվում են նավ-
թով և ծովը դնում: Նրանք դիտեն, վոր մենք շատ
նավթ ունենք, վորի մի մասը կարող ենք ուղարկել
արտասահման: Խորհրդային նավթի համար կապի-
տալիստները վճարում են վոսկի: Մենք այդ վոսկով
գնում ենք կապիտալիստներից զանազան մեքենաներ
մեր հսկա գործարանների համար, վորոնք խորհրդա-
յին յերկրի կղարձնեն անհաղթելի, պողպատյա յեր-
կիր:

— Վոչ թե 5, վոչ թե 4, վոչ թե 3, այլ 2 և կես
տարում կատարեցին մեր հայրերը նավթային
հնգամյակը,—գոռում են Բազմի և Գրոզնու յե-
րեսաները:

Հ Ա Ր Յ Ե Ր.

1. Նավթն ի՞նչ նշանակություն ունի համալսարհային տըն-
տեսության զարգացման համար:

2. Մեր յերկրից քչված կապիտալիստներն ի՞նչ միջոցներով
են ուղում նորից տեր դառնալ «իրենց» նավթահանքերին ու գոր-
ծարաններին:

3. Մեր կառավարությունը լա՞վ է անում, վոր նավթի ավել-
ցուկն ուղարկում է արտասահման և փոխարենն ստանում մեքե-
նաներ, գործիքներ և այլն:

4. Աշխատանքի ի՞նչ ձևերի շնորհիվ եր, վոր Բազմի պրոլե-
տարիատը կարողացավ նավթի հնգամյա սլանը կատարել յերկու
և կես տարում:

Ձա՛րկ, թմբկահա՛ր, ութգին,
Ե՛յ, շեփորներ, հնչե՛ք.
Քայլենք խրոխտ, հուժկու
Ու համարձակ շնչենք...

Դիտեցե՛ք, ձայնարկությունների ուղղությունն այս վառարաններին մեջ:

52. ՓՈՔՐԻԿ ՇՈՖԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

Ինչ յեղանակ ել լինի,
Անձրեմ ու ձյուն, թե արեմ,
Շոֆեր հայրը Շոթայի
Կիր ե կրում ու քարեր:
Հոր ուժը շա՛տ, անհատնո՛ւմ,
Տանը ու բախ խաղ ու յերգ,
Շոթան ուսման ճակատում՝
Աշխատասեր պիտներ:
Հոր կողքին ե միշտ նստում,
Ման ե գալիս ամեն տեղ,
Ղեկը բռնել ե ուզում՝
Զե՞ վոր շոֆեր ե անչեղ:
Զի կարող նստել պարապ
Ոգնում ե հորը ճամբին,
— Աշխատանքի ժամանակ
Պիտի լինել լուրջ, ուշիմ:
Թուչում ե ահա ավտոն,
Քար ե կրում քաղաքին.
Ավտոյում պատիկ Շոթան
Մեծ կառուցման մասնակից:
Սլանում ե, տե՛ս, ավտոն,
Շոթան միջին ժպտում ե.
Ընկերներ, տեսա՞ք, արդյո՞ք,
Բանվոր Շոթան գործում ե:

Հայրը վարում ե ավտոն,
Հոր ուժը շա՛տ, անհատնո՛ւմ.
Սուլիչն ե սուլում Շոթան,
Գործում ե նա, չի հողնում:
Շոթան չուտով, շատ չուտով,
Ուսում կանխի, կմեծանա,
Կդառնա նա կառուցող՝
Կսարքի կուռ մեքենա:

Հ Ա Ր Ց Ե Ր.

1. Ինչո՞ւ Շոթան սիրեց շոֆերությունը:
2. Դո՞ւք ինչ գրազմունք եք սիրում և ինչո՞ւ:
3. Ի՞նչպես եր Շոթան սղնում իր հորը:

53. ՀԻՆՆ ՈՒ ՆՈՐԸ

1.

Գյուղ ենք գնում՝ ընկերոջս հետ: Նոր գործիքներ ենք ուղարկել՝ օերմաղտիչ, շարքացան, քամհար: Գնում ենք ցույց տալու, աշխատեցնելու:

— Ի՞նչքան դժվար եր առաջ գյուղում աշխատել, — ասում ե գյուղատնտես ընկերս, վոր 20 տարի անընդհատ, իր գործին համատարիմ, շրջել ե մեր գյուղում, տարիներ առաջ նոր խոսք ասել: Ծերացել ե այդ գործում, ճերմակել են մազերը, բայց վստեներում դեռ ուժ ունի աշխատելու:

— Առաջին անգամ ես գյուղը յետ եմ յեկել: Լավ հիշում եմ. խոսեցի, ցույց տվի նոր գործիքներ, բայց չուղեցին ձեռք բերել: Միքանի հին մարդիկ խանդարեցին, նույնիսկ շարքացանը ծաղրեցին, ասացին, թե մեր հողերում եդ մաշինը վոր յերեմա, մեր սերմը կկտրի:

Պատմում ե, թե ինչպես ժողովից հետո քնելու տեղ ել չեն տվել, հուսահատ ցանկացել ե քաղաք վերադառնալ: Ռեսը մի ել ե տվել. խուրջինը դցել ե վրան և վստով գյուղից հեռացել:

— Ինքս ինձ վրա բարկանում եյի, թե ինչո՞ւ ուրիշ արհեստ չսովորեցի...

Կէս ճանապարհին իշատեւրը նրա հետեւից Ե հաս-
նում, ելը հետ առնում, խուրջինն ել, իրեն ել թողնում,
կիսաճանապարհին:

— Հետո իմացա, վոր դյուղում նրան ասել եյին,
թե ելը կսատկի, յեթե ինձ հետ դա: Տեսա՝ ել ճար չկա:
խուրջինս ուսս առաւ և ճանապարհս շարունակեցի: Կես-
գիշերին հոգնած տուն հասա:

— Իսկ հիմա թամբած ձիով ենք գնում, իրենք են
մեզ կանչել:

2.

Գյուղի վերելում, կոլխոզի կալում հաւաքվել են
դյուղացիք:

Ընդարձակ կալում մի տեղ քամհարն ե աշխատում,
քամած ցորենը սերմադուրիչի մեջ են լցնում, և մեքենայի
ներքեւից թափվում ե սերմացուն ջոկ, հավի կուտը
ջոկ, ուտելու ցորենն ել ջոկ:

Կայանի բաց դռներից յերեւում են շարքացան մե-
քենաները, վոր պսպղում են: Նոր ձեւի գութաններ կան
յերկաթե փոցիներ և ուրիշ մեքենաներ:

Աղմկում ե քամհարը, փոշի յե հանում. մեկը փո-
շու մեջ թխակն ե անընդհատ բարձրացնում, հարդախա-
ռն ցորենը լցնում մեքենայի մեջ:

Հավաքվում են դուղացիք, նայում են զարմացած ջ
Վոմանք կռնում են, տակից նայում կամ վիզը յերկա-
րացնում վերից նայելու, տեսնեն, թե միջին ի՛նչ կա,
վոր աշդպես լավ ե մաքրում:

Նայում եմ ընկերոջս: Թիկն ե տվել պատին և ան-
շարժ նայում ե նրանց, վորոնք տարիներ առաջ ել ել
չտվին, հիմա հավաքվել են մեքենաների շուրջը, ինչպէս
յերեխները խաղալիք տեսնելիս:

Չ Ա Ր Յ Ե Ր.

1. Ձեր շրջանում մեքենատրակտորային կայան կա՞: Նկարա-
գրեցիք:

2. Ե՞լ ինչ մեքենաներ կան:

3. ՄՏԿ դերը դյուղի կուլեկափայտման գործում:

4. Ինչո՞ւ դյուղացիները դեմ եյին մեքենաներին:

54. ՌԱԴԻՈՆ

1.

Ամեն որ, յերեկոյան դեմ, յերբ ռադիոն սկսում եր
խոսել, Լուվրիկի մայրիկն իսկույն վերցնում եր մա-
տիտն ու տետրակը, նստում ռադիո ապարատի սեղանի
առաջ և սկսում գրել:

— Ի՞նչ ես անում, մամա ջան, — հարցրեց մի որ
Լուվրիկը:

— Դաս եմ առնում, բալիկ ջան, — պատասխանեց
մայրիկը:

— Բա առանց մորաքրոջ վո՞նց ես դաս առնում:

— Մորաքրոջը ռադիոյի կենտրոնումն ե. ենտեղից
նա բան ե պատմում և շատ մայրիկներ ու հայրիկներ
լսում են ու սովորում:

— Հիմա քեզ դաս կհարցնի, հա՞, մամա՛ ջան:

— Ձե՛, ջանի՛կս. ենտեղից խոսածն ե լսվում. մեզ
խոսածը մորաքրոջը չի լսի:

2.

Մի որ ել ռադիոն սկսեց խոսել, բայց մաման չկարձ

Լուվրիկը դեռ ու գեն ընկավ, աթոռին կանգնեց,
դաշնամուրի վրայից մամայի տետրակը վերցրեց, բե-
րեց, գրեց սեղանի վրա, բաց արավ, վազեց մատիտն ել
ըրեց և սեղանի առաջ նստեց:

Հանկարծ դուռը բացվեց և չտապով ներս մտավ մայրիկը:

— Մամա՛ ջան, եղ. ո՞ւր ես գնացել, ե՞ր. քանի ժամանակ ե մորաքույրը դաս ե պատմում, իսկ դու չեո լսում,—բարկացավ Լուվրիկը:

— Ինչո՞ւ չասացիր՝ մայրիկս տանը չի, քիչ սպասիր:

— Ա՛յ դու, խաբո՛ղ մամա,—ժպտալով մատը թափ տվավ Լուվրիկը,—բա մեր խոսածը մորաքույրը կլսի՞:

Հ Ա Ր Ց Ե Ր.

1. Ձեր տանը լսած, սովորական լավ բաները պատմեցե՛ք:
2. Ձեր ընտանիքի անդրադետ անդամին գրադետ դարձրե՛ք:
3. Համոզեցե՛ք ձեր ընտանիքի «պակված—քաշված» անդամին, վոր հաճախ գնա հանդեսներ, ժողովներ:
4. Աշխատեցե՛ք՝ ռադիո ունենալ ձեր տանը:

55. ԼՍԵՑԵ՛Ք, ԽՈՍՈՒՄ Ե ԽՍՀՄ-Ը

Խորհրդային յերկիրն ամենամեծ յերկիրն ե ամբողջ աշխարհում: Մեկ ծայրից մյուսը վոտքով գնալու համար հարկավոր ե չորս տարի:

Հարցնենք այդ յերկրի բնակիչներին—բոլորին միանգամից, ռադիոյով — որվա վո՞ր ժամանակն ե ձեզ մոտ:

Մեկը կպատասխանի—մեզ մոտ սուսվոտ ե:

Մյուսը կպատասխանի—մեզ մոտ կեոոր ե:

Յերրորդը կպատասխանի—մեզ մոտ յերեկո յե:

Չորրորդը կպատասխանի—մեզ մոտ գիշեր ե:

Հարցնենք այդ յերկրի բնակիչներին—բոլորին միանգամից, ռադիոյով.—տարվա վո՞ր յեղանակն ե ձեզ մոտ:

Մեկը կպատասխանի—մեզ մոտ դարուն ե:

Մյուսը կպատասխանի—մեզ մոտ ձմեռ ե:

Հարցնենք այդ յերկրի բնակիչներին.—ինչո՞վ եք դուք հարուստ:

Մեկը կպատասխանի՝ մենք—յերկաթով:

Մյուսը՝ մենք—հացով:

Յերրորդը՝ մենք—քարածխով:

Չորրորդը՝ մենք—բամբակով:

Հինգերորդը՝ մենք նավթով:

— Տվե՛ք մեզ արտկարներ ու գութաններ, և մենք կտանք հաց,—ասաց գյուղը:

— Տվե՛ք մեզ քարածուխ, և մենք կտանք չուգուն, ասաց գործարանը:

— Մեզ մոտ շատ կան հանքեր. ուղարկեցե՛ք գնացքներ: Մեզ մոտ շատ կան հանքեր. ուղարկեցե՛ք մեքենաներ:

— Պետք ե պլանով աշխատել,—ասաց Կուսակցությունը:

— Ճիշտ ե,—պատասխանեց ամբողջ Խորհրդային Միությունը:

— Հինգ տարում մենք կպատրաստե՞նք 17 միլիոն տոնն չուգուն:

— Կպատրաստե՞նք,—պատասխանեցին յւրաքի բանվորները:

— Կկառուցե՞նք 42 ելեկտրոկայաններ:

— Կկառուցե՞նք,—ասաց Միությունը:

— Գետնի խորքից կհանե՞նք 120 միլիոն տոնն ա-

ծուխ:

— Կհանէ՛նք:

— 800 հազար տրակտոր կտատրաստե՞նք:

— 800 հազար տրակտո՛ր: Կտատրաստե՛նք:

— 25 հազար կիլոմետր յերկաթգլիծ կա՞նցկաց-
նենք:

— Կա՛նցկացնենք:

— Հնգամյակի վերջում ամբողջ յերկիրը կծած-
կե՞նք կոլտնտեսություններով:

— Կծածկե՛նք:

Ով վոր ձեռքում բռնած ուներ ղեկը,

է՛լ ավելի սեղմեց նա այդ ղեկը:

Ով վոր ձեռքում բռնած ուներ մուրճը,

է՛լ ավելի սեղմեց նա այդ մուրճը:

Ով վոր ձեռքում բռնած ուներ լծակը,

է՛լ ավելի սեղմեց նա այդ լծակը:

Կուսակցությունն ասաց՝ մեզ խանգարում են թըշ-
նամինները, մեզ են ուղղել թնդանոթների բերան-
ները. թշնամին սողոսկել է մեր գործարանները—
աչքերդ չորս արա՛:

Ով վոր ձեռքում բռնած ուներ հրացանը,

է՛լ ավելի սեղմեց նա այդ հրացանը:

Յեվ ամբողջ յերկիրը վոտքի յելավ սոցիալիստա-
կան հայրենիքի մեծ կառուցումները և հաղթանակները
պաշտպանելու համար:

Հ Ա Ր Ց Ե Ր.

1. Ի՞նչ տարածություն է բռնում Խորհրդային Միությունը:

2. Ի՞նչ հարստություններ ունի:

3. Ինչո՞ւ թշնամիները պատրաստվում են հարձակվելու Խոր-
հրդային Միության վրա:

4. Ի՞նչպես կվերաբերվի բանվորությունն ու գյուղացիու-
թյունը թշնամիների հարձակման դեպքում:

Դիտեցե՛ք՝ ինչպե՞ս ենք դրում ուրիշի խոսքերը և ինչպես կա-
րելի յե փոխել, յեթե նրանց խոսքերի միտքը մեր կողմից ասենք.

1. Մեկը կպատասխանի—մեզ մոտ առավոտ է:
Մեկը կպատասխանի, վոր իրենց մոտ առավոտ է:

2. Մյուսը կպատասխանի—մեզ մոտ կեսօր է:
Մյուսը կպատասխանի, վոր իրենց մոտ կեսօր է:

3. Աշտոն ասաց, «Յեա հիվանդ եմ»:

Աշտոն ասաց, վոր ինքը հիվանդ է:

4. Գրիգորը նամակում գրել է. «վաղը դասի կգամ»:

Գրիգորը նամակում գրել է, վոր վաղը դասի յե գալու:

Ինքներդ կաղմեցե՛ք ուրիշի խոսքեր և փոխեցե՛ք՝ նրանց ասածի
միտքը ձեր կողմից ասելով:

56. ԱՇԽԱՐՀՈՎ ՄԵԿ

Եյ-հե՛յ, ինչքան արտեր ունենք—

աշխարհով մեկ, աշխարհով մեկ.

ջահել սրտի վարդեր ունենք—

աշխարհով մեկ, աշխարհով մեկ:

Տրակտորի ձենն է ընկել՝

դաշտերի մեջ—աշխարհով մեկ,

գեղ-գեղովի իրար ընկեր

աշխատանքի—աշխարհով մեկ:

Արեւին յելել, սարն է բռնել,

չողքը կարմիր ճամբեքով մեկ.

կոլխոզների ա՛րան ել, բե՛ռն ել,

հանդն ու արտը—աշխարհով մեկ:

Առուների ջուրը եսօր

առատ-առատ դաշտերով մեկ.

կուլակների կոռոցն անդոր,

սուտ ու կեղծիք—աշխարհով մեկ:

Բայց ելի վառ արտերը մեր

հնձի պատրաստ—աշխարհով մեկ:

եղի պայծառ սրտերը մեր—
աշխարհով մեկ, աշխարհով մեկ:

Հ Ա Ր Ց Ե Ր.

1. Ի՞նչ է նշանակում «կուլակների կոտորը»

Հողակի դոյական անունները յեղակի դարձրեք, յեղակներն ել՝ հողակի:

57. «ԱՐԱՐԱՏ» ԳՈՐԾԱՐԱՆՈՒՄ

Հոկտեմբերի 18-ին մեր խումբը վորոչեց գնալ «Արարատ» գործարանն ուսումնասիրելու:

Մենք ողակների բաժանվեցինք ու ճամպա ընկանք:

Մտանք «Արարատ» գործարանը, վորն իջևանի տալավորություն թողեց մեզ վրա. գործարանի բակը լցված էր գյուղական սայլերով:

Գյուղացիները խաղող եյին բերել վաճառելու: Գործարանի վարիչը խնդրեց մի ընկերով, վոր մեզ առաջնորդի և աշխատանքներին ծանոթացնի:

Մենք շատ դարձացանք. վոչ մի աշխատանք ձեռքով չէր կատարվում. ամեն ինչ մեքենան էր անում:

Գործարանի խաղող ճվող մեքենան որական յերեք հարյուր փութ խաղող էր ճվում, իսկ Առաջին Սորհըղային Տնտեսության այգում վստքով որական քառասուն փութ եյին ճվում:

Զարմանալի յեր նաև այն, վոր ողու, կոնյակի չչեղը մեքենան էր մաքրում ու լցնում:

Շնորհիվ մեքենայի՝ թե՛ գործն էր արագ կատարվում և թե՛ բանվորի աշխատանքն էր թեթեվանում:

Մասանները, գինու տեղափոխությունն ու դտումը լավ ուսումնասիրելուց հետո, դպրոց վերադարձանք:

Հետեվյալ դասին մեր գրույցի նյութն էր «Արարատ» գործարանը:

Հ Ա Ր Ց Ե Ր.

1. Դուք ի՞նչ գործարան եք տեսել:
2. Ի՞նչ փոփոխություն է մտցնում մեքենայումը ձեռնարկության մեջ:
3. «Արարատ» գործարանի դերը մեր անտեսության մեջ:
4. Ձեր երևույթի մասին չարադրություն գրեցե՞ք:

Գինի, գինու, գինուց, գինով, գինում:

Ուրիշ գոյական անուններ գտե՛ք նույն վերջավորություններով:

Ինչո՞ւ «Արարատ» բառը չափերաների մեջ է տառադրված (տես հոգված № 5-ի վերջը):

Կաղացե՛ք հետևյալ խոսքը.

Հոկտեմբերի 18-ին մեր խումբը վորոչեց գնալ «Արարատ» գործարանն ուսումնասիրելու:

Պատասխանեցե՛ք հետևյալ հարցերին.

1. Մեր խումբն ի՞նչ արեց:
2. Ո՞վ վորոչեց:
3. Ի՞նչ փորոչեց:
4. Յերը վորոչեց:
5. Վորոչեց ո՞ւր գնալ:
6. Ի՞նչ գործարան:
7. Ինչո՞ւ գնալ:
8. Վո՞ր ամսի 18-ին:

Նոսրի մեջ, բացի բայից, ամեն մի բառ լրացնում է վորեկ ուրիշ բառի միտքը (խումբը վորոչեց, —18-ին վորոչեց, —վորոչեց գնալ, —գնալ գործարան, —գնալ ուսումնասիրելու, —«Արարատ» գործարան, —հոկտեմբերի 18-ին):

Մենք հարցերով կարող եմք իմանալ, թե վո՞ր բառը ի՞նչ բառի միտքն է լրացնում:

Բայը բուն խոսքն է. ուրիշ բառեր լրացնում են նրա միտքը:

Ինքներդ խոսքեր ասացե՛ք և ցույց տվե՛ք, թե վո՞ր բառը վորի՞ լրացումն է:

Լսո՞ւմ եք. սպասե՛ք մի փոքր, յետ ձեզ կապտամեմ բոլորն սկզբից:

Գնո՞ւմ եք— լա՛վ, յետ կապտամեմ ծաղիկներին ու խոտերին:

— Սիրո՞ւն կակաջներ, դե՛, լա՛վ լսեցեք արեւիկ պատմութիւնը:

Աղջիկս հիվանդ եր...

— Գիտե՞ք, նա յետ ձեզ նման մի ծաղիկ եր, նախ շունիկ դեմքով, վոսկեղանգուր մազերով:

Աղջիկս հիվանդ եր...

Բժիշկը յեկաւ, էջով մեր բնակարանը: Նա տխուր եր: Ինչո՞ւ... Հա՛, հիշում եմ, — նա չէր սիրում ներքեւի հարկերը:

Նա էջով ներքեւ, նայեց իմ աղջկան, նայեց սեւ նյակի պատերին:

— Խոնավ ե, — ասաց, — պիտի փոխեք բնակարանը՝ պիտի արեւիկող սենյակ ճարեք:

— Քա՛նի յերեխա ունեք, — հարցրեց:

— Յերեքն եյին. յերկուսը մեռան... մնաց այս մեկը... Աղատե՛ք իմ աղջկան, նա մեր տան վոգին ե:

Նա ինչ վոր դեղ գրեց ու տխուր դեմքով դուրս գնաց:

— Հայրի՛կ, ի՞նչ գրեց բժիշկը, — հարցրեց աղջիկը:

— Արժե գրեց, սիրելի՛ս, արեւ գրեց, վոր քեզ վրա փայլի, և դու առողջանաս:

Ու են որը գնացի արեւ փնտռելու: Գնացի չա՛տ հեռու և վերջապէս գտա արեւիկող մի բնակարան:

— Սիրո՞ւն կակաջներ, արեւի կարմիր գովակներդ ավելի լավ չե՞ր լինի՝ ձեզ մոտ բերեյի իմ վոսկեծամիկ աղջկան:

Դուք նրան կղուգեյիք կարմիր ու կանաչ...

Բայց, հա՛, դիտեմ, դուք հաց չեյիք տալ իմ աղջկան. դուք սնվում եք վաղորդյան ցողով:

Լսե՛ք, յետ դեռ չեմ վերջացրել:

Մյուս առավոտ պիտի տանեյի Լուսիկին արեւի թուն, բայց յերբ լուսացաւ, նա ինձ կանչեց, ձեռքս բռնեց ու փակեց աչքերը:

Հետո յեկան մարդիկ, նրան տարան...

Ու յերբ վոսկեծամիկ աղջիկս հեռացաւ մեղանից, մեր տան վոգին ել նրա հետ գնաց:

Մենք բոլորս այրվեցինք լալուց, ու յետ դարձա արեւի հիվանդ:

Յետ գնում եյի, նստում փոքրիկ դերեղմանի մոտ և սպասում արեւածագին:

Ու միշտ տեսնում եյի Լուսիկին արեւը գրկած և իր մազերը փռած նրա վրա...

Բայց յերբ պատմում եյի արեւի մասին, կինս ու մայրս չեյին հավատում. նրանք կարծում եյին, թե խեղադար եմ, և վողբում եյին այրված, ցամաքած աչքերով:

Ու մի որ ել յետ դիմեցի արեւին.

— Հղո՛ր արեւ, — ասացի, — մի մեծ գանգատ ունեմ քեզանից. ինչո՞ւ դու մի հատ չողքի խնայեցիր իմ աղջկան, ինչո՞ւ սպանեցիր ու տարար իմ Լուսիկին:

Նա տխրեց ու մթնեց:

— Գնա՛, — ասաց, — գնա՛, հայտնի՛ր աշխարհին, ասա՛, վոր վերեւի հարկն արեւի շողքերը խլեց, ստվեր դրեց ներքեւի հարկին ու սպանեց քո վոսկեհեր աղջկան:

Հ Ա Ր Ց Ե Ր.

1. Ինչի՞ց եր հիվանդացել Լուսիկը, և ի՞նչը կարող եր նրան բժնկել:

2. Ի՞նչպէս պետք է հասկանալ հետեւյալ խոսքը. «վերեմի հարկը արեւի չողքը խլեց և այլն»:

3. Ի՞նչ տրամադրութեամբ ես լցվում եմ այս դրամքը կարդալով. ինչո՞ւ:

Կարդացե՛ք հետեւյալ կտորը.

Յես գնում եմ, նստում փողերի՛կ դերեզմանի մոտ և սպասում արևածաղին:

Յես ի՞նչ եմ անում—գնում եմ... նստում եմ... սպասում եմ:

Քանի՞ միտք կա վերեւի օրինակի մէջ:

Ամեն մի մտքի մէջ քանի՞ բայ կա:

Վո՞ր մտքի մէջ ի՞նչ բառ է պահասում:

Վո՞ր մտքից հետո յի ստորակետ դրված:

Վո՞ր մտքից հետո ստորակետ չի դրված և ինչո՞ւ:

Միտքը լրանալուց հետո (վերջը) ի՞նչ նշան է դրված:

Մի քանի մտքեր կամ խոսքեր միանալով՝ կարող են մի բարդ ու լրիվ միտք արտահայտել: Բարդ միտքը յերկու կամ ավելի բայ է ունենում:

Վորտեղ միտքը լրանում է, այլևս կիստա չի մնում, այնտեղ վերջակետ է դրվում:

Բարդ խոսքի առանձին խոսքերը բաժանվում են ստորակետով աշխտեղ, վորտեղ արտասանելիս մեր ձայնը բարձրացնում ենք:

59. Գ Ի Ք Ո Ր Ը (Հատված)

Համբոն քողաքում Գիքորին ծառա տվալ բազազ Արտեմի տանը: Պայմանն այն էր, վոր Գիքորը պետք է տունը մաքրեր, ամանները լվանար, վորտեղ ամանները սրբեր, դուքանը բաժին տաներ ու ես տեսակ ծառայութեանը՝ մինչև մի տարի:

Մի ամբողջ յետը քողաքը նրան պետք է տաներ դուքան, շիներ դուքանի «աշկերտ», ու ետպես Գիքորը պետք է բարձրանար:

Հինգ տարի դեռ փող չեմ տալ,— ասալ քողաքը պայմանը կապելիս:— Թե դրուստը կուզես, դեռ դո՛ւ պետք է տաս, վոր քու վորդին բան է սովորելու: Ա՛խր, խելի՛ բան չգիտի...

— Վո՞րտեղից գիտենաս, խաղեյին ջան,— պատասխանեց Համբոն,— վոր գիտենար, ել ո՞ւր կրեթելի. յես ել բերել եմ, վոր բան սովորի...

— Կսովորի, ամեն բան կսովորի: Ենպես սովորի վո՞ր... Զեր կողմերից են նիկոլն ի՞նչ և, վոր իրեն համար դուքան ունի բաց արած. նա յել ինձ մոտ է մարդ



դառնել: Ամա վերջում մի ջուխտ չայի գդալ ու մի քանի բան գողացալ...

— Զե՛, խաղեյին ջան, սա գողանա՛լ չի: Վոր եղպես բան անի, կդամ, կոնիցը կրանեմ, ես Գուռը կըզցեմ:

— Հա՛, վոր ձեռը հալալ ե՛ մարդ կդառնա:

— Իմ դարդն ել են ա, ազա՛ ջան, վոր մարդ դառնա, լեզու սովորի, գրել-կարդալ սովորի, նստել-վերնալ կենալ սովորի, մարդ ճանաչի, վոր աշխարհքումն ինձ կենալ խեղճ ու զուրկ չմնա... Ինքն ել աչքաբաց յերեն խա յա. մեր գեղական շկոլումն ել դրամանաչ ա ելել: Գրի սեն ու սպիտակը ջոկում ա: Ամա աղաչանքս են ա, վոր լա՛վ մտիկ անեք, դարեր յերեխա յա, քորիա յա...

Բաղադրը Համբոյին միամտացրեց ու դուրս գնաց բարձր ձենով հրամայելով՝ «Չա՛յ բերե՛ք, հա՛ց բերե՛ք սրանց համար...»

Հեր ու վորդի նստած եյին բաղադ Արտեմի խոհանոցում:

— Դե, հիմի դո՛ւ գիտես, Գիքոր ջան, տեսնեմ ինչ տեսակ տղա յես դուրս գալի... Հենց պետք ե անես, վոր... յես ինչ գիտեմ... ո՛վ տեր աստո՞ծ... — մռնչաց Համբոն ու չիբուխը լցրեց:

Այնինչ Գիքորը չորս կողմն եր դիտում:

— Ապի, սրանք բուխարի չունե՞ն:

— Չե՛, սրանցը փեջն ա, ա՛յ, են ա փեջը...

— Կալ ել չունե՞ն:

— Սրանք քաղաքացի յեն, գեղացի հո չեն, վոր կալ կախեն:

— Բա վո՞րտեղից են հաց ուտում:

— Փողով առնում, — ուտում են: Հացն ել են փողով առնում, յեղն ել, կաթն ել, մածունն ել, փետն ել, ջուրն ել...

— Վա՛ր...

— Բա՛, սրան Թիֆլիզ կասեն: Դու հալա ղոչաղ կա՛ց, դեռ շատ բան կիմանաս:

Մտիկ արա հա՛ — ձեռնաքաշություն չանես: Կարելի յա քեզ փորձելու համար փող վեր գցեն, մոտենաս վոչ: Թե վերցնես ել, տար ասա «խանո՛ւմ, ես ի՞նչ փող ա, եստեղ վեր ընկած եր. աղա՛, ես բանն եստեղ գտա», թե չե...

— Եստեղ ել պիտտավ կա՞ վոր...

— Կա՛, բաս... Վախտ ու անվախտ դես-դեն չընկնես, ձեռք ընկած փողը քոռ ու փուչ չանես, հաղար ու մի պակասություն ունենք: Քեզ ել լա՛վ պահի, գիշերը բաց չըլես, մրսես վոչ... Մինմին յեկողի հետ գիր ղըր-կի... — մերթ-մերթ չիբուխը բերանից հանելով վոր-դուն խրատում եր Համբոն: Այնինչ Գիքորը ննջում եր:

— Հացի կտորտանքն ու քարթուն կտան, չեբախրի

Թերմացքը կտան. շատ անգամ ել իրանք կուտեն, քեզ տալ չեն, բան չկա, ծառայի կարգն եզ ա... Որեր են կրթենն, անց կկենան...

Շարունակում եր հերն իր խրատները, բայց Գիքորը հորը թինկը տված՝ քնել եր արդեն:

Են յերկու որը նա այնքան բան եր տեսել, ես ու են կողմը նայել, վոր հոգնել եր բոլորովին:

Մրդով լիքը խանութները, գեգերի նման դարսած գույնգույն չթերը, տեսակ-տեսակ խաղալիքները, ուսումնարան գնացող կամ դարձող յերեսխաների խմբերը, իրար յետեւից սլացող կառքերը, ուղտերի շարքերը, կանաչի բարձած ավանակները, թաբախները գլխներին կլինտոները... ես ամենի դուռոցն ու գնդոցը, աղմուկն ու աղաղակն իրար խառնված՝ դժվժում եր նրա գլխում: Յեվ նա հոգնել եր ու հորը թինկը տված՝ քնել:

ՀԱՐՑՆԵՐ

1. Ինչի՞ց ստիպված Համբոն Գիքորին քաղաք տարավ:
2. Համբոն ի՞նչ խրատ ե տալիս Գիքորին:
3. Ինչո՞ւ չուտ ննջում եր Գիքորը:
4. Ի՞նչ պայմանով բաղադ Արտեմը Գիքորին ծառա վերցրեց:

Դիտեցե՛ք յերեք կետը (...) հետեյալ խոսքերի վերջը.

1. Ենպես սովորի վո՞ր...
2. Հենց պետք ե անես, վոր...
3. Յես ի՞նչ գիտեմ...
4. Թե վերցնես ել, տար, թե չե...

Այստեղ, վորտեղ գրողը խոսքը թերի յե թողնում, չե՛ վերջացնում, յերեք կետ ե գրվում:

60. ՆԱՄԱԿ ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՊԻՈՆԵՐՆԵՐԻՆ

Սիրելի ընկերներ,

Ձեր ներկայացուցիչ Դոմմը պատմեց մեզ, վոր դուք

չատ քիչ տեղեկութիւն ունեք մեր յերկրում կատարվող սոցիալիստական շինարարութեան մասին:

Մեզ համար հասկանալի յէ, վոր կապիտալիստական մամուլն ու դպրոցը ձեզ չեն հաղորդում մեր յերկրի մասին այն, ինչ վոր իրական է. նա ստեղծում է զանազան զրպարտութիւններ ու մեր բոլոր նվաճումները ձեզ հաղորդում է, վորպէս թերութիւններ: Նրանք ցանկանում են մեր յերկիրը նկարագրել վորպէս սովի ու տանջանքների յերկիր: Նրանք այդ անում են, վորպէս ղի ձեր հայրերն ու յեղբայրները չհետեւին Ռուսաստանի պրոլետարիատի որինակին:

Հաղորդում ենք ձեզ իրականութիւնը:

Մենք հաջողութեամբ ավարտում ենք սոցիալիստական I հնգամյակը, վորի իրադործումը կապիտալիստների համար յերազ եր թվում:

Մեր յերկրում որեցոր բարձրանում է աշխատավորութեան նյութական ու կուլտուրական մակարդակը: Դրան ապացույց՝ սոցմրցութեան ու հարվածայնութեան հսկայական աճը, դպրոցների ու համալսարանների ցանցի լայնացումը, մեր արդյունաբերական հսկաների գործի դրվելը, գյուղատնտեսութեան կոլեկտիվացումը և այլն:

Մեր հաղթանակները մի-մի հարված են կապիտալիստներին:

Ամուր պահեցեք մեր առաջնորդ կոմկուսի կարմիր դրոշը և հետեւեցեք մեր յերկրի որինակին:

Պիոներական բարեկերպ

ՍՍՐԳԻՍ ԴՍՐՐՆԸ

15 հոկտ. 1932 թ.

Յերեւան

1. Կապիտալիստներն ի՞նչ են ասում մեր յերկրի սոցիալիստական շինարարութեան մասին և ինչո՞ւ:

2. Աշխատավորութեան կուլտուրական մակարդակը մեղմում այժմ և անցյալում:

3. Սոցիալիզմի շինարարութիւնն ինչպի՞ս է աղքատ կապիտալիստական աշխարհի վրա:

Այս նամակի բովանդակութիւնը պատմեցեք ձեր կողմից.

Որինակ՝ Սարգիսը դրում է, վոր մեր ներկայացուցիչ Դոմը պատմել և... և այլն:

61. ՄԵՐ ՊԱՏԱՍԽԱՆԸ

— Վանիկ, դու կարդացել ե՞ս այսօրվա «Պիոներ կանչ»-ը, — ասաց Միկիչը:

— Չե՛, չեմ կարդացել:

— «Պիոներ կանչ»-ում պատկերակից Վիկուչը գրում է, վոր Ամերիկայում 8 պատանու և 34 լեռնագործ բանվորների հեղափոխական գործի համար պետք է նստեցնեն ելեքտրական աթոռին:

— Հենց այսօրվա պարագմունքին այդ հարցը դրենք, դու ել կգեկուցես, — ասաց Վանիկը:

— Շատ լավ:

Վանիկն ու Միկիչը վաղեցին ակումբ: Ղեկավարը պարագմունքը նոր եր սկսել, յերբ նրանք ներս մտան:

— Ընկե՛ր Աշխեն, ինձ ձայն տվե՛ք, — ասաց Միկիչը:

— Յես առաջարկում եմ ետրվա դրույցը լինի 8 պատանու և 34 լեռնագործների ելեքտրական աթոռին նստեցնելու մասին:

— Շատ լավ, ասաց ղեկավարը:

Ու Միկիչն սկսեց մանրամասն պատմել «Պիոներ կանչ»-ում գրված պատկեր Վիկուչի հոդվածը, — Մենք պետք է մեր պատասխանը տանք, — վերջացրեց նա:

Մենք մեր բողոքն ենք հայտնում ամերիկյան բուր-
ժուաներին: Վորպես պատասխան՝ բոլորս մտնենք պա-
տանի մոպրահանների շարքը, —ասաց Սեդիկը:

— Վորպես պատասխան բուրժուաներին՝ 34 լեռ-
նագործ բանվորների յերեսխանների համար հավաքենք
ինտերնացիոնալ 5-ական կոպեկ, մի անգամ, — առա-
ջարկեց Հրայրիկը:

Ու հենց տեղում վողեվորված հոկտեմբերիկները
հավաքեցին 3 ու 50 կոպեկ:

— Այս առթիվ ե՛լ ավելի խտացնենք Մոպրի շար-
քերը, —ասաց Կիմիկը:

— Սա կլինի մեր պատասխանը ամերիկյան բուր-
ժուազիւյին, —վողեվորված ասում էյին հոկտեմբե-
րիկները:

Հ Ա Ր Ց Ե Ր.

1. Ի՞նչ բան է ՄՈՊՐ-ը:

2. Ի՞նչ միջոցներով բուրժուաները կոչում են բանվորներին
և սրանց ոգնողների դեմ:

3. Դո՞ւք ինչ ձևով եք ոգնում արտասահմանի բանվորներին
վորք մնացած յերեսխաններին:

Պատմեցեք այս պատմվածքի բովանդակությունը, առանց
խոսակցության ձև տալու:

Որինակ՝ Միկիչը պատահեց Վանիկին ու հարցրեց, թե նա
այդ որվա «Պիոներ Կանչ»-ը կարդացել է, թե վոչ: Յերբ իմա-
ցավ, վոր չի կարդացել... և այլն:

62. ՆԱՄԱԿ ԱՄԵՐԻԿԱՅԻՑ, ԸՆԿԵՐ ՍՏԱԼԻՆԻՆ

ԱՇԽԱՐՀՈՒՄ ՄԻԼԻՈՆՆԵՐ ԿԱՆ, ՎՈՐՈՆՔ ԽՍՀՄ ՀԵՏ ՆՆ

Ստալինին, Կրեմլ, Մոսկվա

Սիրելի՛ ընկերներ,

Ուղարկում եմ ձեզ 100 դոլլար՝ ձեր հայեցողու-
թյամբ խորհուրդների կարիքների համար ծախսելու:

Բանվորներին յերկիրը, վոր կառուցում է ապագա աշ-
խարհը, կարիք կզգա փողի: Սա իմ ոգնությունն է, ըստ
իմ ունեցած միջոցների: Յես սրավարձով աշխատող
բանվորուհի յեմ՝ լվացարար: Ասրել եմ ու ապրում եմ
աղքատության մեջ: Գտնվում եմ մաշված շորերի մեջ:
Աշխատում եմ որահան 12—16 ժամ, չիմանալով՝ ի՞նչ
բան է արձակուրդը: Մի խոսքով՝ անընդհատ շարաթ»:
Յեվ ահա ինձ հաջողվեց հավաքել մի բան՝ ԽՍՀՄ հա-
րադատ բանվորության համար: Ձեր թշնամիներն աշ-
խատել են և դեռ աշխատում են իրենց բոլոր ուժերով
արհամարհել ձեզ: Ցույց տվե՛ք իմ այս նամակը նրանց
և ասացե՛ք, վոր աշխարհում միլիոնավոր մարդիկ կան,
վորոնք հավատում են ձեզ, ձեր յերկրին և Կոմկուսակ-
ցությանը և դրա համար ոգնում են ձեզ իրենց ուժերը
ներածին չափ: Մեր ընտանիքը յերեք հոգուց է բաղկա-
ցած —ամուսինս, վորդիս և յես: Մեզ մոտ չկան խոսակ-
ցության ավելի լավ նյութեր, քան ԽՍՀՄ: Դուք բան-
վոր դասակարգի նեցուկն եք, լավադույն հույսը, վո-
րոնք ապրում են և շնչում անիծված ստրկության ճի-
րաններում: Մենք ձեզ ենք ուղարկում մեր ամենաշիւրմ
վողջույնները:

Ընկեր Ստալինը շնորհակալություն է հայտնել Ուլ-
մարին:

Դրամը հանձնված է Մոսկվայի Տրիոխգորնայա
մանածագործարանի բանվորուհիների մանկական մսու-
րին:

Հ Ա Ր Ց Ե Ր.

1. Ամերիկայի բանվոր-բանվորուհիներին վրձակի մասին ի՞նչ
է պարզում այս նամակը:

2. Բանվորուհի Ուլմարն ինչպե՞ս է արժեքավորում ընկ.
Ստալինին:

3. Այս նամակն ի՞նչ նշանակություն ունի պրոլետարիատի
համար:

Ձեր բառերով, վոչ նամակի ձեռով, պատմեցե՛ք ամերիկացի
բանվորուհու կյանքը և նրա ցանկություններն ու հույսերը:

63. ԿՈՄՈՒՆԱՅԻ ՊԱՏԱՆԻ ՀԵՐՈՍՆԵՐԸ

Փարիզյան Կոմունայի հերոսական աշխատանքնե-
րին աղաթիվ մասնակցություն են ցույց տվել և յերեխա-
ները՝ կոմունարների անչափահաս վորդիները:

Յերբ նրանց հայրերն ու մայրերը հրացանը ձեռքին
դիրքերում կռվում էյին կատաղած թշնամու դեմ, փոք-
րերը տանը հանգիստ նստած չէյին:

Նրանք իրենց կռվող ծնողներին մթերք ու փամ-
փուշտ էյին հասցնում, նրանք էլ դիրք մտած՝ հերոսա-
բար պայքարում էյին թշնամու դեմ:

14 տարեկան մի տղա, չնայած տեղացող մահացու
գնդակներին, դիրքից դուրս է յեկնում ու վերցնում իր
սպանված ընկերոջ դիակը. իբրև կռվող՝ ամենից շատ
նա յե գնդակներ արձակում թշնամու վրա:

Մի ուրիշ տղա, յերբ տեսնում է, վոր թշնամու
գնդակից զոհ գնաց իր մայրը, սկսում է ավելի ու ավելի
կատաղությամբ կռվել:

Նա վիրավորվում է և դերի ընկնում թշնամու ձեռ-
քը: Այնտեղ նա ասում է.

— Տեսնո՞ւմ եք, փոքրերն էլ դիտեն հեղափոխու-
թյան համար մեռնել:

Այսպես հերոսաբար պայքարեցին Փարիզի փոքրիկ
կոմունարներն ու հաղարից ավելի զոհ տվին:

Հ Ա Ր Ց Ե Ր.

1. Ի՞նչ է Փարիզյան կոմունան:

2. Յերբ թշնամին փորձի հարձակվել մեր յերկրի վրա, զո՞ւր
ինչ ձեվով կողնեք մեր կռվողներին:

Մայիսի 18-ն էր: Կոմունայի վերջին օրը:

Հերոսական կռվից հետո ընկնում է Պեր-լա-Շեզ
գերեզմանատան դիրքը, և Կոմունայի վերջին բեկորնե-
րը գիմում են դեպի Ֆոնտենա փողոցի բարիկադր:

Այնտեղ են կոմունայի վերջին աստղերը՝ Կենտրո-
նական Կոմիտեյի անդամները՝ կարմիր Ժուլավեննե-
րով զարդարված:

Հսկայական կարմիր դրոշը ծածանվում է բարիկա-
դի վրա:

Մնացել են վերջին բեկորները և պատրաստվում են
որհասական կռվի: Արդեն հոգեվարքի մեջ է մոտակա
Սեն-Մոր փողոցի բրիկադր: Նրանցից վոչ հեռու, մյուս
բարիկադի վրա մնացել է միայն մի մարդ. բայց համա-
ռությամբ շարունակում էր կռվել:

Շատ չանցած՝ հեվիհեվ վազում է դեպի կարմիր
բարիկադր մի աղջիկ:

— Յես գալիս եմ ձեզ ոգնելու, — կանչում է նա, —
Սեն-Մորից եմ գալիս... Նա արդեն ընկավ:

— Այստեղ — ամենավտանգավոր տեղն է. մի՛ գա
այստեղ:

— Վո՛չ, յես յեկել եմ ոգնելու և պիտի ոգնեմ:

Վերջին բռպկներն էյին:

Խաղժամթերքի վերջին փչբռնքներն էյին մնացել:

Հերոսները լցրին թնդանոթները յեղած ուղմա-
մթերքով ու վերջին անգամ արձակեցին:

Լավեց որհասական վորտը, և ամեն ինչ լուեց...

Կոմունան ընկավ:

Բայց դեռ յերկար տարիներ հիշում էյին այն կտր-
միր բարիկադին ու այն անձնվեր հերոսուհուն, վոր յե-
կել էր ոգնելու:

Ման-Ֆուլն-Սյունին փող էր պետք:

Նա ապրում էր իր խարխուլ խրճիթում, իր հիվանդոտ կնոջ և հիվանդ յերեխայի հետ:

— Յեթե յես նյու (կաթ) չունենամ, մեր փոքրիկը կմեռնի,—ասաց կինը՝ Մա-Ֆուլն-Սյունին:

Կինն ել յերկար չի ապրի. որեցոր նրա ձեռքերն ու վոտքերը բարականում են, կուրծքը չորանում: Նա կաթ չի ունենա:

Մա-Ֆուլն-Սյունը սեվ ու կոշտացած ձեռքեր ուներ: Այդ ձեռքերը աշխատանքից չեյին վախենում, բայց աշխատանքը վատ էր կերակրում նրան և իր ընտանիքին:

Իսկ Պեյ-Տին-Ֆուլն շատ փող ուներ, շատ հող և շատ պարտապան:

Պեյ-Տին-Ֆուլն առանց թույլտվության մտնում էր գյուղացիների դաշտերը, մտնում նրանց խրճիթները: Իսկ Մա-Ֆուլն-Սյունն իրավունք չուներ անգամ նրա տան մոտով անցնելու:

2.

Մա-Ֆուլն-Սյունն աշխատանքը վերջացրեց:

— Պետք է դնալ տիրոջ մոտ փող ստանալ. — վորոչեց նա:

Նա հանեց իր պատառոտած կոշիկները և բոբիկ վոտքերով ներս մտավ Պեյ-Տին-Ֆուլնի սենյակը:

Պեյ-Տին-Ֆուլն հենց նոր էր ճաշել. նա հանգստանում էր:

— Յես յեկել եմ փող խնդրելու, պարո՛ն. յերեխաս հիվանդ է, կինս՝ մահամերձ, — շատ կամաց ասաց Մա-Ֆուլն-Սյունը:

— Ստացիր Յզյան-Չի-Ֆուլնից. նա ինձ պարտ է: Մա-Ֆուլն-Սյունն աչքերը չուեց:

— Բայց չե՞ վոր ծեր Յզյանը մի ամիս առաջ է մեռել:

— Վերցրո՛ւ նրա խրճիթը քո աշխատանքի փոխարեն, — պատասխանեց Պեյ-Տին-Ֆուլն:

— Նա խրճիթ չուներ. նրա խրճիթը դուք յերեք տարի առաջ էք ծախել. նա փողոցում մեռավ:

Պեյ-Տին-Ֆուլն կանչեց ծառաներին, վորոնք Մա-Ֆուլն-Սյունին դուրս չպրտեցին:

3.

Յերկու շաբաթից հետո Մա-Ֆուլն-Սյունի կինը մեռավ. մոր մահից մի քանի օր հետո մեռավ և յերեխան:

Մա-Ֆուլն-Սյունը մ'աց մենակ:

Նա նստեց իր խրճիթի դռանը:

— Ամեն տեղ այսպես է... Գնե՜րալները կռվում են, մենք մեռնում. հարուստները հարստանում են, մենք՝ աղքատանում. նրանք մեղավոր են, մենք ենք դատվում... Մտածում եմ Մա-Ֆուլն-Սյունը:

Նա հիշեց իր փոքրիկին.

— Անիծվե՛ք դուք, — դռչեց նա: Յես գնում եմ նրանց մոտ, վորոնք պատրաստվում էն ձեզ վոչնչացնելու:

Յեվ նա դնաց անտառ:

Անտառում պարտիզանական առանձին խմբակներ էին կազմվում եր չինական կարմիր բանակը:

4.

Գիշերը Պեյ-Տին-Ֆուլն իր մուտքի մատյանում դրանցում էր շաբաթվա յեկամուտը:

Մա-Ֆուլն-Սյունն այս անգամ արդեն առանց կոշիկները հանելու մոտեցավ Պեյ-Տին-Ֆուլնին:

— Դու ինձ ստիպում եյիր իմ աշխատավարձն ստանալ մեռած մարդուց... Գնա՛, ստացիր... Յեր-Յոյանը սպասում ե քեզ...

Մա-Յուս-Սյունը հավաքեց նրա բոլոր մուրհակները, թղթերն ու գրքերը, անցավ Պեյ-Տին-Յույի դի-հի վրայով և դուրս յեկավ բախը:

Տան պատի տակ խարույկ եր վառվում:

— Այրվեցեք այն մարդու տան հետ միասին, վորը խլել է մեր կանանց, յերեխաներին և հայրերին,—գոչեց Մա-Յուս-Սյունը և մուրհակներն ու գրքերը նետեց խարույկի մեջ:

Հին խրճիթի մոտ ժողովուրդը հավաքվեց, վոր խորհրդային իշխանություն հիմնի:

Խորհուրդն ընտրվեց Պեյ-Տին Յույի բառական-րից:

Ընտրություններից հետո խոսեց Մա-Յուս-Սյունը:

Արդեն մթնում եր, յերբ նա արտասանում եր իր վերջին խոսքերը:

Նա կոչ արավ զբավել գեներալներից մի քաղաք ևս:

Այսպես հաստատվեց խորհրդային իշխանությունը Արևմտյան Յուդայանում:

Հ Ս Ր Յ Ե Ր.

1. Պեյ-Տին-Յույնը ի՞նչ միջոցներով եր հարստացել:
2. Մա-Յուս-Սյունի կինը և յերեխան ինչո՞ւ չուտ հիվանդա-ցան և մեռան:
3. Ի՞նչպես Յադայանում խորհրդային իշխանություն հաս-տատվեց:
4. Այժմ ի՞նչ և կատարվում Զինատանում:

66. ՌԳՆՈՒՄ ԵՆՔ ՄԵՐ ՀՆՈՒԱՎՈՐ ՅԵՂԱՅՐՆԵՐԻՆ 1.

Հունաստանի Պիրեա նավահանգիստը լցվել եր բանվորներով:

Ալ կարմիր զրոշակները ծածանվում եյին: Նավա-հանդստի բանվորների գործադուլն եր: Առաջին շարքե-րում եյին կոմունիստ ղեկավարները:

Գործադուլավորները ցույցի եյին դուրս յեկել. նրանց հետ եյին կանայք և յերեխաները: Մարտականո-րեն հնչում եյին բանվոր-բանվորուհիների հեղափո-խական յերգերը:

Հեռվից լսվեց ձիերի դուխուն: Մոտենում եր հե-ծելագործի մի ջոկատ:

Հնչեց սպիտակ հրամանատարի ձայնը.

— Յրվե՛լ, ցրվե՛լ:

Վորպես պատասխան, ավելի բարձր հնչեցին բան-վորների յերգերը: Նրանք շարունակեցին առաջ գնալ:

— Հարձակո՛ւմ, կրա՛կ, կրա՛կ,—գոռում եր հրա-մանատարը: Հեծելագործն արշավեց ցույցարարների վրա: Կատաղի կռիվ եր: Վորտում եյին հրացանները, փղզում եյին գնդակները, փայլում եյին մերկ օրերը: Բանվորները հերոսաբար զիմադրում եյին, կռվելով փայտերով, յերկաթներով:

Վերջացավ:

Տասնյակներով սպանված ու վիրավոր բանվոր-ներ... ընկան կանայք, յերեխաներ, զինվորներ...

Կառավարությունը կատաղած եր: Չերբակալվե-ցին բաղձաթիվ կոմունիստներ, բանվորներ:

Հեղափոխականները բանտում սարսափելի օրեր եյին ապրում, իսկ նրանց կանայք, յերեխաները մաա-նրված եյին սովի, քաղցի:

2.

Մի օր անհայտացած հեղափոխականներից մեկի տունը մտավ մի կին: Կույան, հեղափոխականի 12 տա-րեկան աղան, նրան տարավ իր հիվանդ մոր մոտ: Ան-ծանոթ կինը հայտնեց, վոր նրա ամուսինը մի քանի ուրիշների հետ կենդանի յե, ու գտնվում են Խորհրդա-

յին Ռուսաստանում. նամակ են ուղարկել: Կինը հայտնեց, վոր հեղափոխականների բնառանքները կստանան ոգնութուն Մոսկից. ինքը յեկել է Մոսկրի կողմից:

3.

Հաջորդ օրը Կոլյան, մի մեծ կապոց թևի տակ, զնաց բանտ՝ քեռու մոտ:

Բանտարկյալներն իսկույն չհասկացան թե ում կողմից եր այդ: Յերկրորդ և յերրորդ կապոցների հետ սաացվեց նաև նամակ Մոսկրից: Հեղափոխականների ուրախությունն անսահման եր: Նրանք նոր ուժ ստացան՝ դիմադրելու բանտի դահլճների չարչարանքներին:

4.

Յերեկոյ յեր: Բանտում աղոտ լույս եր: Լսվում եր ինչ-վոր թղթի խչոց: Բանտարկյալները ծածուկ կարդում եյին կոմունիստական թերթի այն համարը, վոր տեղ տպագրված եր Գերմանիայի, Ֆրանսիայի և այլ յերկրների Մոսկրի կազմակերպության բողոքը՝ ուղղված հույն կառավարության դեմ, իր վայրագ հարձակման առթիվ: Մոսկրը պահանջում եր բանտարկյալներին ազատել:

Բանտում լարված, սպասողական դրություն եր, դրսում, բանվորների մեջ՝ նույնը:

Բանտարկյալների դատավարության օրը նշանակված եր:

Ահա նամակ Մոսկրից. նա իր վրա յե վերցնում բանտարկյալների պաշտպանությունը դատավարության օրը:

Սակայն բուրժուական դատարանը խոսք չտվեց Մոսկրի ներկայացուցչին:

Հեղափոխականներն աքսորվեցին հեռավոր, ամայի կղզիներ:

Մոսկրն իր աշխատանքը կրկնապատկեց:

Աքսորյալներին պետք եր նամակ, դրականություն, սնունդ, հագուստ հասցնել:

5.

Վերջալույս եր: Անաֆի կղզում, ցերեկվա այրող

չողից հետո, աքսորվածներն իջել եյին ծովափ: Միքանի օր եր, ինչ նամակ, սնունդ չեյին ստացել: ամեն օր սպասում եյին սուբհանդակի:

Հեռվից նկատվեց ինչ-վոր շարժում ծովի վրա: Նավակ. յերեվի սուբհանդակն է:

Թագնվեցին զանազան տեղեր, սպասում են:

Նավակը մոտեցավ, յերեվաց ծանոթ նշանը:

— Կեցցե՛, կեցցե՛, — բացականչեցին աքսորյալները:

Այս անգամ շատ ուրախացրեց Մոսկրի սուբհանդակը: Նամակը Խորհրդային Միությունից եր: Բանվորները բոցավառ վողջույն են ուղարկում աքսորյալներին:

Նրանք գրում են Խորհրդային յերկրում կառուցվող սոցիալիզմի ու սրա խոշոր հաղթանակների, նվաճումների մասին: Նրանք հայտնում են, վոր վերցնում են իրենց վրա Հունաստանի կղզիների աքսորվածների շեֆությունը:

— Կեցցե՛, կեցցե՛, — վորոտաց այս անգամ ավելի բարձր, ավելի ուժեղ:

Աքսորվածներն անչափ, անսահման վողբեվորվել եյին. նրանք պատրաստ եյին նոր պայքարի, նոր հաղթանակների:

Հ Ա Ր Ց Ե Ր.

1. Հունաստանում ինչպիսի իշխանություն է:
2. Խորհրդային Միությունն ինչ միջադրային նշանակություն ունի:
3. Պատմվածքի ամեն մի մասին առանձին վերնագիր դրեք:

67. ԼԻ-ՉՈՒՆ-ԵՆ

1.

Լի-Չուն-Եներ կայացավ գործարանի գերեկտորին՝ յերկու թուղթ ձեռքին. մեկը ՄՈՊՐ-ի տեղեկանքն եր այն մասին, վոր նա Չինաստանի Շայոն գյուղացի յե:

Դիրեկտորը նրան ուղարկեց ձուլարան:

Նա բնակարան վարձեց քաղաքի ծայրում և սկսեց աշխատել գործարանում:

Հասավ մայիսի մեկը:

Միտինգի ժամանակ հանկարծ ամբիոն բարձրացավ Լի-Չուն-Ենը, գլխարկ վերցրեց ու գոչեց.

— Ընկերներ, յես փախել եմ Չինաստանից, բանտից: Չինաստանը մեզ զնդակահարում ե...

Նա սաստիկ հուզված էր, աչքերը փայլում էին:

Վերջապես նա հանեց չինարեն գրված մյուս թուղթը և մոտեցրեց չթուներին:

2.

Մյուս սրը Լի-Չուն-Ենից վերցրինք թուղթը և թարգմանեցինք: Այնտեղ գրված էր. «Հայրի՛կ, վաղն ինձ կապանեն: Լաց մի՛ լինի: Յես արեցի, ինչ վոր կարող էի: Հայրի՛կ, ի՛մ սիրելի ծերունի Լի-Չուն-Են, քո մեծ վորդին մեռավ ազարակում, աղջիկդ մեռավ տաների ու տարեկան հասակում, քո մեջքը ճիպոտի շատ զարկեր է ընդունել, թող փոքր վորդիդ ել մեռնի ճշմարիտ գործի համար: Լաց մի՛ լինի, հայրի՛կս, քո վորդին ազնիվ պայքար է մղել: Վաղը ել յես կենդանի չեմ լինի: Ասա մերոնց, վոր յես լրիվ կատարել եմ ինձ արված առաջադրությունը. վոստիկան Կա-Սյաոյին ստանել եմ, կարվածատեք Տում-Ֆիի վիզը կտրել եմ: Վերջին անգամ գրկում եմ քեզ:

Գո վորդի՛ Սաու-Չուն»:

Հ Ա Ր Յ Ե Ր.

1. Սաու-Չուն վո՞րտեղից էր իր հորը նամակ ուղարկել:
2. Ինչո՞ւ Լի-Չուն-Ենը Չինաստանը բանտ է համարում:
3. Չինաստանը մինչև յե՞րբ բանտ կմնա չին բանվորների համար:

68. ՎԼԱԴԻՄԻՐ ԻԼՅԻՉ ԼԵՆԻՆ (ՈՒԼՔԱՆՈՎ)

ԻՆՉ ԵՐ ՍՈՎՈՐՅՆՈՒՄ ՅԵՎ ԻՆՉ ԵՐ ԱՆՈՒՄ ԼԵՆԻՆԸ

1.

Հոկտեմբերյան հեղափոխությունից դեռ շատ տառջ բանվորներն անբավական էին ցարական կառու-

վարությունից և կոչում էին նրա դեմ: Բայց այդ կրո-վից վոչ մի ոգուտ չեք ստացվում, վորովհետև կազմակերպված չեյին և թույլ էին կոչում:

Թագավորից դժգոհ մարդիկ սպանում էին հենց իրեն՝ թագավորին և կամ նրա աստիճանավորներին,



իրենք ել բռնվում, մահվան էին դատապարտվում: Այդպես սպանվեց Ալեքսանդր II թագավորը: Լենինի յեղբայրն ել ուզում էր այդպես սպանել՝ Ալեքսանդր III-ին, բայց չաջողվեց, և նրան կախաղան բարձրացրին:

Լենինն ասում էր, վոր թագավորին և աստիճանավորներին սպանելով՝ գործին չես ողնի. կապանես ե՛ս թագավորին, ե՛ն մյուսը տեղը կնստի:

Թագավորների իշխանությունը միայն այն ժամանակ կհաղթվի, յերբ բանվոր դատակարգը կառավարի թե՛ թագավորին, թե՛ հարուստներին և իշխանությունը իր ձեռքը կառնի:

Լենինն ասում էր, վոր բանվորները պետք է միանան և միացած գործեն: Իր ամբողջ կյանքը Լենինը նվիրեց Կոմունիստական Կուսակցության կազմակերպելու գործին:

Ցարական կառավարութիւնը հալածում եր Լենինին և վերջը Սիբիր արտոնեց նրան: Բայց նա ոքսորից դուրս գալով՝ նորից սկսեց բանվոր դասակարգի պայքարը կազմակերպել:

2.

Ընչպես Լենինն եր ասում, այնպես ել յեղավ: Սկսվեց համաշխարհային պատերազմը:

Լենինն այդ կովին հակառակ դուրս յեկավ: Նա ասում եր, թե բոլոր պետութիւններէ բանվորները յեղբայրներ են և նրանք հարուստների համար մեկ-մեկու չպիտի սպանեն: Բանվորներն, — ասում եր նա, — ամբողջ աշխարհում միայն մի թշնամի ունեն. այդ՝ բոլոր յերկրների հարուստներն են: Հենց դրանց դեմ ել պետք ե բանվորները կովին:

1917 թվի փետրվարին հեղափոխութիւն տեղի ունեցավ, և ցարի կառավարութիւնը տապալվեց. բայց իշխանութիւնը վերցրին հարուստները: Լենինն ասում եր, թե նրանց դեմ ել պետք ե կովել:

Նա Ռուսաստան յեկավ և սովորեցնում եր բանվորներին, գյուղացիներին և զինվորներին, վոր նրանք հողը խլելով կալվածատերերից և գործարանները՝ հարուստներից՝ բոլորն աշխատավորներին տան:

«Հողը՝ գյուղացուն, գործարանը՝ բանվորին» — այդ եր այն ժամանակվա լոզունգը:

Վերջապես 1917 թվի նոյեմբերի 7-ին (հին տոմարով հոկտեմբերի 25-ին) Լենինգրադում (նախկին Պետերոգրադ) յերկրորդ հեղափոխութիւնն առաջացավ: Բանվորները գյուղացիների ոգնությամբ, տապալեցին բուրժուական պետութիւնը, և Լենինի ղեկավարությամբ Խորհրդային իշխանութիւն հաստատվեց:

Լենինն ընտրվեց աշխարհում առաջին բանվոր-գյուղացիական պետության ժողովրդական կոմիտեների խորհրդի նախագահ: Այդ պաշտոնում Լենինը մնաց 6 տարի, մինչև իր մահը:

Ընկ. Լենինը մեռավ 1924 թ. հունվարի 21-ին:

Հ Ա Ր Ց Ե Ր.

1. Մարդկության համար ի՞նչ մեծ դործ կատարեց Լենինը:
2. Հեղափոխութիւնն ի՞նչպես եր հասկանում Լենինը:
3. Ամբողջ աշխարհի բանվորներն ի՞նչ թշնամի ունեն:
4. Լենինն ի՞նչ եր սովորեցնում բանվորներին, գյուղացիներին և զինվորներին:

69. ՊԱՊԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ

«Մռավյանի» անվան հոկտեմբերիկները՝ ի՞նչ հավաքույթն ե: Խմբակավարը խոսում ե պարտադիր ուսուցման մասին:

— Պարտադիր ուսուցումը մեծ նշանակութիւն ունի մեր յերկրի համար: Այլլեւ մեր յերկրում չենք ունենա անգրագետներ: Մեր մեծ ուսուցիչն ասել ե, վոր անգրագիտութիւնը դժվարացնում ե սոցիալիզմի կառուցման գործը և դրա համար ել սրանից հետո մեր յերկրում դպրոցում սովորելը լինելու յե պարտադիր: Պարտադիր ուսուցման ու անգրագիտության վերացման ասպարիդում մեծ դործ ունեն անելու պիտներները և մենք՝ հոկտեմբերիկներս: Բացի այդ, հունվարին լրանում ե մեր սիրելի պապի՝ Լենինի մահվան 9-րդ տարին: Նրա հիշատակը հավերժացնելու համար մեր խմբակը պետք ե կատարի վորևէ աշխատանք, որինակ՝ կրկնապատկենք մեր շարքերը, իսկ մեր լավ և մեծահրկնապատկենք մեր շարքերը, իսկ մեր լավ և մեծահասակ հոկտեմբերիկներից նվիրելու յենք պիտներ կոչակ: Հիմա յուրաքանչյուրը խոսեցեք, թե ի՞նչ կարող ե անել մեր խմբակը:

— Յես ուզում եմ խոսել, ընկեր՝ Աստղիկ, — ձայն ե խնդրում Նորիկը:

— Վորպեսզի գործ կատարած լինենք և իրագործած սիրելի պապի պատգամները, դրա համար պետք ե աշխատենք բոլորս: Ա՛յ, որինակ, իմ մայրիկը շատ քիչ տառեր ե ճանաչում. յես արդեն սկսել եմ նրա հետ պարապել. այնքան պետք ե սովորեցնեմ, վոր մեր սիրելի «Հոկտեմբերիկ»-ը կարողանա հեշտությամբ կարդալ: Մրցման եմ հրավիրում Գուրգենին և Սուրիկին, վորոնց

մայրիկներն ել անգրադետ են. տեսնենք՝ ո՛ւմ մայրիկը չուտ կտուրի կարդալ: Ում մայրիկը վոր սովորեց, դա ու մեր հավաքույթում «Հոկտեմբերիկ»-ը մեզ համար կարգա:

Խոսում է և փոքրիկ Քնարիկը.

— Իսկ դեռ մեր հոկտեմբերիկ Հակոբին և Արտաշին, բայց վոչ մեկից ել լավ չեք ճանաչում, վորովհետ նոր հոկտեմբերիկներ են: Հակոբը և Արտաշը ծնողներ չունեն, ապրում են իրենց բարեկամներն մոտ, վորանք նրանց վրա այնքան ել ուշադրություն չեն դարձնում: Նրանք Ծ տարեկան են և դեռ դպրոց չեն գնում. անգրադետ են: Բացի այդ՝ նրանք հնարավորություն չունեն դրքեր ու տետրակներ գնելու: Յես առաջարկում եմ մինչև հունվար ամիսը նրանց տեղափոխել դպրոցում, խեղդել պիտենը կոլեկտիվին, վորպեսզի տղան Հակոբին և Արտաշին. չե՞ վոր նրանք ել պետք է մեզ նման սովորեն:

Քնարիկի առաջարկությունը խմբակն ընդունում է մեծ վոգելորությամբ: Բացի այդ՝ խմբակը վորոչում է Լենինի մահվան Ծ-րդ տարեդարձին յուրաքանչյուր հոկտեմբերիկ բերի մի նոր հոկտեմբերիկ՝ խմբակը կրկնապատկելու համար:

Խմբակն անցնում է յեռանդուն աշխատանքի:

Հակոբն ու Արտաշն ընդունվում են դպրոց:

Հ Ա Ր Յ Ե Ր.

1. Ինչո՞ւ Լենինի մահվան տարեդարձին նոր ընդունելություն է կատարվում պիտենը կադմակերպության մեջ:

2. Ձեռ խմբակն ու պիտենը կոլեկտիվն այս տարի ի՞նչպես հավերժացրին Լենինի մահվան տարեդարձը:

70. ԼԵՆԻՆԱ ՀՆԴԱՍՏԱՆՈՒՄ

1920 թվին յես գնացի Հնդկաստան իմ մի ընկերոջ մոտ: Ընկերս ապրում էր Կալկաթա քաղաքից վոչ հեռու, Սեռալար գյուղում:

Մի անգամ յես ու ընկերս անցնում էյինք տաճարի մոտով: Տաճարի առաջ հավաքվել էյին մի խումբ մարդիկ: Նրանք շտապում էյին փիղ նստել և պատրաստվում էյին տեղ գնալ յերգով, նվագով: Յես հարցրի ընկերոջս.

— Նրանք ո՞ւր են գնում:

— Այսոր տոն է, — պատասխանեց ընկերս — Ժողովուրդը գնում է դաշտ դրոսանքի: Մենք ել գնանք այնտեղ:

Մենք փիղ նստեցինք և գնացինք: Յերը գյուղից մի յերեք կիլոմետրի չափ հեռացանք, յես տեսա ելի մարդկանց մեծ բազմություն: Վոր՛ը վոտով եր գնում, վոր՛ը փողով: Յես հաշվեցի մոտ յերեսուն փիղ:

Մենք ավելի մոտեցանք նրանց: Յեվ ահա յես տեսա փղերի շարքում մի հատուկ զարդարված փիղ: Փղի մեջքին մի չքեղ վրան կար, վորը զարդարված եր գույնը գույն տերեվներով և խաս կտորով: Վրանի առաջ նստած եր մի մարդ, հագին վաղրի մորթի և կառավարում եր փղին: Կողքերից գնում էյին չորս ինդուս, ձեռքերին բռնած ահագին հովհարներ գեղեցիկ զարդանրկարած:

Այդ վրանում գրված եր մի մարդու արձան, վոր չառ գեղեցիկ զարդարված եր: Ներքև, կտորի վրա, հնդկական գեղեցիկ տառերով մակագրություն եր արված:

— Ասա՛, այնտեղ կտորի վրա ի՞նչ է գրված հարցրի յես ընկերոջս:

— Այնտեղ գրված է. «Մեր հայրը»:

Յես չհասկացա, թե այդ ինչ է նշանակում, բայց ել բան հարցրի ընկերոջս և շարունակ մտածում էյի — ո՞վ է այդ «Մեր հայրը»:

Յեվ, ահա, մենք հասանք մի ահագին ընդարձակ դաշտ, չըջապատված չորս կողմից պտղատու ծառերով:

Յերը յերևաց զարդարուն փիղը վրայի արձանով, նրան գլխավորեցին յերգերով և նվագով: Բոլորը մի ինչ վոր բան էյին գոչում: Հրթիռները թռչում էյին

յերկինք: Յերեխաները թղթե ֆոֆաններ եյին բաց թողնում ահադին մակազրություններով: Այդ մակա-
ւորություններն այնպէս եյին, ինչպէս վողին զարդարող
կտորի մակազրությունները:

Յերբ փիղն առաջացավ, մարդիկ սկսեցին ծաղիկ-
ներ դանել, յերգել, դուռալ և պարել նրա շուրջը:

— Այս ի՞նչ արձան ե, — մտածում եյի յես:

Յեմ հանկարծ ամբողջ ժողովուրդը զոռաց դաշ-
տում:

— Լենինը մեր հա՛յրն ե: Կեցցե՛ք Լենինը:

Այդպէս, յես առաջին անգամ լսեցի այդ անունը:

Այդ Լենինի արձանն եր: Այդ ժամանակ դեռ չդի-
տեյի, թե ով ե Լենինը և չեյի հասկանում, թե ինչո՞ւ
յեն ուրախանում հնդիկները, ինչո՞ւ յեն ծաղիկ ցա-
նում, յերգեր յերգում, պարում: Յեմ միայն գալով
Լենինգրադ, յես խմացա, վոր Լենինը պրոլետարական
առաջնորդ ե և ազատարարն ամբողջ աշխարհի ճեշմած
ազգերի:

Հ Ա Ր Յ Ե Ր.

1. Մեր տոնակատարությունները համեմատու՛ր Հնդկաստանի
տոնակատարությունների հետ:

2. Հնդիկները փղերին ի՞նչ բանի համար են ողտադործում:

3. Ինչո՞ւ Լենինին շատ են հարգում հնդիկները:

4. Միայն Հնդկաստանի՞ աշխատավորներն են Լենինին իրենց
«հայր» անվանում:

5. Ի՞նչ տարբերություն կա յերդի և նվազի մեջ:

71. ԼԵՆԻՆԻ ՄԱՀԸ

Ընկեր Լենինը մահացավ Մոսկվայից քիչ հեռու
գտնվող Գորկայում 1924 թվի հունվարի 21-ին:

Լենինի հին ընկերները յեկան՝ նրա մարմինը Մոսկ-
վա փոխադրելու: Նա սեղանի վրա պառկած եր կար-
միր դազադի մեջ:

Դազադը դուրս տարան: Ձյան փաթիլն ընկավ նրա
յերեսին: Դազադը ծածկեցին աղակե կափարիչով: Ըն-
կերները նրան ձեռքերի վրա տարան:

Վ Մինչև կայարան յոթ կիլոմետր եր:

Կայարանում կանգնած եր Ռյադա—Ուրալյան յեր-
կաթգծի գնացքը: Շողեշարժի մոտ կանգնած եր մեք —
նավարը: Նա 19 տարի աշխատել եր յերկաթուղագծի
վրա: Իր աշխատանքը շատ լավ գիտեր: Բայց յերբ
պատեց լծակը, և գնացքը շարժվեց, նա ասավ. «Յեն
յերբեք այսքան չեմ հուզվիր»:

ՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԱՆԸ

Յերեխաներից մի քանիսը կարծում եյին, թե Լե-
նինի դեակը Մոսկվայի փողոցներով կտանեն վոսիկե
կոռքով: Բայց այդպէս չեղավ. նրան ձեռքերի վրա
տանում եյին իր հին ընկերները:

Նրանք Լենինի դազադը բերին Միությունների
տուն և դրին մեծ դահլիճը: Դազադը դրված եր կար-
միր մահուղով պատած պատվանդանի վրա, վորի
մոտ կար չորս արմավենի: Պատերը ծածկված եյին սե
և կարմիր դրոշակներով: Դրոշակների վրա ասեղնա-
գործված եյին՝ մանդաղներ, մուրճեր և աստղեր: Չորս
կողմը դրված եյին պսակներ և ծաղիկներ: Վոտների
կողմը դրված եր սոճու փողբիկ կլոր պսակ, վորը հյու-
սել եյին մանկատան յերեխաները:

Դազադի մոտ կանգնած եր պատվավոր պահակ:
Նվազախումբը մեղմ նվագում եր մահվան քայլերգը:

Չորս որ ու դիշեր անընդհատ մարդիկ գալիս եյին
նայելու: Վոչվոր փոչինչ չեր ասում: Վոչվոր կանգ չեր
ստնում: Անցնում եյին դազադի մոտով: Դազադում
պառկած եր Լենինը — մահացած առաջնորդը:

ԻՆՉՊԵՍ ԹԱՂԵՑԻՆ

Լենինին թաղեցին Կարմիր հրապարակում, Կրեմլի
մոտ: Դազադի համար դամբարան եյին պատրաստել:

Թաղման որը ժողովուրդը հավաքվեց հրապարա-
կը: Ամեն տեղից յեկել եյին դրոշակներով: Վորպէս
պատվավոր պահակ կանգնած եր և մեկ դեղձիուհի: Նա
հագին տրեխներ ուներ: Նա ապրանքատար գնացքով եր

յեկեւ... Ժամացույցը խփում է չորսը: Դադադը վերցնում են պատվանդանից և վերջին անգամ գլխներից վեր բռնած տանում դեպի շիրիմ: Բոլորը գլխարկները վերցնում են: Թնդանոթներից կրակում են, գործարանների և շոգեշարժերի սուլիչներն անհանգիստ շաչում են: Ամբողջ խորհրդային յերկրում հինգ րոպե կանգ և առնում ամեն մի շարժում: Կոնգուկտորն անցնում էր վազոնից-վազոն և ասում. «Խնդրում եմ վոտֆի կանգնել. Լենինը մեռավ»: Քաղաքներում անց ու դարձ անողները կանգ են առնում և գլխարկները վերցնում: Հեռավոր յերկրներում ռադիոյով լսվում է Մոսկվայի նվագախմբի մահվան քայլերգը: Ուրիշ յերկրների բանվորները միմյանց ասում են—«մեռավ Լենինը»:

Տների պատերին ու դրոշակներին վրա գրված էր.

«ՄԵՌԱՎ ԼԵՆԻՆԸ, ԲՍՅՅ ԿԵՆԴԱՆԻ ՅԵ ՆՐԱ ԳՈՐԾԸ»:

Հ Ա Ր Ց Ե Ր.

1. Ինչո՞ւ ընդհանուր սուգ առաջացրեց Լենինի մահը:
2. Լենինն ո՞ւմ առաջնորդն էր:
3. Ի՞նչ է նշանակում «Լենինը մեռավ, բայց նրա դործը կենդանի յե»:
4. Ինչո՞ւ շոգեշարժի մեքենավարն ասում է «Յես յերբեք այսքան չեմ հուզվել»:

72. ԸՆԿԵՐ ՍՏԱԼԻՆԸ

Իոսիֆ Ստալինը ծնվել է Վրաստանում, 1879 թ. դեկտեմբերի 21-ին, կոչկակար բանվորի ընտանիքում: 13 տարեկան հասակում նա մտավ միջնակարգ դպրոց (սեմինարիա), բայց չվերջացրեց. նրան հեռացրին դպրոցից, ցարական իշխանության դեմ բանվորների մեջ հեղափոխական աշխատանք կատարելու համար:

1901 թ. մինչև 1917 թ. ընկեր Ստալինը 10 անգամ ձերբակալվել է, բանտ նստել ու աքսորվել, տաժանտ-կիր աշխատանքի դատապարտվել:

1913 թ. մինչև 1917 թ. նա աքսորված էր Թուրքիստան:

Ընկ. Ստալինը Լենինի և կուսակցության Կենտկոմի մյուս անդամների հետ աշխիվ կերպով մասնակցում էր Հոկտեմբերյան հեղափոխության նախապատրաստմանը և ղեկավարում էր Հոկտեմբերյան հեղափոխության որերին տարվող պայքարը:

1917 թվից մինչև 1923 թվը նա յեղել է ազգային գործերի ժողկոմ, Բանգյուղտեսչության ժողկոմ, Ռադմա-հեղափոխական խորհրդի անդամ: Իր ցույց տված ռազմական ծառայությունների համար նա արժանացել է Կարմիր դրոշի չքանչանի:

1923 թվից ընկ. Ստալինը Համ Կոմկուսի(ր) Կենտկոմի գլխավոր քարտուղարն է. իսկ 1925 թվից՝ Կոմինտերնի Գործադիր Կոմիտեյի նախագահության անդամ:

Ընկ. Ստալինը կուսակցության սիրված առաջնորդն է: Նրա հմուտ և ուժեղ ղեկավարության տակ կուսակցությունը գործում է լենինյան ճիշտ ուղիով և հաջողությամբ տանում սոցիալիզմի կառուցումը մեր յերկրում:

Հ Ա Ր Ց Ե Ր.

1. Ի՞նչ է նշանակում «ընկեր Ստալինը համալսարհային պրոլետարիատի առաջնորդն է»:
2. Ի՞նչ ձեվով է կոմունիստական կուսակցությունը կառավարում մեր յերկրը:

73. ՀԵՐՈՍՆԵՐԻ ԱՆԿՅՈՒՆ

1.

Սուրբիկը, Վարսիկը և Պավլիկը սովորում էյին մանկապարտիզում: Մի անգամ նրանց ղեկավար Մարուսն ասաց, վոր յուրաքանչյուրն իր տանը պետք է ունենա անկյուն. ամ անկյունը յով լինի՝ մրցանակը կտանի:

Սուրիկը, Վարսիկը և Պավլիկը շտապ քայլերով գնացին Սուրիկենց տուն:

— Սուրիկ, վախենում եմ ընկ. Մարուսը բարկանա, ցածր ձայնով ասաց Պավլիկը:

— Ինչո՞ւ:

— Վոր մենք կոլեկտիվ կերպով ենք անկյուն պատարասում:

— Վոչ մի բան չի ասի, հենց ինքը, ընկ. Մարուսն է ասել, վոր կոլեկտիվ կերպով աշխատենք, — ասաց Վարսիկը, — կոլեկտիվ աշխատելը հեշտ է և, բացի այդ, կատարած, գործն ավելի լավ է լինում:

— Ա՛յ, ճիշտ է ասում Վարսիկը, — ասաց Սուրիկը, — միայն մեզ մնում է՝ վորքան կարող ենք, շուտ և լավ պատրաստենք անկյունը:

Պավլիկը համաձայնեց:

Սկսվեց աշխատանքը:

— Ես նկարներից վո՞րն ամենից բարձր կախենք, — ուրախ-ուրախ հարցրեց Սուրիկը:

— Ընկ. Ստալինինը:

— Վո՞չ, Լենին պապինը:

— Իսկ յես ել ասում եմ՝ Կարլ Մարքսինը:

— Վո՞չ, ի՞մ ասածը:

— Ի՛մը:

— Ձե՛, ի՛մը:

Տունն աղմուկով լցվեց: Քիչ հետո ներս մտավ Սուրիկի հայրը: Բոլորը լռեցին:

Սուրիկը վազելով մոտեցավ հորը և հարցրեց. —

— Հայրի՛կ, ուզում ենք անկյուն պատրաստել, չգիտենք այս յերեք նկարներից վո՞րն ամենից բարձր կախենք:

— Լսե՛ք, — ցածր ձայնով սկսեց հայրը: Կարլ Մարքսը, վորպես ավագ ուսուցիչ, նրա նկարը կախեցեք մեջտեղը, իսկ Լենին պապինը և ընկ. Ստալինինը՝ նրա աջ և ձախ կողմերում:

— Ճի՛շտ է, լավ կլինի, շատ լավ կլինի, — գոչեցին բոլորը: Քիչ հետո անկյունը պատրաստ եր: Վարսիկը և Պավլիկը աշխատանքներից դուհ, գնացին տուն:

Անցավ յերկու որ: Ղեկավարը գնաց Սուրիկենց տուն, տեսավ անկյունն ու շատ հավանեց:

Անկյունը գեղեցկացել էր «Հերոսների անկյուն» լողունգով, վոր գրված էր վոսկե տառերով կարմիր կտորի վրա: Յերկար դիտելուց հետո ընկ. Մարուսը գնաց:

Հաջորդ պարապմունքին ղեկավարը հայտարարեց.

— Սուրիկի, Վարսիկի և Պավլիկի կոլեկտիվ կերպով պատրաստած անկյունը բոլորից լավն է: Այդ յենքին նվիրում ենք մի թմբուկ:

Հ Ա Ր Ց Ե Ր.

1. Ինչո՞ւ անկյունը կոչվեց «Հերոսների անկյուն»:

2. Ինչո՞վ են տարբերվում մեր հերոսները բուրժուական հերոսներից:

3. Ի՞նչ նշանակություն ունի «անկյուն»-ը:

Բացատրեցեք դժի (—), շեշտի ('), հարցականի (?) գործածությունը հետևյալ որինակում.

— Ես նկարներից վո՞րն ամենից բարձր կախենք — ուրախ հարցրեց Սուրիկը:

— Ընկեր Ստալինինը:

— Վո՞չ, Լենին պապինը:

— Վո՞չ, ի՞մ ասածը:

— Ձե՛, ի՛մը:

Յերբ գրի յենք առնում յերկու կամ ավելի անձների խոսակցությունը, ամեն մեկի խոսքն սկսում ենք նոր տողից, մեծատառով, սկիզբը գիծ (—) դնելով, իսկ վերջը՝ վերջալուծ:

Այո՛, վո՛չ, չե՛ պատասխանական բառերի վրա շեշտ և գրվում:

Հարց արտահայտող բառի վրա հարցական (?) է գրվում, վո՞ր նկարը, ո՞վ յեկավ, ի՞նչ ասաց, ո՞ւր գնաց, յե՞րբ տեսավ, այսո՞ր յեկավ. հա՞ց...):

Դպրոցի առաջին խմբում մի քարտեզ էր կախված : Այդ քարտեզի վրա նկարված էյին աշխարհի բոլոր ցամաքներն ու ծովերը :

Յեվ այդ բոլորը սե ու սպիտակ գույներով :

Յերևանները վորոշեցին քարտեզը ներկել :

Առաջ՝ նրանք կապույտ գույնով ներկեցին բոլորը :

Հետո՝ կարմիր գույնով ներկեցին Խորհրդային

Միությունը :

Քարտեզը գեղեցկացավ, բայց ելի շատ սպիտակ տեղ մնաց :

— Մնացածն ել ներկենք, — վորոշեցին յերեսա- ները :

Նրանք վրձինները թաթախեցին կարմիր ներկի մեջ... և...

— Վո՛չ, մնացած յերկրները կարմիր գույնով ներ- կել չի կարելի, — ասացին :

— Ինչո՞ւ, — հարցրեց մեկը :

— Վորովհետեւ... վորովհետեւ...

Բոլորն ել շատ բավ գիտեցին, վոր ուրիշ յերկրնե- րը կարմիր գույնով չի կարելի ներկել, վոր միայն Խորհրդային յերկիրն ե կարմիր. բայց թե ինչո՞ւ՝ վոչ վոք բացատրել չկարողացավ :

Հ Ա Ր Յ Ե Ր.

1. ԽՈՐՀՐԴ-ում ո՞վ ե գործարանների, չախտաների, դաշտերի տերը :

2. Մենք ի՞նչպե՞ս ենք ապրում ԽՈՐՀՐԴ-ում :

3. Ի՞նչպե՞ս են ապրում ուրիշ յերկրների մեր ընկերները :

4. Ինչո՞ւ մեր դրոշակների ու փոշի վրա դրված ե. «Պրոլե- տարներ բոլոր յերկրների, միացե՛ք :

Բացատրեցե՛ք այս հոգվածում վորովհետեւ բառից հետո դըր- ված յերեք կետը (...).

— Վորովհետեւ... վորովհետեւ...

— Հայրի՛կ — ասաց փոքրիկ Հայկոն, պոկելով ո- րացույցի թերթը, — ինչո՞ւ կարմիր ե որացույցի թեր- թը : Չե՞ վոր վաղը հինգշաբթի յե :

Բանվոր Ոհանը ակնոցների տակից նայեց Հայկո- յին, մոտեցավ նրան, շոյեց նրա գանգուր մազերն ու ասաց.

— Նստի՛ր, պատմեմ քեզ որացույցի կարմիր թեր- թի պատմությունը :

Ոհանին չըջապատեցին և մյուս յերեսաները :

Հաստ ու դնդլիկ Սիրանը նստեց հոր ծնկանն ու ըս- կեց իսպալ նրա ժամացույցի շղթայի հետ : Սիրանը շատ հարցասեր եր : Սիրանի հակապատկերն եր Լիզան. նա նիհար եր, չեկ մազերով ու կապույտ, խելոք աչքե- րով : Յերեսաներից ամենափոքրը Վարդգեսն եր :

— Դե պատմի՛ր, հայրի՛կ, — ասացին այս ու այն կողմից յերեսաները :

— Մինչեւ չլուք, չեմ սկսի :

Յերեսաները լռեցին :

— Սկսում եմ, — ասաց, ուստա Ոհանը :

— Գիտե՞ք, յերեսանե՛ր, սրանից 12 տարի առաջ Հայաստանը գտնվում եր դաշնակցականների իշխանու- թյան տակ...

— Ո՞վքեր են դաշնակցականները, — կտրեց նրա խոսքը Սիրանը :

— Դաշնակցականները նման եյին մեր հարեւան Սրտեմին :

— Ի՞նչպե՞ս, հայրի՛կ, նրանք ե՞լ կուլում եյին սրա-նրա հետ :

— Այո՛ :

— Ո՞ւմ հետ եյին կուլում, — հարց տվին յերեսա- ները :

— Վրացիների, թուրքերի, իրենց հարեւան ժո- ղովուրդների հետ :

— Վա՛յ, ի՞նչ վատ մարդիկ են յեղել :

— Այսպէ՛ս, — շարունակեց Ոհանը, — յերկիրը սո-
վի յեր մատնված: Վոչ մի շինարարական աշխատանք
չէր կատարվում. յես ել պարապ էյի: Գործ չկար: Մար-
գիկ հաց չունէյին ուտելու, ո՞ւր մնաց տուն չինէյին
(Ոհանը հլուսն եր): Գյուղացիները հաց չունէյին ու-
տելու ու կանաչեղենով էյին կերակրվում: Գնացքները
վառելիք չունէյին, բնակարանները մթության մեջ ե-
յին, վորովհետեւ նավթ չկար:

— Նավթ չկար, երեքտրականություն վառելին —
կտրեց հոր խոսքը Սիրանը:

— Երեկտրականություն այն ժամանակ չկար: Ե-
րեկտրականությունը նոր ե տարածվել: Այդպէս, յեր-
կիրը, մեռնող հիվանդի պէս, որեցոր քայքայվում եր:
Այս բոլորը տեսնելով՝ բանվորն ու գյուղացին ձեռք-
ձեռքի տվին ու շուռ տվին դաշնակների իշխանությու-
նը՝ բայլէիկներ ղեկավարությամբ ու հաստատեցին
իրենց՝ բանվորա-գյուղացիական իշխանությունը: Ի-
րենց իշխանությունը հաստատելուց անմիջապէս հետո,
բանվորներն ու գյուղացիներն սկսեցին Հայաստանի
վերաշինությունը:

— Ի՞նչ են չինել բայլէիկները, հայրի՛կ, — հարց-
րեց Հայկոն:

— Յես կասեմ, դու համբի՛ր:

— Ծիր-կանալը, Ալլահվերդու հանքերի վերա-
կանգնումը, Լենինականի տեքստիլ գործարանը, Զո-
րազեսը, Յերեանի հիդրոէլէկտրակայանը, Սարգսրաբադի
ջրանցքը, Ղուերի ջրանցքը, Լենինականի հիդրո-
էլէկտրոէկայանը, մանկատներ, կոոպերատիվներ, դըղ-
րոցներ և այլն...

Հայկոյին նայելով, Սիրանն ել եր համբում մատ-
ների վրա: Յերբ Հայկոն վերջացրեց տասը, սկսեց նո-
րից: Սիրանը մատները չուած ու բերանը բաց առած.

— Վա՛յ, ել մատներ չունեմ, վո՞նց համբեմ:

Յերեխաները ծիծաղեցին: Ծիծաղեց նաև ուստա
Ոհանը:

— Այդ բոլորը, ինչ վոր թվեցի, կատարվել ե 1920

թվի նոյեմբերի 29-ից հետո, այսինքն՝ Հայաստանի
խորհրդայնացումից հետո: Այդ որվանից նոյեմբերի
29-ը հայտարարված ե Հայաստանի բանվորների ու
գյուղացիների հաղթության օր:

Ոհանը, վերջացնելով իր պատմությունը, ասաց.

— Հասկացա՞ք, յերէխանե՛ր, թե ինչո՞ւ յե կարմիր
գույնով տպված որացույցի լճերթը: Այդ կարմիրը
նշան ե, վոր այդ օրը ձեռք ե բերված արյունով:

— Հասկացա՛նք, հասկացա՛նք. — տատեն յերեխա-
ները:

Հ Ա Ր Յ Ե Ր.

1. Առաջ ինչո՞ւ գործարաններ, ֆարբիկաներ չեն յեղել մեր
յերկրում:

2. Դուք ի՞նչ գործադան եք այցելել. նկարագրեցե՛ք:

3. Ինչո՞ւ դաշնակցականները չեյին կարող շինարարությամբ
դրադրվել:

4. Ինչո՞ւ աշխատավորությունը Դաշնակցության տիրապե-
տո ժամանակ ուժամահ եր լինում:

Եւ այց ալեք այս հոդվածում, վոր 1. խոսքի մեջ նույն կար-
ցին պատասխանող ու միևնույն մտքով լրացումներն իրարից բա-
ժանվում են ստորակետով. 2. եղիմանի բառերն ուրիշի բառերից
բաժանվում են գծով (—). 3. կոչական, հրամայական բառերի ու
ձայնարկությունների վրա դրվում ե շեշտ ('):

76. ԽՍՀՄ ԱԶԳՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՅԵՂԲԱՅԻ ԱՊԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ Ե

Մեր յերկրում 100-ից ավելի ազգություններ կան:

Ցարական կառավարությունը նրանց ճնշում և լա-
րում եր միմյանց դեմ: Նրանք զրկված էյին իրենց ինք-
նուրույնությունից, և յերկրները հանդիտանում էյին
իրրև ցարական կառավարության դադութներ:

Նրանք շահագործվում էին այնպես, ինչպես ներկայումս շահագործվում են՝ հեղեղացիք, չինացիք, սիրիացիք, յեզիպոտացիք — յեզիպոտական գիշատիչ կապիտալիստների կողմից:

Յարական կառավարութիւնն Անդրկովկասի ազգութիւններին իրար դեմ եր հանում: Անընդհատ կռիւները թուլացնում էին մանր ազգութիւններին:

Բայիւնիկյան կուսակցութիւնը մեծ պայքար է մղել ազգերի ինքնորոշման համար: Այդ նպատակն իրագործվեց Հոկտեմբերյան հեղափոխութեան շնորհիւ: 1918 թվին Համառուսական խորհուրդների համալուծարին բոլոր ազգութիւններին աշխատավորներն իրավունք ստացան ինքնորոշման: Նրանք կազմեցին իրենց ինքնուրույն հանրապետութիւնները:

Յեւ այժմ Անդրկովկասի ազգութիւնները հնարավորութիւն ունեն խաղաղ կառուցելու իրենց տնտեսութիւնը և բարձրացնելու իրենց կուլտուրան:

Այսպիսով՝ Խորհրդային Միութիւնն աշխարհում միակ պետութիւնն է, վորն ապահովում է բոլոր ազգութիւնների յեղափոխական դաշինքը և նրանց տնտեսական ու կուլտուրական զարգացման լիակատար հնարավորութիւնները:

Իսկ Ինչպես է ազգային փոքրամասնութիւնների վիճակը կապիտալիստական յերկրներում:

Ամերիկայի Միացյալ Նահանգներում ապրում են մոտ 14 միլիոն նեգրեր: Այնտեղ նեգրերին մարդ չեն հաշվում: Որինակ՝ Նյու-Յորքում նեգրերը չեն կարող մտնել թատրոն, ճաշարան, վորոնք սպիտակների համար են:

Ավելի ծանր է նեգրերի դրութիւնը հարավում: Այնտեղ յերկաթգծերի վրա նեգրերի համար գոյութիւն ունեն առանձին վագոններ, կայարաններում՝ առանձին սենյակներ: Նեղրը չի կարող ամուսնանալ սպիտակ աղջկա հետ: Մինչև անգամ յեկեղեցիներն սպիտակների և սևամորթների համար առանձին-առանձին են:

Հ Ա Ր Յ Ե Ր.

1. Ինչպես էր ազգային փոքրամասնութիւնների վիճակը ցարական Ռուսաստանում: Իսկ Ինչպես է Խորհրդային Միութեան մէջ:

2. Ինչպես է ազգային փոքրամասնութիւնների վիճակը կապիտալիստական յերկրներում:

77. ԱՆԴՐԿՈՎԿԱՍԻ ՖԵԴԵՐԱՑԻԱՆ

Առաջներում

մեր յերկրում

հարուստն էր միշտ

լավ ապրում:

Հարուստների

շնորհիւ

միշտ թալան էր,

միշտ կռիւ:

Մենչեիկ, դաշնա-

մուսավաթ

կազմել էին

մի բանակ,

ճնշում էին

դուրացուն,

թե՛ բացահայտ,

թե՛ թաղուն.

գործարանում՝

բանվորին,

հանքահորում՝

շախտյորին:

Ճնշվող դասը

յելավ վեր,

յեղան անթիւ

կռիւներ,

պրօլետարները

հաղթեցին

և խորհուրդներ

հիմնեցին:

Լրացել է

տառ տարի,

վար գործում են

թիասին,

կառուցում ենք

գալօգներ,

գործարաններ,

ու շենքեր:

Բաղվում նալթ-

ու կառուցում,

չչալներն են

միշտ կանչում,

Քանաքիռդես,

ու Չադես,

հսկա կայան

Ռիոնդես,

Ձորադես,

Լենտեքստիի

կոմբինատ,

նովաճումներ

շարունակ:

Կոլտոգ-ոովխոդ

ամենուր

ամբանում են

որ ավուր:

Ծամյակ ենք

կառուցում,

Ծայմալը

4 տարում:

Բացատրեցե՛ք բուժի գործածութիւնը հետեւալ որինակով.
Ճնշում եյին գյուղացուն թե բացահայտ, թե թաքուն. գործարանում՝ բանվորին, հանքահորում՝ շախտորին:
Գանի՞, միտք կա այստեղ: Վո՞ր խոսքում ի՞նչ բան է պակասում:

Յերբ իրար հաջորդող խեղճերից մեկի մեջ բայը չի դրուվում, փոխարենը բուժ (') և դրվում. որինակ՝ գործարանում ճնշում եյին բանվորներին, հանքահորում ճնշում եյին շախտորին: գործարանում ճնշում եյին բանորին, հանքահորում՝ շախտորին:

78. ՀԱՅ ՅԵՎ ԹՈՒՐԻ ՊԻՈՆԵՐՆԵՐԻ ԿԱՊԸ

Ղաղախի պիոներները սեպտեմբերի սկզբներին Իջևանում եյին: Նրանք յեկել եյին ծանոթանալու մեր պիոներական կազմակերպության աշխատանքներին, ինտերնացիոնալ կապն ու ժողացնելու և միջազգային պատանեկական շաբաթը միասին անցկացնելու համար:

Այդ 4 որում Ղաղախի պիոներներն իջևանում հրահայական աշխատանք կատարեցին: Մեր պիոներները նրանց հետ միասին ունեցան միացյալ հավաքութիւն, յերեկոյթներ, մարզահանդես, խաղեր և այլն: Աշխատավոր գյուղացիները մեծ հետաքրքրությամբ մասնակցում եյին աշխատանքներին:

Բայց կուլակները հանդիսա չեյին: Նրանք աշխատում եյին ամեն կերպ վարկարեկել պիոներներին: Յեւ նրանք գործի դրին իրենց սովորական զենքը՝ պրովոկացիան:

Ղաղախում նրանք լուր են տարածում, վոր, էբր թե, ճանապարհին բանդիտները հարձակվել են պիոներների վրա, վերավորել են ղեկավարներին:

Նույն պրովոկացիան տարածեցին նրանք նաև Իջևանում, յերբ վերջերս իջևանի պիոներների պատգամավորութիւնը գնացել եր Ղաղախ՝ ինտերնացիոնալ կոնֆերանսին մասնակցելու համար:

Այս պրովոկացիայի նպատակն եր՝ խանգարել պիոներական աշխատանքը, թուլացնել հայ և թուրք պիոներների կապը: Սկզբում այս պրովոկացիան ծնողներին վախեցրեց, ստեղծվեց լարված և անհանգիստ դրութիւն: Սակայն պրովոկացիայի ազդեցութիւնը բոլորովին վերացավ, յերբ հեռվից լավեց պիոներական թմբուկների մարտական զարկը, և յերեացին ծածանվող կարմիր դրոշները:

Բոլորն ուրախ եյին: Ամեն կողմից լավում եր «Սալա՛մ», «Բարե՛վ», «Սալա՛մ»:

Հ Ա Ր Յ Ե Ր .

1. Ի՞նչ եր կուլակների նպատակը և առհասարակ ի՞նչ են ցանկանում:

2. Դուք ի՞նչպես անցկացրիք միջկերտորը:

79. ՌԱՊՈՐՏ

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԻ ԲՈՐ ՊԻՈՆԵՐՆԵՐԻՆ ՅԵՎ ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻՆ,
ԱՆԴՐՖԵԴԵՐԱՑԻԱՅԻ 10-ԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ

Ընկե՛ր պիոներներ և դպրոցականներ, Անդրկովկասի բանվորներն ու գյուղացիները մեծ հաղթանակներ են տարել սոցիալիստական շինարարության և գյուղատնտեսության վերակառուցման գործում: Այդ մեծ աշխատանքներն ու պայքարը տարվել և կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ:

Անդրֆեդերացիայի 10-ամյալին Անդրկովկասի պիոներին ևս ղեկավարում է մեծ հաջողութիւններով, ցույց տալով ակտիվ մասնակցութիւն սոցիալիստական շինարարության աշխատանքներին: Անդրկովկասի յուրաքանչյուր պիոներ-բազա, կոլեկտիվ, 10-ամյակը պետք է ղեկավարի նորանոր հաղթանակներով:

Մեր կոլեկտիվների հիմնական աշխատանքը պետք է լինի՝ պայքար ուսուցման վորակի բարձրացման համար:

Յեղեկով այդ բոլորից և Անդրֆեդերացիայի 10-ամյակի առթիվ անցնելով դործնական քայլերի՝ նոր հաղթակերպած Անդրֆեդերացիայի անվան 76-րդ ընդհանուր պիտոններն խոստանում ենք՝

1) Դպրոցում մեր ղեկավարությամբ հաղթակերպել 6 խմբակ՝ թույլ աշակերտներին հետ պարապելու համար:

2) Դասերը պատրաստ մտնել դասարան:

3) Կնքել սոցմրցման պայմանագրեր՝ ուսուցման վորակը բարձրացնելու համար:

4) Յեռամսյակի ընթացքում չունենալ վոչ մի թույլ:

5) Ինտերնացիոնալ դաստիարակությունն ուժեղացնելու համար կապ հաստատել տեղի թուրքական և արտասահմանյան վորևեկ իրերի հետ:

6) Անդրադիտության վերացման համար տալ 10 կուլտուրական բանակայիններ:

Կոչ ենք անում Անդրկովկասի պիտոներ հաղթակերպությանը՝ 10-ամյակի առթիվ մշակելու իրենց ուսուցիչները, թե ինչ են խոստանում անել հետագայում:

Այսօրվանից մենք անցնում ենք դործի՝ հատարելու մեր ռապորտը:

Հ Ա Ր Ց Ե Ր.

1. Ի՞նչ մաքուր է ասված «10 կուլտուրական բանակայիններ»:

2. Ձեր կուլտուրական ի՞նչպիսի դիմավորեց Անդրֆեդերացիայի տասնամյակին:

3. Ստուգեցե՞ք, թե ձեր պիտոներ կուլտուրական ու դպրոցը կատարե՞լ են այդ առթիվ իրենց տված խոստումը:

80. ՄԵՐ ՖԵԴԵՐԱՑԻԱՅԻ ՏԱՄԱՐՅԱԿԻՆ

Ֆեդերացիան	գահը ցարի,
կուռ է, ամուր,	վորին դարեր
նոր կյանք ու թափ է	յեղանք դերի:
ամենուր.	Վոլջոյն հեռու
բանվորները	յերկիրների
և դուրացին	ստրուկ, դերի
աշխատավոր—	բանվորներին,
թե՛ հայ, թե՛ թուրք,	աշխատավոր
թե՛ վրացի—	գեղջուկներին:
տարին բոլոր	կեցցե՛, կեցցե՛
մասնակից են	բանվորական
մի մեծ դործի,	մեր յերկիրը
մեր ընդհանուր	սովետական:
հայրենիքում	Մեծ Լենինի
սոցիալիզմ ենք	գրոշն առած,
մենք կառուցում:	մենք միասին
կորստակիված է	դիմենք առաջ...

ԱՆԴՐՖԵԴԵՐԱՑԻԱՅԻ ԱՆՎԱՆ 76-րդ ՊԻՈՆԵՐ ԲԱԶԱ

Հ Ա Ր Ց Ե Ր.

1. Ի՞նչ է նշանակում ֆեդերացիա:
2. Խորհրդայնացումից առաջ հայերը, թուրքերը և վրացիներն ի՞նչպիսի հարաբերության մեջ էին:
3. Ի՞նչպիսի յեղով, վոր այդ ազգերի աշխատավորները միացան և քեցին՝ զանազանականներին, մուսավաթականներին և մենչեիկներին:

81. ԱՄՐԱՑՆԵՆՔ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՄԻՈՒԹՅՈՒՆԸ

Այն բոլոր յերկրներում, վորտեղ տիրապետում են կապիտալիստները, բանվորները համառ պայքար են մղում ձեռնարկների դեմ:

Բանվորներն այնտեղ սարսափելի պայմաններում են ապրում, ստանալով կոպեկներ: Իսկ կապիտալիստներն ուռցնում են իրենց գրպանները: Յերբ բանվորները դործադուլ են անում, կամ բողոքում բռնության դեմ, ապա դործարանատերերը վոստիկանության, ժանդարմների ոգնությամբ դաժանորեն վրեժ են հանում նրանցից: Բուրժուական յերկրներին բոլոր բանտերը լցված են բանվորներով ու գյուղացիներով:

Բայց նրանք զենքերը վար չեն դնում: Բանվոր դասակարգը համառ պայքար է մղում կապիտալիստների դեմ: Աշխատավորները հիացմունքով ու հուսով նայում են Խորհրդային Միության, վորպես ամբողջ աշխարհի աշխատավորության պաշտպանի ու հենարանի վրա: Մեր որինակը վողեորում է մնացած յերկրների աշխատավորներին՝ իրենց յերկրում նույնպես բանվորագյուղացիական իշխանություն հաստատելու համար մղած պայքարում:

Մյուս յերկրների բանվորները մեզ ահագին յեղբայրական ոգնություն են հասցրել:

Այսպես՝ յերբ լեհական պաները մեզ պատերազմ հայտարարեցին, Անգլիայի, Ֆրանսիայի, Չեխո-Սլովակիայի, Լեհաստանի բանվորները խանդարեցին Ֆրանսիային զենք ու փամփուռներ ուղարկել Լեհաստան:

1921 թվի սովի ժամանակ բոլոր յերկրների բանվորները մեզ հաց ու դեղորայք ուղարկեցին:

Մեր Միության աշխատավորներն ել բուրժուական յերկրների աշխատավորներին ոգնում են կապիտալիստների դեմ մղած նրանց կռիվում: Որինակ՝ անգլիական հանքագործների դործադուլը:

Ամբողջ աշխարհի աշխատավորների շահերը մի յեն: Նրանց թշնամին ել մեկ է՝ կապիտալիստը, կալվածատերը:

Հ Ա Ր Յ Ե Ր.

1. Ի՞նչպես են ապրում բանվորները կապիտալիստների լծի տակ:
2. Ի՞նչպես են վարվում կապիտալիստները բանվորների հետ:
3. Ի՞նչպես են ոգնում արտասահմանի բանվորները մեզ:

82. ԱՌԱՋ ՅԵՎ ՀԻՄԱ

Յերբ մի որ յես հայրիկիս հարցրի, թե ինչո՞ւ իմ անունը Հոկտեմբերիկ են դրել, նա ասաց.

— Վորովհետեւ դու ծնվել ես Հոկտեմբերին, հեղափոխության որերին:

— Իսկ Ամալիա՞ն, — հարցրի յես:

— Ամալիան քեզնից հինգ տարի առաջ է ծնվել: Հիշո՞ւմ ես, Ամալիա, յե՛րբ ծնվեց Հոկտեմբերիկը: Հիշո՞ւմ ես՝ առաջ մենք ի՛նչպես եյինք ապրում:

Ամալիան սկսեց պատմել.

«Մենք մի փոքրիկ սենյակ ունեյինք, յերբ հայրիկն ինձ բարձրացնում եր ձեռքերին, իմ գլուխն առաստաղին եր կաշում: Մեր սենյակը մութն եր, ներքին հարկ: Յերբ պատուհանից դուրս եյի նայում, մարդկանց վոտներն եյի տեսնում: Ել ի՞նչ ասեմ... Հա՛, մայրիկն ինձ բալին եր տանում, վոր արե տեսնեմ: Յես մենակ եյի, միշտ լաց եյի լինում... Ինչո՞ւ, հայրիկ՛»:

— Վորովհետեւ յես ու մայրիկդ դործարան եյինք գնում, իսկ տատիկը միշտ հիվանդ եր, չե՛ր կարողանում քեզ խնամել. դու մենակ եյիր մնում ու լալիս: Դե՛, հիմա դո՛ւ պատմիր, Հոկտեմբերիկ, թե հիմա ինչպես ենք ապրում, — ասաց հայրիկն ինձ:

— Մենք ապրում ենք յերկհարկանի մի տան բանվորական հանրակացարանում: Մենք յերկու սենյակ ունենք, իսկ մեր խոհանոցն ընդհանուր է: Արեւ միշտ ներս է նայում մեր պատուհանից, գիշերն ել ելեկտրական յույս ունենք...

Յես յուրի. մայրիկս շարունակեց.

— Յես հիմա սիրով եմ մաքրում մեր սենյակները, իսկ առաջ ձեռքս չե՛ր գնում, վոր մաքրեյի:

— Դու ինձնից բախտավոր ես, — ասաց Ամալիան, — ինձ մենակ տանն ելին թողնում, իսկ դու մանկապարտեզ ել ես զնացել, այժմ ել դպրոց ես գնում:

— Իսկ դու ավարանցիք յերեկոյան դպրոցը. տեսնո՞ւմ ես՝ դու յեւ անուանում չմնացիր:

— Այո՛, Հոկտեմբերը մեզ բոլորիս նոր կյանք բերեց, — ասաց հայրիկս:

— Կեցցե՛՛ Հոկտեմբերը, — դռնաց փոքրիկ յեղբայրը՝ Լենը, վոր մինչ այդ լուռ խաղում եր անկյունում:

Մենք բոլորս ծիծաղեցինք ու ծափահարեցինք:

Հ Ա Ր Յ Ե Ր.

1. Հոկտեմբերն ի՞նչ հեղաշրջում առաջ բերեց կյանքում:
2. Աշխատավորների, բանվորների կյանքի պայմանները հիմա և անցյալում:
3. Ի՞նչ նվաճումներ ունենք սոցիալիստական շինարարության ասպարիզում:

Պատմեցի՛ք Ամալիայի և Հոկտեմբերիկի կյանքը խորհրդայնացումից առաջ և հետո, ասանց խոսակցական ձև տալու ձեր պատմածին:

83. ՎԵՐԱԴԱՐՁ

Փողոցի մայթերով արագ անցնում ե 10—11 տարեկան մի յերեկոա: Նրա մազերը խառնվել են: Շատ և չտալում:

— Տացիա՛, — լսվում ե անկյունից: Տղան գլուխը բարձրացնում ե, մրտա, պատառուտած: Իրեն հասակակից մի յերեկոա մոտենում ե նրան:

— Ո՛ւր ելիր կորել եսքան ժամանակ: Վա՛յ, ես ի՛նչ ե, վարտեղի՞ց ես ճարել եդ լավ շորերը, — հարցրեց մրտաը և դարձանքով սկսեց գննել յերկար ժամանակ չտեսած իր բարեկամին:

Տացիայի մանկական դեմքի վրա ժպիտ լաղաց:

Հետո դարձյալ հանդիստ տեքս ընդունեց և ասաց:

— Ինձ այլևս Տացիա չե՛ն կանչում:

— Մենք արդեն կարծում եյինք, վոր դու կորել ես, վոր մի տեղ չեյիր յերևում, բայց դու, ընդհակառակը, դուգվել ես: Ասա՛ չուտով, վո՛րտեղ ելիր, ինչո՞ւ չեյիր յերևում:

— Սրանից հետո կարող եմ դալ, — պատասխանեց նա:

— Եւ լայեղ չե՞ս անում մեզ, հա՞:

— Վո՛չ, նեղացավ նա, — չեն թողնում, դործեր ունեմ, սովորում եմ. ահա, այժմ ել ժողով եմ գնում: Պավլիկ, դու յեւ արի: Յեթե հին կյանքից և թափառելուց ձեռք քաշես, քեզ եւ կընդունեն...

Ենտեղ ծուլելերին ասում են:

— Ի՞նչ ժողով, ի՞նչ ուսում, ի՞նչ ես ասում. քիչ ե մնում սովածությունից ուշաթափվեմ:

— Այնտեղ շատ ուտելիք կա և տաք անկողին:

Պավլիկն աղանջները սրեց և ավելի մոտեցավ:

— Եղպիսի պատմություն յես միայն հեքիաթներից եմ իմացել:

Առաջինը ծիծաղեց:

— Ինձ եւ հեքիաթ եր թվում... սակայն իրականություն ե: Այգիներ ենք գցում և մշակում: Ներկայացումներ ենք տալիս, յես եւ խաղում եմ: Յեթե գիտենաս, թե ինչքան լավ ե՛:

Պավլիկն իր աղանջներին չեր հավատում:

— Պատմիր՝ ինչպե՞ս ընկար ենտեղ:

— Մանկական կոմունայի մասին լսել ե՞ս: Ա՛յ, ենտեղ եմ լինում: Թե ինչպե՞ս ընկա՝ կպատմեմ: Գնա՛նք:

— Հիշում ե՞ս մեր հին բնակարանը՝ այգու մոտ, ուր քարե մարդիկ են կանգնած, յերեսներին գայույթ՝ իսկ ձեռքերին՝ ումբեր: Առաջին մարդը, վոր ձեռքը մեկնած կանգնել ե, նրանց առաջնորդն ե: Են մարդու անունը կամո յե. նրա անունն եմ կրում յես այժմ:

— Կամո՞:

— Հա՛, մեռած ե հիմա: Կենդանության ժամանակ նա հարուստների թշնամին եր, նրանց դեմ եր կռվում և հաճախ ումբ եր նետում նրանց վրա:

Հիշո՞ւմ ես, մի անգամ են այգում շատ ժողովուրդ կար հավաքված. ինչ վոր մարդիկ էյին խոսում, նրանք Կամոյի կյանքն ու կռիվներն էյին նկարագրում:

— Հիշո՞ւմ եմ, հիշում,—գոչեց Պավլիկը,—նրանք բաց արին այն սպիտակ քաթանը, վորով ծածկված եր արձանը:

— Հա, են որը մենք շատ սոված էյինք, դու մի տեղից հաց ճարեցիր, իսկ ինձ ուղարկեցիր յերչիկ բերելու:

Յես գաղտագողի մտա մի խանութ, յերչիկները թոցրի:

Ամեն ինչ լավ կվերջանար, յեթե են անիծված խանութպանը հետևիցս չընկներ. հանկարծ վրա հասավ և զրպանիցս յերչիկները հանեց: Շտապելու պատճառով յերչիկները գրպանումս լավ չեյի պահել:

Խանութպանն ինձ բռնեց, վոտների տակ գցեց, հենց են ե՛ ուզում եր ծեծել, յերբ մի անծանոթ յերիտասարդ խանութ մտավ:

Նա ինձ աղատեց գաղաղած խանութպանի ձեռքից, փաղաքչեց, անունս հարցրեց և տարավ ինձ իր հետ, իսկ այժմ, ինչպես տեսնում ես, պիտներ եմ... Անունս ել՝ Կամո: Գիտե՞ս՝ ինչու: Յերբ Կամոյի արձանի բացումն եր, յես ել հենց այդ որն ընկա նրանց մոտ և այն որվանից սկսեցի նոր կյանքով ապրել:

Պավլիկն ապշած, բերանը բաց լսում եր:

Լռություն տիրեց:

— Ուրեմն սրանից հետո չե՞ս գա մեզ մոտ:

Պավլիկը մտածմունքի մեջ ընկավ:

— Այնտեղ կրկես կա՞:

— Կրկե՞ս: Զկա, սակայն մենք ենտեղ մարդանք ենք կատարում:

Պավլիկն սկսեց գլուխը քորել:

— Ինձ ել քեզ պես կհագցնե՞ն:

— Այո՛. դու թմբուկ ածել գիտես. քեզ թմբուկ կտան: Յերբ վորեւե տեղ տանեն, դու ետուցնորդես մեզ և կածես:

— Լավ կլինի, բա՛յց...

— Ի՞նչ...

— Սովորելը դժվար ե:

— Յես ել էյի դժվարանում, սակայն յերբ կարգալ սովորեցի, սիրեցի: Վորքան հետաքրքիր բաներ կան գրված գրքում: Դու գիտե՞ս, թե քեռի Լենինն ով ե:

— Լսել եմ:

Յերկուսն ել լռեցին:

— Շատ եմ շտապում: Կգա՞ս ինձ հետ,—հարցրեց Կամոն:

— Իսկո՞ւյն: Մի փոքր սոլասիր, մտածեմ: Տղերանց հետ ել կտեսնվեմ և նրանց ել կասեմ. դու վո՞ր տեղ ես բնակվում:

Կամոն հասցեն տվեց:

— Այս յերեկո մեզ մոտ: Ներկայացում կա: Անպատճառ յեկե՛ք:

— Կգանք, ցտեսություն:

— Ցտեսություն, չմոռանաս, ինչ վոր ասացի:

Ակումբի դահլիճը լուսավորված ե: Մեծ բազմություն ե հավաքված: Ամեն ինչ կարգին ե: Յերեկոյթը շուտով սկսվելու յե, սակայն Կամոն չի կարողանում հանգստանալ. կարծես թե մի բան ճնշում ե, վաղվդում ե շուտ-շուտ դուրս կողմն ե նայում. «գուցե չկան, ո՞ւր են այսքան ժամանակ»:

Յերբորդ զանգը, տվին ուր վոր ե, վարագույրը կրացվի:

Կամոն վերջին անգամ նայեց դեպի դուռը, սիրտը թնդաց: Յերեսաց Պավլիկի մրոտ դեմքը, հետո յերկրորդի, յերրորդի: Կամոն դիմավորեց նրանց:

— Ո՞ւր էյիք եսքան ժամանակ:

— Վաղուց ե դուրսը սպասում էյինք: Մինչև մըթնեյը չվստահացանք ներս գալ. ամաչում էյինք:

— Դե գնա՛նք, նայենք, — առաջարկեց նա, — չառ սենյակներ կան՝ ընթերցարան, Լենինի անկյուն, նկար-չական սենյակ, մարդանքի դահլիճ: Ի՞նչ եք կանգնել, գնանք, — կրկնեց Կամոն:

— Մեզ ներս կթողնե՞ն:

— Իհարկե: Հետո կերգեն, վոտանալորներ կար-տասանեն, ներկայացում կլինի: Յես ել եմ մասնակ-ցում, — հպարտությամբ ավելացրեց Կամոն և սուսը-նորդեց իր բարեկամներին:

— Ընկե՛ր զեկավար, յեթե կարենք յե՛ մի յերկու րոպե ինձ լսեք, դորժ ունեմ, — դիմեց Կամոն մի յերե-տասարդի և սկսեց նրա հետ խոսել:

— Շա՛տ լավ, չա՛տ լավ, ապրե՛ս, — խոսակցու-թյունը վերջացնելուց հետո ասաց զեկավարը Կամոյին, ձեռքը խփելով նրա ուսին:

— Ընկերնե՛ր, մի րոպե սպասեք, — ասաց նա:

Պիոներների չրջանում չչուկ անցավ, յերբ զեկա-վարը բեմը բերեց Պալլիկին ու նրա ընկերներին: Նրանց հետևում եր ժպտուն Կամոն:

— Ընկերնե՛ր, — սկսեց զեկավարը, — ահա ձեր նոր բարեկամները. սրանց բերել ե Կամոն. ընդունեցեք սրանց ձեր ընտանիքը: Սրանք ծնողներ չունեն և ստիպ-ված եյին փողոցե-փողոց թափառել և վողորմություն խնդրել: Այսօրվանից ձեր կուրեկաիվը կլինի սրանց ըն-տանիքը, ձեզանից ամեն մեկը կլինի սրանց խնամողը: Սովորեցրեք և աշխատեցե՛ք միասին:

Կեցցենք ի ու ծափահարությունների վորոտը ծած-կեց զեկավարի խոսքը:

Հ Ա Ր Ց Ե Ր.

1. Ինչի՞ հետևանք ե անապատանությունը:
2. Ինչո՞ւ հին կարգերում չէր կարող վերանալ անապատա-նությունը, իսկ մեր կարգերում վերացվել և և վերացվում ե:

3. Ինչի՞ հիման վրա յե անապատանությունը վերացվում (հիշե՛ր պատմվածքը, Կամոյին):

4. Ո՞վ ե հեղափոխական Կամոն (մի քանի խոսքով պատ-միր):

84. ՏԱՍՆԵՐԻՔ ՏԱՐԵԿԱՆԸ

Գիշերը սև, մրտաված սենյակում իր յեղբայր Միտ-րիի հետ միևնույն անկողնում ե քնում Վանկան: Քնած եր Վանկան: Յերազում տեսնում ե, իբր թե լիվերնի բաժանմունքին մի չողեկառք մոտեցավ: «Լո՛ւո՛ւ» մոնչաց, շարժվեց, գնաց, գնաց զեպի Մոսկվա դետը: Գետն ել ամենևին գետ չի, այլ ծով ե, սոցիալիստական հեղափոխության ծով: Շողեկառքը, առանց մտածե-լու, ագիքների մեջ ե մտնում: Ալիքները բարձրանում, ասանիքի վրայով մյուս կողմն են թափվում, չողեկառ-քի ներսն են վողորում: Հնոցի բոցը բորբոքվում ե, ծովի ազահ լեզուներն ե այրում, և թչչում, թչչում են ամխի կտորները:

Իսկ հնոցայանը Վանկան ե:

— Հը, հողեցի՞ր, ընկեր Նադարենկո (Վանկայի ազգանունն ե):

Նայում ե և ի՞նչ տեսնի. — Լենինն ե:

Սրտում փրփուր ե բարձրանում:

— Չե՛, չեմ հողնել, ընկե՛ր Լենին:

— Իսկ ի՞նչ ես կարծում, չողեկառքը մինչե կամու-նիզմ կհասցնե՞նք:

— Կհասցնե՛նք, ընկե՛ր Լենին:

— Դե՛, յեթե այդպես ե, առաջ շարժվիր, քիչ ե մնացել...

— Պատրաստ ե, ընկե՛ր Լենին:

Բշտիկներով ե ծածկվել կաշին. սպիտակ բլրակ-

ների պես մի քան տալիս ալիքները, լիզում, պայթեցնում են բշտիկները:

Հանկարծ—կանգ ե առնում շողեկառքը... Կղզի յե:

Կղզում ամառ ե: Արևի լույսն ե ծորում: Զեփյուռն ե շոյում: Բողբոջների մեջ են տները: Տներից ինչ վոր մարդիկ են դուրս գալիս:

— Բարև ձեզ, ընկե՛ր Լենին. իսկ այս ձեռ հետի տղան ո՞վ ե:

— Սա կոմյերիտական Նազարենկոն ե:

— Վո՛չ, յես կոմյերիտական չեմ, ընկե՛ր Լենին. կանոնադրության պահանջածից մի տոմսով փոփոք եմ, տասներեք տարեկան եմ...

— Ա՛, այդպե՞ս ե, հա՛...

Յեւ ճանկարծ հանում ե Լենինը մը բազմապիսի սոր կոմյերիտական տոմս ե վանկային ե տալիս: Վանկան այդ տոմսում տեսնում ե իր ազգանունը, անունը... Ա՛խ...

— Վա՛նկա, ա՛յ Վանկա:

— Ի՞նչ ե ընկեր Լենին:

Տրորում ե քնաթաթախ աչքերը և Միտրիին ե տեսնում:

— Ի՞նչ յեղավ տոմսը, տոմսն ո՞ւր ե:

— Ի՞նչ տոմս:

— Կոմյերիտական տոմսը:

— Ո՞ւմ:

— Իմ:

— Վո՞րտեղից եր:

— Ընկեր Լենին եր տվել...

Յեւ ճանկարծ հասկանում ե Վանկան, վոր յերազում ե տեսել Լենինին, և այլևս վոչինչ չկա:

Դառնությամբ պատմում ե Միտրիին:

Միտրին սրտաշարժվում ե:

— Տեսնում եմ, Վա՛նկա, վոր դու լավ կոմյերիտական ես լինելու: Միայն թե յես ել հիմա քո դրության մեջ եմ—դու կոմյերիտություն ես մտնելու, իսկ յես՝ կուսակցություն... Քեզ պես յես ել եմ տանջվում, տարիքդ պակաս ե, ասում են...

Հ Ա Ր Ց Ե Ր.

1. Ինչ բանի մասին եր չատ մտածում վանկան:

2. Վանկայի յերազն ի՞նչ իմաստ ունի:

3. Ի՞նչ տարբերություն կա պիոներական կադմակերպության և Կոմյերիտության միջև:

85. ՀՈՒՆՎԱՐԻ 9-Է

Զմեռվա մի սաստիկ ցուրտ առավոտ եր: 1905 թվի հունվարի 9-ին (22): Լենինգրադի բանվորական թաղերից ահագին ամբոխ եր առաջ շարժվում: Առաջից տանում եյին թագավորի ու սրբերի պատկերները. հետևից գնում եյին բանվորները, բանվորուհիները և նրանց յերեխաները՝ տոնական հագուստներով:

Ո՞ւր եյին գնում և ինչո՞ւ:

Սովն ու կարիքն եյին ստիպել նրանց օիրտ անել թագավորի մոտ գնալու և խնդրելու, վոր նա իրենց պաշտպանի հարուստներից ու վոստիկաններից:

Թագավորին ուղղած իրենց խնդրում նրանք գրում եյին.

«Թագավո՛ր, մենք՝ բանվորներս, մեր կանայքն ու յերեխաները և մեր ծերունի ծնողները յեկել ենք քեզ մոտ արդարություն և պաշտպանություն խնդրելու:

«Մենք ծայր աղքատության ենք հասել, մեզ ծանրարեւոնում են անտանելի աշխատանքներով: Ել ուժ չմնաց, թագավո՛ր, մեր համբերությունը վերջանում

է, հասել եւ այն սոսկալի բոպեն, յերբ մեռնէն ալելի
լավ ե, քան չտեսնված վիրավորանքներ կրելը»:

Յերկու հարյուր հազարից ալելի բանվոր-ամբոխ
մոտենում եր թագավորի պալատին:

Գնում եյին հանգիստ, առանց յերգերի, առանց
կարմիր դրոշակների... Գնում եյին խնդրելու, աղա-
չելու...

Յեւ հանկարծ՝ հրացանի կրակ:

Առաջին շարքերում շփոխություն ընկավ. կարծե-
ցին, թէ ինչ վոր սխալ բան կատարվեց. շարունակեցին
առաջ գնալ: Նորից կրակեցին:

Ամբոխի առաջ յեւան կապակներ՝ մերկացրած սրե-
րով. աղաղակ բարձրացավ...

Մեկն ընկավ կուրծքը վիրավոր... Ամբոխը կանգ
առավ...

«Մի՞թէ չախտի հասնենք թագավորին, մի՞թէ կրա-
կում են մեզ վրա», — շնչացին ամենքը:

Հինգ հազար հոգի վիրավորվեց, հազար յերկու
հարյուր հոգի սպանվեց, եւ այդ բոլորը մի ոբում:

Այդ որից բանվորները հասկացան, վոր քանի թա-
գավոր կա, նա միշտ բուրժուազիայի կողմը կլինի,
բանվորն որ չի ունենա. պետք ե գահից վռնել թագա-
վորին:

Հ Ա Ր Ց Ե Ր.

1. Ինչո՞ւ յեր ժողովուրդը գնում ցարի մոտ:
2. Ինչո՞վ պատասխանեց ցարը:
3. Ի՞նչ ե դրում Լենինն Արյունոտ կիրակիի մասին:
4. Ի՞նչ դառ հանդիսացավ «Արյունոտ կիրակին» բանվոր դա-
տակարգի համար:

Դիտեցե՛ք, թե յերբ ե գործածված չակերտը (« »):

Մարտի ութիս,

լուս ու մթին—

Մի ձեն ընկավ գեղով մին,

Պիտներ-փողն ե,

Զիլ կանչողն ե,

Հավաքում ե ամենքին:

— Ա՛յ կնանիք,

Հարս ու աղջիկ,

Շուտով յեկեք ժողովի

Շուտով վազեք,

Շուտով հասեք,

Այսօր տոն ե գեղովի

— Գեղը քիչ ե,

Գեղը—ի՞նչ ե—

Քաղաք առա՛, վողջ աշխարհ.

Ով մեզ հետ չի,

Թող վոր կորչի,

Կեցցե՛ մեր ազատ աշխարհ:

— Ամեն տարի—

Խեղ ու բարի—

Մենք տոնում ենք ես այս

Մենք մեր կամքով,

Աշխատանքով

Փորում ենք հնի հորը:

— Բերե՛ք, բերե՛ք,

Հաշիվ անենք,

Ես տարի ի՞նչ եք արել—

Քանի կնկա,

Հարս-աղջկա

Լիկկայան եք դուք տարել:

Դուք արե՞լ եք,

Կատարե՞լ եք
 Պատգամը Մեծ Լենինի,
 Թե՛ «ամեն կին
 Ու տանտիկին
 Պետք է վոր գրագետ լինի»:
 — Ա՛յ, ես մեկին,
 Այլի մի կին—
 Գյուղիորհուրդ եմք մենք տարել:
 Իսկ Սոնիկին,
 Մեր Ձոնիկին
 Հաշվետար եմք դարձրել:
 Խավար, տգետ
 Մեր մեջ չկա վոչ մի կին,
 Մենք պարծանքով
 Ու ցնծանքով,
 Ա՛յ, հայտնում ենք ամենքին:
 — Ահա եստեղ,
 Հենց տեղն ու տեղ
 Կոլեկտիվ ենք հիմնում նոր.
 Ամեն դրկից
 Սոցմրցակից
 Հայտարարեց հենց եսոր:

Հ Ա Ր Յ Ե Ր.

1. Առաջ կինն ի՞նչ վիճակի մեջ էր:
2. Հեղափոխությունն ի՞նչ տվեց կնոջը:
3. Ինչո՞ւ անհրաժեշտ է համատարած դրագիտությունը:
4. Ձեր տան կանայք ու աղջիկներն ի՞նչ են անում:

87. ՄԱՅԻՍՅԱՆ ՈՐԵՐԻՆ

(Հատված)

Յես շատ շուտ ընտելացա բանտի կյանքին: Ինձ
 կանչում էին «բանտի աղջիկ»:

Դաշնակցական կառավարությունն իբր թե պատ-
 ժելու համար ինձ բանտարկեց, սակայն այնպիսի մի-
 ջավայր գցեց, վոր յես կոմունիստական վոգով դաս-
 տիարակվեցի և այնուհետև ել վոչ վոք չկարողացավ
 կտրել ինձ կուսակցությունից:

Ոգոստոսի վերջն եր: Մի անգամ ներս մտավ գլխա-
 վոր վերահսկիչն ու հայտնեց, վոր դատախազը կանչում
 է ինձ: Գնացի: Շատ եյի լսել այդ մարդու մասին, բայց
 չեյի տեսել: Նա ինձ վրա առաջին իսկ հայաքից վատ
 տպավորություն թողեց, գուցե նրա համար, վոր իմ
 առաջ կանգնած եր դասակարգային թշնամի: Յերկար
 ճառելուց հետո, նա ասաց.

— Դուք դեռ ջահել աղջիկ եք, ի՞նչ դործ ունեք
 այն սրիկաների հետ: Մի դիմում գրեցե՛ք, վոր նրանք
 ստիպմամբ ձեզ տարել են իրենց շարքերը: Այդ դիմու-
 մը մենք կտպենք մեր թերթերում, բանտից կազատենք
 ձեզ ու աշխատանք կտանք, վորովհետև հայ աղջիկ եք,
 խղճում եմ ձեզ:

Իմ կյանքում դրանից ավելի զգվանք չեյի զգացել:
 այնպես ջղայնացած եյի, վոր հաղիվ-հազ ինձ զսպե-
 լով ասացի.

— Վերջապես բավական ե... — և դուրս յեկա նրա
 գրասենյակից:

Յերբ կամերա վերադարձա, ընկերներս անմիջա-
 պես ինձ շրջապատելով՝ սկսեցին հարց ու փորձ անել
 Բայց յես այնքան հուզված եյի, վոր չկարողացա վոչինչ
 պատասխանել:

Այդպես շարունակվում եր մեր կյանքը բանտում—
 մի որ կուշտ, մի որ քաղցած:

Սեպտեմբերի 13-ին նշանակվեց 18 կոմունիստների
 դատ, վորոնց թվում և իմը:

Դաշնակցական արտակարգ դատարանը բայլելի-
ներին դատեց, վորպես «ազգի դավաճանների»:

Յես, վորպես անչափահաս, ազատվեցի բանտից,
իսկ մյուսները 4—5 և 10 տարով կալանքի յենթարկվե-
ցին:

Դաշնակցական կառավարութիւնը, սակայն այդ-
քան կյանք չունեցավ, վորովհետեւ Մայիսյան ապստամ-
բութիւնն արդեն ստորագրել եր դաշնակների մահվան
դատավճիւրը, վորը կատարվեց 20 թվի նոյեմբերի
29-ին:

Հ Ա Ր Յ Ե Ր.

1. Ինչո՞ւ դաշնակցական իշխանութիւնը հալածում, ձեր-
բակալում և դնդակահարում եր կոմունիստներին:

2. Ինչի՞ համար եր դատախազն ուղղում հեղինակից դիմում
վերցնել:

3. Ի՞նչ տարբերութիւն կա բուրժուական բանտի և մեր ուղ-
ղիչ տան մեջ:

4. Ո՞ւմ կուսակցութիւնն և Դաշնակցութիւնը:

88. ՄԱՅԻՍ

Գործարանի շաշով յեկար,
Բանվորների կանչով յեկար,
Անպարտ, հպարտ, սիրո՛ւն մայիս,
Մեզ մոտ մի նոր շնչով յեկար.
Ձեն տվեցիր սովխոզներին,
Մեր ծիծաղկոտ կոլխոզներին.
Արձագանդն ե շուրջդ հնչում,
Քեզ ուղղում են հազար վողջույն:
Գյուղ ու քաղաք ձեռքը-ձեռքին,
Հույսի, լույսի յերգը յերգին.

Կառուցումներ՝ մահ թշնամուն,
Մենք գործում ենք—բերքը բերքին:
Քանի՛ յերգեր, քանի՛ բերքեր,
Աշխատավոր քանի՛ ձեռքեր.
Միշտ կառուցմամբ նորն ե յեւնում,
'Հինը ընկնում, անդարձ մեռնում...
Խորհրդային ազատ յերկրում
'Հաղթանակող նորն ե ծաղկում.
Քանի՛ յերգեր, քանի՛ բերքեր,
Աշխատավոր տոկուն ձեռքեր...
Գործարանի շաշով յեկար,
Բանվորների կանչով յեկար.
Անպա՛րտ, հպարտ, սիրո՛ւն մայիս,
Հնգամյակի շնչով յեկար:

Հ Ա Ր Յ Ե Ր.

1. Ի՞նչպէս ենք տոնում մայիսի 1-ը մեր յերկրում:
2. Ինչո՞ւ մեր կառուցումները «մահ են թշնամուն»:
3. Ինչո՞ւ յե տոնում «անպարտ, հպարտ, սիրո՛ւն մայիս»:
4. Մայիսյան տոնակատարութիւնը դրավոր շարադրեցե՛ք:

89. ՊԱՏԱՆԻ ՀԵՐՈՍԸ

Կարմիր Դրոշի շքանշանի հերոս Միշա Յուֆաշկովը
մինչև 11 տարեկան հասակը յեղել և անսպաստան և
թափառել և Հեռավոր Արեւելքում: 1927 թվին նրան
կարմիր բանակայինները վերցնում են իրենց մոտ՝ խնա-
մելու և դատախարակելու:

1929 թվի ամառը, յերբ ծաղեց Զին-Արեւելյան յեր-
կաթուղու կոնֆլիկտը, այդ ժամանակ Միշան Հեռավոր
Արեւելյան սահմանապահ մասերից մեկում եր դանվում
և չեփորահար եր:

Մի անգամ Միշա Ֆուֆաչկովին կարևոր հանձնարարությամբ մի սահմանապահ մասից ուղարկում են մյուսը: Ճանապարհին չին զինվորները բռնում են նրան ու տանում Սան-Սի քաղաքը: Միշան իրեն հովիվ է ձևացնում ու վռչինչ չի պատմում իրեն հարցաքննող սպիտակ գվարդիական օֆիցերին: Իր գերության յերրորդ օրը, յերբ պահակները փոխվելիս են լինում, Միշան փախչում է Սան-Սիից ու սահմանն անցնելով՝ միանում է մեր զորամասին:

Այս ու մի շարք այլ հերոսությունների համար ԽՍՀՄ Կենտրոնական 14 տարեկան պիոներ Միշա Ֆուֆաչկովին պարգևատրեց կարմիր դրոշի շքանշանով: Այժմ պատանի հերոսը սովորում է Մոսկվայի Պրոլետարական Դիվիզիայում:

Հ Ա Ր Ց Ե Ր.

1. Ո՞վքեր են սպիտակ գվարդիականները:
2. Ի՞նչ գիտեք Ձինաստանի մասին:
3. Ո՞ւմ է տրվում Կարմիր դրոշի շքանշանը:
4. Ինչո՞ւ 11 տարեկան Ֆուֆաչկովն ստացավ Կարմիր Դրոշի շքանշան:

90. ԿՈՒՆՈՋՆԻԿՆԵՐՆ ԱՅՐԵՑԻՆ ԱՍՏՎԱԾՆԵՐԻՆ


Մոսկվայի չրջանի գյուղերից մեկում 27 միջակ ու չքավոր տնտեսություն կոլխոզ կազմեցին. նրանց մեջ եր նաև գյուղացի Ֆյոդոր Սինիցինը:

Ձատկին Սինիցինի կինը մի յերկու սրբանկար գնեց և կախ տվեց սենյակի անկյունում, մյուսների կողքին: Մարդը վիրավորվեց և առաջարկեց կնոջը տալ իր բաժին սրբանկարները: Ֆյոդորը հավաքեց կոլխոզիկներին և նրանց ներկայությամբ այրեց պատկերները:

Կոլխոզիկներից մեկը մոտեցավ Սինիցինի կնոջն ու ասաց.

— Դու յե՛լ գիտես, վոր զուր ես այդ պատկերները պահում. բե՛ր, քո մասն ել ածիր սրանց վրա, վառենք, վերջանա:

Կինը, առանց յերկար տատանվելու, ասաց, — «Համաճայն եմ, միայն թող Ֆյոդորն ել դրա փոխարեն խոսք



տա, վոր կթողնի խմելը: Չե՞ վոր ալկոհոլի բույնը պալաւ չե կրոնի բույնից:

Ֆյոդորն ուրախացավ: Մարդ ու կին ձեռք-ձեռքի խփեցին ու տուն մտնելով՝ գուրս տաքան նկարները, մոմակալները, կանթեղները և այլն:

Հարևանները վողկորվեցին և կես ժամվա մեջ հավաքեցին 200-ի չափ պատկերներ և փառավորապես այրեցին:

Մյուս որը գյուղում տասնմեկ խրճիթներն դռներին
կապրած էին լողուղներ ու հայտարարություններ:

«Տերտեր ու տիրացու մեր տներն է հեռու»:

«Կուլակներին յերկրում և աստվածներին յերկըն-
քում հաղթեցին»:

«Կորչե՛ն աստվածները, կուլակներն ու հարեցո-
ղությունը»:

Ա Շ Խ Ա Տ Ա Ն Բ.

1. Սոցմրցման պայմանադիր կնքեցե՛ք այն ծնողներին հետ,
վորոնք հարբում են, ծեծում ու հայհոյում, յեկեղեցի յեն դնում,
հեղինակներին ու դրբացներին են դիմում:

2. Մտածեցե՛ք, ինչո՞վ կարող են փախարինվել այս բոլորը:

3. Կաղմեցե՛ք այդպիսի պայմանադրի նախագիծ, չմոռանաք
Նախագծի մեջ մտցնել նաև ձեր անելիքները:

91. «ՍՈՒՐԲ ՍՍԵՐՍԻ» ԶՈՂԸ

Դեռ մանուկ էյի՝ յոթ-ութ տարեկան:

Հագիվ եմ հիշում:

Մի՞թե կարող եմ մոռանալ իմ սիրելի յեղբոր վա-
ղածամ և ծանր մահը:

Սուրբ Սարգսի մեծ սլասի որերին եր: Ամբողջ 40
որ տառա մեր հոգին հանեց պառ ու ծոմ պահել տալով:
Մի ամբողջ ամիս, բացի մեր գյուղի առատ կարտոֆի-
լից ու զարե հացից, բերաններս վոչինչ չէինք դրել:
մի քանի որ ել ծոմ պահելով՝ մեր փորը սառը ջուր էյինք
միայն լցնում:

Մեծ պասի վերջին որերն եր:

Տառա փոխինձ եր արել ու տաշտի մեջ պինդ ծած-
կել: Գիշերը սուրբ Սարգիսն սպիտակ ձիով պետք և

գար, փոխինձը տրորեր, վոր առավոտյան նոր սկսեյինք
խաչիլ յեփել:

Այդպես եր հավատացնում մեզ տառա: Գիշերը յեր-
կար եր. քուններս չեր տանում, ոջախը թեթ էյինք ա-
րել ու նստել: Տառա սկսել եր իր առակներն ու պատ-
մությունները: Նա պատմում եր, թե ինչպես գիշերը
սուրբ Սարգիսը պետք և դա սպիտակ ձիով:

Խեղճ յեղբայրս, վոր ինձնից յերկու-յերեք տարով
եր մեծ, հավատում եր ստերին: Վորպեսզի տեսնի սուրբ
Սարգսին սպիտակ ձիով յերկնքից իջնելիս, գիշերը,
մեր քնած ժամանակ, մերկ դուրս և դալիս ու ժամերով
դռանը քար կտրում, սպասում, հա սպասում:

Առավոտյան, յերբ վեր կացանք, տառա բացեց
տաշան ու ցույց տվեց փոխինձի վրա ձիու վռաքի հետ-
քը:

Այդ որվանից յեղբայրս անկողին մտավ. դաժան
ցուրտը նրան չեր խնայել, ու յերեսան թոքերի բորբո-
քում եր ստացել: Պառավները տառիս խելքը մոցրին,
վոր յեղբորս հիվանդությունը սուրբ Սարգսից և և վոր-
պեսզի բժշկվի, պետք և մատաղ տանել սուրբ Սարգսի
խաչը, վոր մեր գյուղից հինգ կիլոմետր հեռու յեր,
մի բարձր ձյունոտ բլրի վրա: Այդպես ել արեցին, յեղ-
բորս անկողնից հանեցին և գնացին սուրբ Սարգսի խո-
չը: Դեռ խաչին չհասած, աղետ տառա ոտիպում եր հի-
վանդ յերեսային սառը ձյունի վրա չոքե-չոք, աղոթի-
լով՝ մոռենալ խաչին: Յեղբորս հիվանդությունն ա-
վելի բորբոքվեց ու տուն վերադառնալուց մեկ որ հե-
տո մատաղ հասակում վախճանվեց: Միայն մի հատիկ
յեղբայր ունեյի, նրանից ել զրկվեցի:

Անցան տարիներ. տառա վախճանվեց: Սակայն
վախճանվելուց առաջ նա պարզեց իր դադանիքը: Մեր

փոխինձի վրա պայտի հետքը կեղծել եր տառս՝ գիշերը
մեր քնած ժամանակ։ Յեւ խեղճ յեղբայրս կրոնամու-
տակետ տառիս զոհ դարձաւ։

Հ Ա Ր Ց Ե Ր.

Ի՞նչ խարդախ միջոցներով հողերականները խաբում են
տղետ աշխատավորութեանը։

92. ԿՈՒԼԱԿՆ ՈՒ ՄԱՏԱՂԸ

Կուլակ Սամսոնը մատիտը ձեռին,
յերկար ծխախոտը ականջի ծերին՝
ընկել ե գյուղը, կանչում ե թաղ-թաղ
ու զատկվա համար գրում ե մատաղ։

— Ե՛յ դուք, գյուղացի՛ք, դո՛ւք, աստվածավա՛խ,
մատաղի համար բաշխեք հաց ու աղ,
վոր յեկեղեցին ձեր տունը պահի,
կարկուտը չգա՝ ձեր արտը տանի։

— Թե մատաղ չանեք, կորավ ձեր հոգին,
վայն եկավ, տարավ ձեր յեզն ու մաքին։
ձեր ցանքսը կուտի կարկուտ ու մորեխ,
կմնաք սոված, խեղճ ու անտրեխ։

Իսկ գյուղի միջից շարքերով կայտառ
դուրս յեկավ խումբը պիոներական,
ու նրանց միջից մեկը քաջաբար
ես խոսքերովը տվեց պատասխան։

— Սո՛ւտ ե բոլորը և՛ ժամ, և՛ մատաղ։
սո՛ւտ ե աղոթքը, սո՛ւտ ե և՛ աստված։
Ժիր աշխատանքը տունը կպահի,
ու գիժ հրթիռը ամպը կցրի։

Մատաղը ծախս ե իզուր, անողուտ,
դյուղը կփրկի տրակտոր, շարքացան.
մենք փողը կտանք հզոր պետապին,
վոր վրա հասնի մեր դժբախտ որին...

Հ Ա Ր Ց Ե Ր.

1. Ի՞նչպես են կուլակները շահագործում գյուղացիներին։
2. Գյուղում կուլակներին ովքե՞ր են ոգնում։
3. Ի՞նչպես են չքավորները պայքարում կուլակների դեմ։
4. Ի՞նչպես ե պետապը հասնում գյուղացու դժբախտ որին։

93. ԿԱՐՄԻՐ ԿՆՈՒՆԻՐ

Տերտերը լսեց, վոր գյուղում ինչ-վոր
դպրոցի բեմում կնունք կա այսոր.
չտապեց ենտեղ, չուզեց, վոր կանչեն,
«կնունքն անտերտեր» վո՞նց կըլի՝ կասեն։

Ու գնաց, տեսավ... և շատ դարմացավ.
— Ես ի՞նչ կնունք ե,—ինքն իրեն ասավ.
մարդիկ, դրոշակներ, խորհուրդ, նախադաս,
կին ու կոմսոմուլ, անթիվ յերեխա։

— Բա ո՞ւր ե,—կանչեց,—վո՛չ ժամկոչը կա,
վո՛չ տատմեր, քա՛վո՛ր, վո՛չ ել տիրացու.
վո՛չ ոջախ, կաթսա, վո՛չ ջուր, վո՛չ լաղան,
վո՛չ արաղ, գինի՛, վո՛չ սուփրա-սեղան.

կնունք եք անում առանց աջամբույր,
եւ ի՞նչ որ կանի եդ խեղճ յերեխան։

— Ե՛հ, գնա՛, տերտե՛ր, ես քո տեղը չի.
դնաց քո դարը, ել ե՛ն գեղը չի.

յերբ ետտեղ արդեն աստված ե մեռնում,
եւ դո՛ւք, թշվառներդ, վո՞րտեղ եք մնում։

1. Ներկա յեղե՛լ եք կարմիր կնու՛նքի. նկարագրեցե՛ք:
2. Ի՞նչ վնասներ ե տալիս տերտերի ցանկացած կնու՛նքը:

Գտե՛ք բառեր և փոփոխեցե՛ք հետևյալ բառերի նման.

1. Գյուղ, գյուղի, գյուղից, գյուղով, գյուղում, գյուղեր...
գրոշակ, գրոշակի գրոշակներ...
2. Գինի, գինու, գինուց, գինով, գինում, գինիներ... մարդ,
մարդու, մարդուց, մարդով — մարդիկ...
3. Մրցում, մրցման, մրցումից, մրցումով, մրցումում, մըը-
ցումներ...
4. Կին, կնոջ, կնոջից, կնոջով — կանայք, կանանց...
5. Մայր, մոր, մորից, մորով — մայրեր...

94. ՌԱԶՄԱԿԱՆ ԱՆԿՅՈՒՆ

Մովսեսը բանակից տուն եր դարձել: Նա գյուղում կաղմակերպեց ռազմական անկյուն: Գյուղացիք այն-
տեղ սովորում էյին նշան խփել, թունավոր գազերից
պաշտպանվել և վիրավորներին առաջին ոգնություն
ցույց տալ:

Հասով Կարմիր բանակի տարեդարձի օրը — փե-
տըրվարի 23-ը: Յերեկոյան Մովսեսը վերցրեց 2 հրա-
ցան և հինգ կոտորակ արձակելու գործիք և զնաց զըպ-
րոց:

Ամբողջ գյուղն այնտեղ եր: Գյուղացիները վարո-
չեցին կաղմակերպել ռազմական անկյուն, Մովսեսին ել
ընտրեցին ղեկավար:

Հենց հետևյալ առավոտը Մովսեսն սկսեց իր գոր-
ծը:

Հարմար տեղ ընտրեց, նշաններ դրեց: Վողջ գյուղը
հավաքվեց: Նշան էյին խփում և՛ հին կարմիր-բանա-
կայինները, և՛ նախակոչիկները, և՛ կոմսոմոլը:

Առաջին մրցանակը տարավ կոմյերիտու՛հի Նաղի-
կը:
Բոլորը խոսք տվին՝ նշան խփել սովորել:

95. ՅԵՐԳ ԸՆՏՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆԻՒՄՍՍԻՆ

Բրիգադի՛ր դու գանդրամադ,
յերբ տասնըութ տարու դառնաս,
իրավունք ե տրվելու քեզ,
դու յե՛լ ընտրես ու ընտրվես:

Կլինես ակտիվ քաղաքացի, —
և՛ պայքարող, և՛ շինարար
այժմ կարդա՛ և զարգացի՛ր,
առա՛ջ դնա արագ-արագ:

Պետք ե լինես աշխույժ, յեռուն,
հարյուրավոր զրքեր կարդաս.
չե՞՞ վոր քեզ ե վիճակվելու
այնքան փայլուն մի ապագա:

Այբուբենը մեքենայի,
հիմիկվանից քեզ դաս արա.
ըսվ, ուշադիր գննի՛ր, նայի՛ր,
տիրապետի՛ր նրան արագ:

Պատուակը իրա տեղում,
դասանակը իրա տեղում.
տես՝ մեքենան վո՞նց են քանդում:
վո՞նց են մաքրում, վո՞նց են յուղում:

Բրիգադի՛ր դու գանդրամադ,
յերբ տասնըութ տարու դառնաս

իրավունք ե տրվելու քեզ,
դու յեւ ընտրես ու ընտրվես:



Խորհուրդների մեր յերկրի դեմ
ու մեր կարմիր դրոշի դեմ,
տե՛ս, թշնամին դավ ե լարում
և կատաղի նա պայքարում:

Մենք եւ լինենք մեր դիրքերում,
մենք եւ լինենք արթուն պահակ,
խորհուրդների յերկրի համար
մենք եւ պաշտպան, հսկող դառնանք:

Մեր ուսերով ու մեր կամքով,
ապահովենք մենք հաղթանակ,
և ընտրական իրավունքով,
խորհուրդները աշխատեալ գնանք:

Հ Ա Ր Յ Ե Ր .

1. Ի՞նչ խորհուրդ ե տալիս հեղինակը դեռ անչափահաս յերկ-
տասարդին:

2. 18 տարին լրանալուց հետո խորհրդային քաղաքացին ի՞նչ
իրավունքներ ե ստանում:

3. Ի՞նչ ե նշանակում «Այբուբենը մեքենայի քեզ դաս արա՛ն»:

4. Յերբ թշնամին հարձակվելու լինի մեր յերկրի վրա, մենք
ի՞նչ պիտի անենք:

Այս վոտանավորի հետևյալ բառերի միտքն ուրիշ ի՞նչ բա-
ռերով կարելի յե արտահայտել.

Գանդրամաղ, պայքարող, աշխույժ, փայլուն, ապագա, զըն-
նել, նայել, արագ, մաքրել, արթուն:

8ույց տվե՛ք հետևյալ բառերի տարբերությունը.

1. Փայլել, պսպղալ, չողալ:

2. Աշխույժ, ժիր, առույգ, կայտառ:

3. Ապագա, գալիք:

4. Ձենել, դիտել, նայել, հետադուտել, ուսումնասիրել:

5. Մաքրել, սրբել:

6. Արթուն, դարթուն, չքնած, անքուն:

96. ԸՆԿԵՐԸ

Նրանք փոքրիկ եյին՝ յերեխան ու կատուն.
մեկտեղ խաղում եյին տախտակների վրա,
մինչև մութն իջներ, մինչև հայրը գար տուն.
ու հողագույն հացով կերակրեր նրանց:

Հայրը բանվոր եր: Միշտ առավոտ ծեղին
նա գործարան կերթար ու յետ կըգար մութին.
հաց կրերեր իրա յերեխային մի քիչ,
յերեխան եւ կտար՝ կեսը կատուն ուտի:

Եսպես ապրում եյին: Հայրը նրանց մեկ-մեկ
բան կպատմեր դրսի, հարուստների մասին,
վոր կուշտ են միշտ նրանք, բայց չեն հոգնում յերբեք՝
«Խնամերնացիոնալ» կերպեր՝ յերեխան լսի:

Ու կպատմեր, վոր միշտ ինքը հոգնի պիտի,
պիտի արյուն թքի, վոր չոր փշրանք գա տուն,
ու լուռթյուն դարձած՝ իրիկնային մութին
կլիսյին նրան յերեխան ու կատուն... »

Բայց մի որ, մի որ կարմիր
գործարան չըզնաց եւ հայրը.
աչքերւմ վճիռ կար մի,
ժպիտը հաստատ ու անծայր եր:

Փողոցում մարդի՛կ, մարդի՛կ.
գրոշները ալվան. կարծես տոն եր...
ու նման եր մայիսյան վարդի՛
թրերում այդ հոր խնդությունը:

Յեւ մի որ համբուրեց զավակին
բանվոր հայրը, ձեռքին հրացան.
համբուրեց աչքերը կառվի
ու գնաց անձայն...

Բայց դարձավ դռնից բանվոր հայրը,
համբուրեց նրան վերստին.
— «Հասկանո՞ւմ եք, — ժամանակն ե՛
ղարկելու յենք հարստին»:

Ու յերաւ: Փողոցում կրակոց եր:
Փողոցում չոքեց բանվոր հայրը:
Զորքերով լիքն եր փողոցը:
Փողոցում չոքեց բանվոր հայրը:

Զարկեցի՛ն... ձչաց բանվոր հայրը.
հարվածը կրծքին եր հատու:
Բայց հառաչը խոր ու անձայր այն
լսեցին յերեխան ու կատուն...

Վազեց, վազեց, փողոց փոքրիկ յերեխան,
կատուն վազեց հետքից իր ընկերով փոքրիկ:
Նրանց գլխին կարկուտ կարմիր գնդակ տեղաց,
ու յերկուսն ել ընկան հայր բանվորի կողքին:

Չխաղացին նրանք ել հատակի վրա.
չըսպասեցին ել զուր՝ հայրը դա տուն.
Նրանք փոքրիկ, փոքրիկ նահատակներ յեղան —
յերեխան ու կատուն:

Հ Ա Ր Յ Ե Ր.

1. Ի՞նչ կոխվ եր փողոցում. ո՞վքեր եյին կովում:
2. Ի՞նչ տրամադրություն ե առաջ բերում այդ գրվածքը:

3. Ո՞վքեր գնդակների կարկուտ ակղացին յերեխայի ու կատ-
վի դիմին:

4. Արձակի վերածի՛ր և չարադրություն դրի՛ր:

97. ԻՆՉՊԵՍ ԹՌԱ.

1.

Մենք ապրում եյինք մի մեծ քաղաքում:

Շատ անգամ մեր գլխին բարձր պտավում եյին ու
դանավերը:

— Յերանի՛ մի անգամ ել յես թռչեմ, — ասացի
յես:

— Չես վախենա՞ — հարցրեց հայրս:

— Վո՛չ,

— Լավ, կիրակի որը կթռչես, — ասաց նա:

— Չե՛, չե՛, չե՛, — բացականչեց մայրս, — մի փոր-
ձանք կպատահի:

— Վոչինչ չի պատահի, — ասաց հայրս ու դնաց
դործի:

— Դե՛ դնանք, — ասաց հայրս մի որ. սպասելուց
սիրտդ կալայթի:

Մայրս լաց յեղով, ինձ համբուրեց, ճանապարհ
դրեց:

Յես ուրախ եյի, թռչկոտում եյի, չեյի հավատում,
վոր թռչելու յեմ:

Ճանապարհին հայրս կատակներ եր անում:

— Գիտե՞ս, ենտեղից լավ գլըխկոնծի կտաս...

Հասանք անբողբոմ:

Ողանավերն արծաթե հսկա մորեխների նման կպաճ-
եյին դեռնին. արեւի տակ փայլում եյին նրանց մետա-
ղե բարակ թեւերը: Թվում եր, վոր վառքով խմես,
խսկույն կթռչեն:

1. Ինչո՞ւ ողանալ նստելիս կապում են:
2. Ինչո՞ւ տները փոքր են յերևում:
3. Ինչո՞ւ ողանալում բարձր ձայնով են խոսում:

Դիտեցե՛ք շեշտը ('), հարցականը (?), յերկարը (') և գիծը (—):

Յույց տվե՛ք, թե այս հոգվածում ի՞նչ բայեր կան և ի՞նչ ժամանակ են գրված:

Յեթե բայի ցույց տված գործողությունը խոսելու ընթացին և կատարվում, բայը գրված է ներկա ժամանակ. որինակ՝ գրում եմ, գրում ես, գրում ե, գրում ենք, գրում եք, գրում են (այժմ, ներկայումս):

Յեթե բայի ցույց տված գործողությունը խոսելու ընթացից առաջ եր կատարվում կամ առաջ է կատարվել, բայը գրված է անցյալ ժամանակ. որինակ՝ գրում էի, գրում էիր... գրել եմ, գրել եիր... գրած էի... գրեցի և այլն (առաջ):

Յեթե բայի ցույց տված գործողությունը խոսելու ընթացից հետո յե կատարվելու, բայը գրվում է ապառնի ժամանակով. որինակ՝ գրելու յեմ, գրելու յես... կգրեմ, կգրես... պիտի գրեմ, պիտի գրես... գրեմ, գրես... և այլն:

Պատմեցե՛ք վորեւ նյութ ներկայով:

Պատմեցե՛ք վորեւ նյութ անցյալով:

Պատմեցե՛ք վորեւ նյութ ապառնիով:

98. ԲԱՆՎՈՐՈՒՀՈՒ ՈՐՈՐԸ

Մի՛ լար, վորդի՛ս, վոր չես լսում
ել մայրական քաղցր որոր.
յես մեծ կովի յերգն եմ հյուսում
որոցքիդ մոտ ամեն որ:

Դու լսո՞ւմ ես—այնտեղ՝ դրսում
չաչ ու չառաչ, լաց ու կոծ.—

Յերբ մոտեցանք, տեսա՛. վոր այնքան ել փոքր բաներ չեյին: Ողաչուն ու իր ոգնականը նստեցին: Ողաչուն շատ լուրջ եր: Վոչվորի հետ չեր խոսում:

Մեզ ոգնեցին, նստեցինք. հայրս եր, յես և ուրիշ յերկու մարդ:

Ողանալի ներսը ավտոմոբիլի նման եր:

Յերկու անծանոթներն առաջ նստեցին, իսկ յես ու հայրս՝ յետեւի բազկաթոռներին:

Ամեն մի բազկաթոռի մեջքից կախված եր լայն կաշվե ամուր գոտի. դրանով մեզ կապեցին բազկաթոռին:

Մատորը դողաց, գոգուաց. ողանալը հողի վրա մի պտույտ արավ ու մեկ ել հողից պոկվեց ու բարձրացավ:

2.

Ինձ թվում եր, թե կամ յերազ ե, կամ հերիաթ:

Ողանալի պատուհանից նայեցի, առաջ տները կարծես ծովեցին, հետո, յերբ բարձրացանք, տափակացան: Տները գետնին կպած եյին յերեւում, փողոցները՝ նեղ, տրամվայները, ավտոմոբիլները՝ խաղալիքների նման, իսկ մարդիկ՝ ճանճերից ել փոքր:

Պրոպելլերի աղմուկից մեր ձայները չեյին լսվում: Հայրս ականջիս գոռում եր, բայց յես չեյի լսում:

Մի քանի անգամ քաղաքի գլխով պտտվեցինք, յես տեսա քաղաքը, գյուղերը, անտառներ, սարեր, դետեր...

Իջանք. շատ դժվար եր գետնի վրա քայլելը. կարծես վտռերս ծանրացել եյին:

— Դե՛հ, ուշքի՛ յեկ, — ասաց հայրս, — ողից իջանք, գնանք տուն, մորդ, ընկերներիդ պատմի՛ր, թե ինչպես թռար:

մեր արյունն է այնտեղ հոսում
ներկած եւ՝ տուն, եւ՝ փողոց:

Այնտեղ գնդեր խառն ու ցրել,
բանվոր գնդեր ահարկու
քաջ մղում են մի մեծ կռիւ—
աշխատանքի և վոսկու:

Այնտեղ հայեր, այնտեղ վորդիք
մի նոր կյանքի յեղերքում—
վորպես մի-մի հերոս մարտիկ—
մահն են գրկում ու յերգում...

Մի՛ լար, վորդի՛ս, վոր չես լսում
եւ մայրական քաղցր որոր.
յես մեծ կռվի յերգն եմ յերգում
որոցքիդ մոտ ամեն ուր:

Հ Ա Ր Յ Ե Ր.

1. Ի՞նչ կռվի մասին ե խոսում հեղինակը. ո՞վ ում դեմ ե կռվում:

2. Ինչո՞ւ մայրն եւ քաղցր որոր չի ասում որորոցի մոտ:
Երա փոխարեն ի՞նչ ե անում:

Դիտեցե՛ք չեղաված եւ՝ի ուղղադրությունը:

99. ԿԱՊԻՏԱԼԻ ՎՈՐԴԻՆ ՅԵՎ ՆՐԱ ԶՈՐԱ ԳԵՆԵՐԱԼՆԵՐԸ

Կապիտալի վորդին ուներ իր ձեռքի տակ չորս ծա-
ռա, չորս անվանի գեներալներ—Կոլչակ, Յուդենիչ,
Դենիկին, Վրանգել:

Մեկ որ նա կանչեց իր մոտ գեներալներին, բացեց
նրանց առաջ իր վոսկու պարկերը և խոսեց այսպես.

— Ի՛մ հավատարիմ ծառաներ, վերցրե՛ք այնքան
փող, վորքան պետք ե. հավաքեցեք քծնող և թեթեւա-
միտ մարդկանց, արշավեցեք Խորհրդային Ռուսաստա-
նի վրա, գյուղացիական և բանվորական Ռուսաստանի,
վրա:

— Դո՛ւ, Կոլչա՛կ, կհարձակվես արեւելքից: Սի-
բիրը հարուստ յերկիր ե. այնտեղ կան խիտ, անանցա-
նելի անտառներ. հաց, ինչքան կուզես: Գետերը ջրա-
ռատ են և ձկներով հարուստ: Գետնի տակ այնքան վոս-
կի, չուգուն և պղինձ կա թաղված, որ անգլիացին յե-
րազումն ել այդքան չի տեսնի: Աշխատեցեք խել Սիբի-
րը խորհուրդների ձեռքից: Դրամը կհոսի դեպի մեր
գրպանները և... կապրենք, Կոլչա՛կ ջան, քեզ հետ մեկ-
տեղ փառավոր կերպով...

— Դո՛ւ, Դենի՛կին, շարժվիր հարավի կողմից:
Քարածուխ, նավթ, հաց, շաքար և ուրիշ տեսակ բա-
րիքներ շատ կան այնտեղ: Լա՛վ ե հարավում: Ծովը
հուզվում ե. պարտեզները բուրմունք են արձակում,
խաղողը համուճ: Կհարստացնենք մեր գրպանները:
Դենի՛կին ջան, և ապա այնտեղ՝ Յալտայում կհանդըս-
տանանք, կըմպենք անուշահամ գինին, իսկ Սեփոկյան
ալիքները մեր առաջ պար կըսեն:

Դե, քեզ տեսնեմ, Դենի՛կին, իմ հերոս գինվոր:

— Դո՛ւ, Վրանգել՛ ջաջ, սկսիր Կուրանից. պակաս
հարուստ չե նա հացով: Կարծիքներն ուզում են տիրա-
նալ Կովկասի նավթին: Թույլ չտաս, վոր նրանք մի քայլ
անգամ առաջ դնան: Անջատիր Կովկասը խորհրդային
Ռուսաստանից:

— Իսկ դո՛ւ, Յուդենի՛չ, արշավիր դեպի հյուսիս:
Ճիշտ ե, հարուստ չի հյուսիսը վո՛չ հացով, վո՛չ վոսկով
և վո՛չ ել բնության ուրիշ պարզեցիկներով. բայց հենց
այդ մոռյլ և խոտաշունչ հյուսիսումն ե, վոր ամենից

առաջ յերեւակաց հեղափոխութիւնը: Հյուսիսում ծնունդ առավ խորհրդային իշխանութիւնը, վորն այնպես ամուր նստած ե աշխատավոր մարդկանց սրտերում... խեղդի՛ր հյուսիսը, Յուդէնիչ:

Կործանիր ոջախը մեծ հեղափոխութեան և անգնահատելի կլինի քո ծառայութիւնը: Դե՛, արչաւի՛ր...

Յեւ այսպես, կապիտալի վորդին արձակեց իր գեներալներին, նստեց վոսկով լի պարկերի վրա և սպասեց:

Յերկար չսպասեց կապիտալի վորդին:

Ձյունն իջնում եր վերեւից, իջնում: Ահա Կոլչակը կատաղած սուրում ե.

— Գրավեցի՞ր Սիբիրը, — անհամբեր հարցնում ե կապիտալի վորդին:

— Վո՛չ, չկարողացա գրավել: Այնտեղ կարմիր բանակն ե հսկում:

— Իսկ ո՞ւր ե քո՛ բանակը:

— Ձախջախված ե: Գնդի մի մասը գերի ընկավ, մնացածներն անցան կարմիրների կողմը: Մնացի յես մենակ:

— Մենա՞կ:

— Այո՛, մենակ... Ե յես փախչում եյի այնքա՛ն արագ: Թազցրո՛ւ ինձ, տե՛ր, փրկիր և քո՛ կյանքը...

Ձյունը թափվում եր, թափվում... Յուդէնիչը սուրում ե կատաղի:

— Կործանեցի՞ր հյուսիսը:

— Վո՛չ, չկարողացա... Այնտեղ կարմիր բանակն ե հսկում:

— Իսկ ո՞ւր ե քո՛ բանակը:

— Ձախջախված ե: Մենակ յես կարողացա ազատ վել՝ փախուստի դիմելով: Թազցրո՛ւ ինձ, տե՛ր փրկի՛ր և քո՛ կյանքը... մեր վերջը յեկել ե:

Ձյունը թափվում եր, թաղում իր ծածկի տակ գետինը... Սուրում ե Դենիկինը կատաղած:

Կապիտալի վորդին այլևս վոչինչ չի՛ հարցնում: Իսկ վրանդեկի յերեսին չի յել նայում. նա անհույս թափահարում ե իր ձեռքը, սկսում ե կանոնավորել ճամպըրովները, ճանապարհի պատրաստութիւն տեսնել:

Նրա վարձած չորս պանծալի գեներալները գլխիկոր հետեւում են իրեն:

... Խորհրդային Ռուսաստանում հզորանում և ծաւալվում եր Կարմիր բանակը:

Հ Ա Ր Ց Ե Ր.

1. Ինչո՞ւ սպիտակ գեներալների մասին ասում ե, վոր նրանք կապիտալի վորդու «ծառաներն են»:

2. Ինչո՞ւ սպիտակ բանակը ջախջախվում ե, և ո՞վ ե ջախջախում:

3. Կապիտալի վորդին ինչո՞ւ վրանդեկին և Դենիկինին ե՛լ վոչինչ չի հարցնում:

4. Համառոտի՛ր այս հոդվածը:

Կատաղած, ջախջախված, ստրկացած, մնացած, անցած:

Դիտեցե՛ք այս բառերի վերջափոխութիւնը և գրավոր աշխատանքի ժամանակ պահպանեցե՛ք այդ և նման այլ բառերի ուղղադրութիւնը:

100. ՉԱՊԱՅՅԵՎԸ

Ձապահեն աղքատ գյուղացու զավակ եր, շարքային զինվոր ցարական բանակում: Շա կարմիր բանակում դարձավ 25-րդ կարմրադրոշ դիվիզիայի հրամանատար:

Մինչեւ հեղափոխութիւնը նա անդրադետ եր: Բայց հենց վոր կարդալ-գրել սովորեց, ազահուլթյամբ հարձակվեց զրբերի վրա:

Կարմիր բանակում Չապաւեն աչքի ընկալ իբրեւ
տաղանդավոր հրամանատար: Ամենադժվարին ճակա-
տում՝ բավական եր, յեթե չղթայում յերևար Չապայե-
վը, կարմիր բանակայիններն անվախ առաջ եյին դնում:

Չապաւը կոչում եր միշտ հերոսաբար: Հերոսի
պես ել մեռաւ:

Մի մռայլ աշնանային որ եր՝ Ուրալի ափին, բարձր
սարի վրա: Սպիտակները չորս կողմից չըջապատել ե-
յին դիւլիզիայի շտաբը:

Չապաւը հավաքելով մի բուռ քաջեր, սկսեց պաշտ
պանւել:

Ահա ժամփուշտները վերջանում են: Այլևս կրա-
կելու բան չկա: Սպիտակները քանի գնում—մոտենում
են: Մի խումբ խիզախներ սեղմված են ափին: Ընկնում
են սպանվածներն ու վիրավորները: Բայց Չապաւը դեռ
կանգնած ե: Մի ձեռքին հրացանն ե, մյուսին՝ ատրճա-
նակը: Չորս կողմը դիակներ են, վիրավորների տնքոց-
ներ: Չապաւը կանգնած ափին՝ կրակում ե՝ չի թող-
նում՝ իրեն մոտենան: Մի ձեռքը վիրավորվում ե: Սըր-
բում ե արյունը և մի ձեռքով շարունակում ե կրակել:
Ահա և վերջին գնդակը...

— Հիմա մենք նրան կրոնենք, — ուրախանում են
թշնամիները:

Բայց վո՛չ: Չապաւը չի ուզում կենդանի ընկնել
սպիտակների ձեռքը: Նա բարձր ափից ցած ե թռչում
դետի մեջ, և պղտոր ալիքներն իսկուշն կուլ են տալիս
նրա մարմինը:

Հ Ա Ր Ց Ե Ր.

1. Ո՞վ եր Չապաւը:

2. Ինչո՞վ բացատրել նրա հմայքի մեծութունը:

3. Սպիտակներն ինչո՞ւ եյին ուզում Չապաւին կենդանի բռն-
նել:

101. ԻՆՏԵՐՆԱՑԻՈՆԱԼ

Յելի՛ր, ում կյանքը անիծել ե,
ով ճորտ ե, մերկ ե և ստրուկ:
արդեն վառվում են մեր սրտերը,
արդին կովի յենք մենք ձգտում:

Սա յե վերջին կռիվը
և պայքարը մեր մեծ,

Ինտերնացիոնալը

աշխարհը կփրկե:

Այս հին աշխարհը կքանդենք մենք

մինչեւ հիմքերը և հետո

մեր նոր աշխարհը կշինենք մենք:

ուր վոչ ստրուկ կա, վոչ դժգոհ:

Սա յե մեր վերջին կռիվը... (կրկնել):

Վոչ վոք չի տա մեզ ազատությունը

վոչ խեթ հերոսը, վոչ արքան.

մենք պետք ե մեր ազատությունը

խլենք մեր ձեռքով սեփական:

Սա յե մեր վերջին կռիվը... (կրկնել):

Հ Ա Ր Ց Ե Ր.

1. Ի՞նչպիսի յերդ ե «Ինտերնացիոնալը»:

2. Ի՞նչ ե այդ յերդի բովանդակությունը:

Ի՞նչ տարբերություն կա՝

1. Ճորտ և ստրուկ բառերի մեջ:

2. Կռիվ և պայքար բառերի մեջ:

Մտածեցե՛ք և դռնե՛ք մտքով իրար մոտիկ ուրիշ բառեր և
դորձադրեցե՛ք խոսքերի մեջ:

Յ Ա Ն Կ

ԴՊՐՈՅ, ԼԱԳԵՐ ՅԵՎ ԽԱՂ

1. Հարվածայիններ— Մ. Դարբինյան	3
2. Ֆիզկուլտուրա—	3
3. Մաքուր ոգում—	5
4. Ամբացրու մարմինդ—	6
5. Մեր զնացքը—փոխադրություն	7
6. Մանկապարտեզում—	9
7. Վարպետ Սաբոն—	11
8. Սառույցը ջարդեցին—Արոնիկ	12
9. Հրապարակում—դասագրքից	13
10. Դեպի աշխատանք—Ազատ Լրենց	15
11. «Հոկտեմբերիկ» կարի գործարան—Լ. Մեհրաբյան	16
12. Նունիկի յերազը—	20
13. Մեր սոցմրցումը—Ա. Հայկազ	22
14. Ծառատունկ—Հ. Հայրապետյան	24
15. Տոկար վոսկանը—	25
16. Գարուն—դասագրքից	27
17. Մանկական հրապարակը փրկեց յերեսներին—	28
18. Զարկ տանք ճազարարությունից—	31
19. Մանուկներին—Աղավնի	32

2. ՍՈՅԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԳՅՈՒՂՈՒՄ ՅԵՎ ՔԱՂԱՔՈՒՄ

20. Մեր կոլտոյի արտերը—Ս. Հակոբյան	32
21. Մայրիկներին ոգնենք—Սարգիս Դարբինի	33
22. Յերկու պատկեր—դասագրքից	34
23. Կաշե գործարանում—Մկ. Արմեն	35
24. Մեր բրեզադն աղոտ—	36
25. Մեր ոգնությունը բամբակի չանաքին—	37
26. Կոլեկտիվ աշխատանք—	38
27. Տրակտորի յերզը—	39
28. Բուքարային հոկտեմբերիկները—Հերմես	41

29. Հեծի յերզը—Արմ. Մուրվալյան	43
30. Ոգնություն—Սարգիս Մեհրաբյան	44
31. Մեքենայի բժիշկները	47
32. Զորագետ—Լեվոն	49
33. Բամբակի արտում—Վ. Պետրոսյան	51
34. Տիրապետել տեխնիկային—Գեվորգ Խալաթ	53
35. Մեր արածը—Սիմակ	54
36. Բանվորի յերզը—Խ. Թադևոսյան	57
37. Աշխարհում առաջինը—Դասագրքից	57
38. Կոմբայնը—«Դաշտերի նավը»	59
39. Հերոս պիոները	60
40. Յեմենա	62
41. «Թշնամու արած ա»—Արմ. Թամազյան	62
42. Ելեքտրականության յերկիր—Դասագրքից	65
43. Ելեքտրական յամպը—Դասագրքից	66
44. Ելեքտրական հավը—Դասագրքից	69
45. Արթիկի յերզը—Գ. Հակոբյան	72
46. Պղինձ Են ձուլում—Արմ Թամազյան	73
47. Շախմատի	74
48. Ինդուստրացում—Դասագրքից	75
49. Յերզ կոստյումն—Գ. Սարյան	77
50. Նավթ—Խաչիկ	78
51. Յերիտ. բանակ.—Խ. Հրաչյան	81
52. Փոքրիկ չոֆերի պատմությունը—Վախ. Վրացյե	82
53. Հինն ու նորը	83
54. Ռադիո	85
55. Լսեցեք, խոսում ե իմ ՀՄ—ը	86
56. Աշխարհով մեկ—Աղ. Վարդանյան	89
57. «Արարատ» գործարան	90
58. Արեվը—Արագի	92
59. Դիբորը (համարած)—Հովհ. Թումանյան	94

3. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ՇԱՐՃՈՒՄ

1) Նամակ գերմանական պիոներներին—Ս. Դարբինի	97
Մեր պատասխանը—Սարգիս	99
Նամակ Ամերիկայից բնիկ Ստոյինին	100

63.	Կոմունայի սլաոանի հերոսները	1
64.	Կարմիր բարեկալ.—Արագի	10
65.	Ուր խորհուրդներ են աճում.—Պոկրովսկի	1
66.	Ոգնում ենք մեր հեռավոր յեղբայրներին—ժողովուրդ— թյուն	10
67.	Էլ-չունեն.—ժողով. Հայրապետյան	109

4. ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ
ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

68.	Վ. Ի. Լենին	110
69.	Պապի հեղատակին «Կ. Ծիլեր»-ից	113
70.	Լենինը Հոգևատանում.—ժողով. ռուսերենից	111
71.	Լենինի մահը.—ժողովադուրյուն	116
72.	Ընկ. Ստոլին	118
73.	Հերոսների անկյուն.—Վագդեն Դարբևի	119
74.	Ինչո՞ւ չե խորհրդային Միությունը կարմիր	122
75.	Որացույցի կարմիր թերթը.—Մարտի	123
76.	ԽՍՀՄ-ը ազգութայինների յեղբայր. Միությունն է	125
77.	Անդրկովկասի Ֆեդերացիան.—Կ. Վարդանի	127
78.	Հայ և թուրք պիսներների կապը	128
79.	Ռադուրա	129
80.	Մեր Ֆեդերացիայի 10-ամյակին.—Հ. Հայրապետյան	13
81.	Ամբոցները խորհրդային Միությունը	13
82.	Առաջ և հետ.—դասագրքից	133
83.	Վերադարձ.—Էդրիկիպանիս	134
84.	Տասյերեք տարեկանը	139
85.	Հունվարի 9-ը	141
86.	Մարտի 8-ը.—Սեմալ	143
87.	Մայիսյան օրերին (հատված).—Ա. Չոլախյան	144
88.	Մայիս (բանաստեղծություն).—Արմ. Մուրվալյան	146
89.	Պատանի հերոսը.—«Պ. Կանչ»	147
90.	Կոլխոզիկներն աշրեյին տատվածներին.—դասագրքից	148
91.	«Սուրբ Սարգսի» գոհը.—դասագրքից	150
92.	Կուլակն ու մատաղը	1
93.	Կարմիր կնոնր	

5. ՊԱՏԵՐԱԶՄԻ ՎՏԱՆԳԸ ՅԵՎ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ
ՄԻՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒՄԸ

94.	Ռազմական անկյուն	154
95.	Յերգ ընտրական իրավունքի մասին—Ալագան	155
96.	Ընկերները—Յե. Չաբենց	157
97.	Ինչպես թոս	159
98.	Բանվորուհու օրըրը—Ալ. Ծառուքյան	161
99.	Կապիտալի վորդին և նրա չորս գեներալները—«Կարմիր Ծիլեր»-ից	162
100.	Չապալեվ.—Դասագրքից	165
101.	Ինտերնացիոնալ	167



9001

1981

9001 0



<< Ազգային գրադարան



NL0241533

8821